



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.99
B-12



19 NOV 2011

891.542-2
P-12

ԽՍՀԱ.ՏՈՒ.ԲՈՒ.ՅԵՐԱՆ.

ՎԱՂԱԺՄԱՆ ՄԱՀ

ԱԳՐԵՐԳՈՒԹԻՒՆ ՀԻՆԴ ԱՐԵՎԱՆԻՎ.

Թ. Ի Ց Լ Ի Ս
Տպարան „ՀԵՐՄԱՆ“ Միմայլեան փողոց, № 81.
1904

“Հայ պատմութեան շահագործութեան”
ԽԱԶԱՏՈՒՐ ԲԱԲԱՅԵԱՆ թ. 01 JAN 2009
891.99
F-12 այ

19 13 13թ.
Թթվական:

ՎԱՂԱՃԱՄ ՄԱՀ

ԱՂԻՔԻ ՊԻԹԻԻ ՀԻՆԴ ԸՐԱՎԱԾՈՎ.

100/
4761



Թ Ի Ֆ Լ Ի Ս
 Տպարան „ՀԵՐՄԻԿՈՒՄ“ Միբայելեան փողոց, № 81.
 1904

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԵՐ.

ՅՈՎՀԱՆՆԵՍ, պաշտօնաթող աստիճանաւոր, Տիգրանի հայրը.
ՄԱՐԻԱՄ, Յովհաննէսի կինը.

ՏԻԳՐԱՆ, նորաւարտ ուսուցիչ, Յովհաննէսի որդին.
ՄԱՐԳԻՍ, արհեստաւոր, Մաթենիկի հայրը.

ՀՈՒՓՍԻՄԵ, Մարգսի կինը.

ՄԱԹԵՆԻԿ, Մարգսի աղջիկը և Տիգրանի նշանածը.

ԼԵԽՈՆ, Տիգրանի դպրոցական ընկերը.

ՆԵՐՍԵՍ, Տիգրանենց ծառան.

ԱՐՃԱԻԻՐ, գիւղացի երիտասարդ, Տիգրանի մօտ ընկերը.
ՄԿՐՏԻՉ, Տիգրանի ծառան.

ՄԱՐԻԲԵԳ, { ՊԱՂԻՆԱԿ, } Գիւղացի երիտասարդներ.

ՊԵՏՐՈՍ, { ԳԵՂՈՐԳ, } Հոգաբարձուներ.

ՄԱՐԹԱ, Մարիբէգի կինը.

ՇՈՂԱԿԱԹ, Մարիբէգի քոյրը.

ՔԱՀԱՆԱՅ, Գիշերսպազներ և Գիհղաթիներ.

Дозволено Цензурою. Тифлисъ, 1-го Июля, 1904 года.

Գործողութիւնն առաջ կատարվում է բաղադրում եւ ապա՝ գիւղում:

ՎԱՂԱԺԱՄ ՄԱՀ.

ԱՌԱՋԻՆ ԱՐԱՐՎԱԾ.

Ա.Ռ.Ա.ՋԻՆ ՏԵՍԱՐԱՆ.

Քաղաք. առանձնասենեակ:

Ներս են մտնում ՏԻԳՐԱՆԸ և ԼԵՒՈՆԸ:

Տիգրան. Լեռն, այսօր մեծ տօն է մեզ համար. ուրովհետեւ մենք արդէն ստացանք մեր ուսման աւարտաման վկայագրերը, որոնք առաջադիմութեան կողմից չ'ունեն իրանց հաւասարը մեր տասներկու լնկերների վկայագրերի մէջ:

Լեւոն. Այն, ես ևս ուրախ տրամադրութեան մէջ եմ:

Տիգրան. Բայց այս էլ պէտք է իմանալ, որ վկայագրերի լաւութիւնը երաշխաւոր չէ մեզ կեանքի մէջ ևս լաւ լինելու:

Լեւոն. Իհարկէ այդպէս է. քիչ է պատահում, որ ամենալաւ աշակերտն ամենավատ մարդն է գառնում կեանքի մէջ:

Տիգրան. Բայց և այնպէս այդ ընդհանուր օրէնք չէ:
Լեւոն. Իհարկէ. սակայն կեանքի մէջ լաւ մարդ դուրս
դալը մեր ձեռքին է:

Տիգրան. Դրա մասին խօսք անդամ չի կարող լինել,
որովհետև մեր ծնողները մեզ ուսման տալով նպատակ
ունեն մեղանից ապագայում լաւ մարդիկ ստանալու։ Եւ
մենք, ձեռք բերելով ուսումը՝ կարող ենք դործ դնել նրան
կեանքի մէջ կամ իբրև լաւ, և կամ իբրև վաս մարդիկ։

Լեւոն. Բայց այդ երկուսից ո՞րն է խսկապէս մեր
կեանքի նպատակը դառնալու։

Տիգրան. Իհարկէ առաջինը. որովհետև ամեն բան
աշխարհիս երեսին դէպի լաւն է ձգտում։

Լեւոն. Եթէ այդպէս է, հապա էլ ինչու աշխարհումս
գոյութիւն ունեն չարն ու վատը։

Տիգրան. Այդ պէտք է վերագրել հասկացողութիւն-
ների և դործ դրած միջոցների տարրերութեանը։ Ապա-
ցոյց. երբէք վատը չի ասի, թէ ես վատ եմ։

Լեւոն. Շատ լաւ, էլ ինչու ենք երկարացնում, եթէ
մեր նպատակն է կեանքի մէջ էլ այնպէս լինելու, ինչպէս
որ եղել ենք մեր ուսանողական շրջանում...

Տիգրան. Այսինքն ամեն կողմից օրինակելի անձնաւո-
րութիւններ։

Լեւոն. Այն. Ուրեմն սրբագործենք այդ նպատակը
երդումով և սուրբ ուխտով։

Տիգրան. Ես բոլոր հոգով համաձայն եմ. բայց միայն
լաւ իմացիր, որ ինչպէս մեր նպատակն է սուրբ, այնպէս
էլ մեր ուխտը պէտք է սուրբ լինի։

Լեւոն. Անկասկած։

Տիգրան. Եւ այդ ուխտը պէտք է խթան լինի մեզ՝
դիմելու դէպի մեր սրբազն որոշումը։

Լեւոն. Բայց ինչի վրայ ուխտենք և երդվենք։
Տիգրան. Գրչի, որպէս մի ազնիւ զէնքի, վրայ՝ ազնը-
ութեան անունով։

Լեւոն. Պատրաստ եմ։ (Երդվում են գըշի վրայ)։

Տիգրան. Նզովկած է նա, ով չի կատարի այս ուխտն
ու երդումը։

Լեւոն. Ամէն. (Ժիգրանը հանելով իր ժամացոյցը՝ տա-
լիս է Լեւոնին, իբրեւ յիշատակ անմոռացութեան, որի փո-
խարէն ստանում է նրանից մի մատանի)։ Յտեսութիւն.
Ես գնում եմ։

Տիգրան. Յտեսութիւն, սակայն ես էլ եմ գալիս. մի
քիչ տեղ քեզ կ'ուղեկցեմ և ապա կը վերագառնամ։

Լեւոն. Համեցէք։ (Դուրս են գնում)։

ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ.

Տան մի սենեակում։

Ներս են մտնում ՅՈՎՀԱՆՆԵՍԸ և ՄԱՐԻԱՄԸ։

Յովիաննէս. Մենք այսօր պէտք է անչափ ուրախա-
նանք. որովհետև մի այնպիսի զաւակ ունենք ծնած, որը
շատ մայրերի աչքերն իր յետեն է թողնում։

Մարիամ. Իհարկէ այնքան, որքան հարկաւոր է. հէնց
այսքանը մտածիր, որ մեր հայրերը չեն ունեցել այնպիսի
զաւակ, որպիսին մենք ունենք։

Յովիաննէս. Ծնողների պարտաւորութիւնն է իրանց
որդիներին իրանցից աւելի լաւ մարդիկ դարձնել։

Մարիամ. Այն, որդիներն ամեն կողմից կազմում են
իրանց ծնողների ընդօրինակութիւնը։ Եւ եթէ հայրերն
ու մայրերն աշխատեն աւելի լաւ դաստիարակե

տիարակել տալ իրանց որդիներին, վերջիններս անկասկած հազար անգամ լաւ կը լինեն եղածներից:

Յովիաննէս. Սակայն իհարկէ մեր խօսքը բացառութիւնների մասին չէ, որ ամեն բանի մէջ կարող են լինել:

Մարիամ. Թա՞ղ նուիրական լինեն այն օրն ու ժամը, երբ մայրական երկունքով ծնեցի նրան:

Յովիաննէս. Ինչու դուք, մայրերդ, այդպէս չէք ասում երեխայի ծննդի ժամանակ:

Մարիամ. Զենք ասում, որովհետեւ սկզբից չենք կարող երաշխաւորել նրա լաւութեան համար, թէև այդ մեր ցանկութիւնն է:

Յովիաննէս. Եւ միայն յետոյ, երբ չենքը բոլորովին դրուխ են բերում, նոր այն ժամանակ են դովում, կամ վատարանում նրան:

Մարիամ. Դրա համար է ասված. «Ամեն բանի վերջն է գովելի»:

Յովիաննէս. Զեր ասածը մեծ մասով այսուհետեւ էլ է վերաբերում մեր որդի Տիգրանին:

Մարիամ. Գնանք նրա մօտ, նա հիմա մենակ կը լինի. նրա յոդնատանջ ուղեղին հարկաւոր է զուարձութիւն:

Յովիաննէս. Գնանք: (Դուրս են գնում):

ԵՐՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ.

Առանձնասենեակ.

Ներս է մտնում Տիգրանը:

Տիգրան. Ազնիւ հոգիներ, տեսնենք, որչափ տէր կը լինէք ձեր խօսքին և հանգամանքները որքան կը նպաս-

տեն ձեր գործին: (Նստում է լուսամուտի մօտ եւ խորասուզիում մտածմունքների մէջ): Ո՞հ, աշխարհ, անհասկանալի՛ աշխարհ. այսքան ապրեցի և ուսում ստացայ, — տարիներ անցրի, բայց գարձեալ քեզնից մի գլուխ չը հանեցի: Գուցէ այս բանն իմ կեանքի հանգամանքներից առաջացաւ, այն հանգամանքներից, որոնց մարդիկ բախտի պատահականութեանն են վերագրում: Եւ իհարկէ մարդիկ այնպէս են հասկանում աշխարհը, ինչպէս որ իրանց կեանքի հանգամանքներն են դասաւորվում: (Վեր է կենում տեղից եւ անցուղարձ անում): Ո՞հ, սիրոս ճնշվում է տխուր մտածմունքներից... սիրոը խիստ կապ ունի երեակայութեան հետ. մեր ուղեղի այսպէս կամ այնպէս մտածելուց մեր սրտի տրամադրութիւնն էլ փոխվում է: (Նորից նըստում է): Ինչու այսպէս փոխվեցի... կարծես թէ այն չեմ, ինչ որ էի աշակերտական նստարանի այն իդէալիստ երիտասարդը: Գուցէ կեանքի հանգամանքներն ինձ այսպէս սառեցրին... Գիտնական էլ չեմ, որ այդ հանգամանքը դրան վերագրեմ. որովհետեւ գիտնականներն առհասարակ սառն են դէպի առօրեայ կեանքի երևոյթները, քան թէ տաք երեակայութեան տէր բանաստեղծները, որոնց վրայ կեանքի ամենանշյն դէպքն էլ աղդում է: Սակայն կայժամանակ, երբ պէտք է ունենալ գիտնականի սառնութիւն, և կայ ժամանակ, երբ պէտք է ունենալ և բանաստեղծի տաքութիւն: Աշակերտական վերջին տարիներում ես կատարեալ բանաստեղծ էի. ապրում և մնվում էի մեծ բանաստեղծների մտքերով ու ինձ նրանցից մինն էի երեակայում: Նրանց պէս էի մտածում և կեանքի վրայ նրանց պէս նայում: Իմ փառասիրութիւնն այն աստիճանի էր հասնում, որ մտածում էի, թէ մի ժամանակ իմ փառքի գրօշակը նրանց դրօշակներից պէտք է բարձր ծածանվի:

Ինձ համար այդ ժամանակ չորս հանճար կար աշխարհում, —բանաստեղծական, գերասանական, պատերազմական և քաղաքական, բայց այդ բոլորի մէջ առաջնակարգ տեղը բանաստեղծականին էի վերագրում, որովհետև միւսների ուժեղ ներգործութիւնը միայն ժամանակակիցների վրայ է երևում, իսկ այն ինչ առաջնինը՝ հաւասարապէս թէ ժամանակակիցների և թէ յետնորդների, մի խօսքով՝ դարերի վրայ: Ոգեգորութեան արդիւնքն իր ոյժն անփոփոխ է պահում: Հանճարեղ բանաստեղծը կեանք է տալիս և ապրեցնում շատ ու շատ սերունդներ: Նա զօրեղ կերպով ազդում է նրանց մտքի, սրտի և գործունէութեան վրայ: Ահա այսքան մեծ է բանաստեղծական հանճարի գերը, որի համար էլ նրան էի ձգտում և ձգտում եմ այժմ ողջ էութիւնովս. իսկ իմ այս մասնաւոր փոփոխութիւնը վերագրում եմ այն բանին, որ այն աշխարհը, որի մէջ ապրում էի ես մի ժամանակ, այժմ բազդատում եմ իրական աշխարհի հետ, որի համար էլ հարկաւոր է գիտնականի սառնութիւն: Թէև այժմ ես այլ ես այն ժամանակի գրքերը չեմ կարդում, բայց կարդում եմ կեանքի գիրքը, որ շատ մեծ է և անհուն: Ես այժմ այդ երկու տեսակ գրքերն իրար հետ բազդատելով եմ պարապում և յաճախ կեանքի գրքից նոր բաներ եմ սովորում, որի համաձայն եմ հայեացքներն եմ կազմակերպում... (Ներս են մտնում Յովհաննէսը և Մարիամը):

Յովհաննէս. Բարե՛քեզ, սիրելի զաւակս: Ի՞նչպէս է առողջութիւնդ:

Տիգրան. Լաւ է, սիրելի հայրիկ:

Մարիամ. Աստուած տայ, որ միշտ այդպէս լաւ լինի, որդիս:

Տիգրան. Անչափ շնորհակալ եմ, սիրելի մայրիկ:

Յովհաննէս. Սիրելի Տիգրան, ուսումդ վերջացնելուց յետոյ՝ այժմ մնում է քեզ ամուսնանալ:

Տիգրան. Նատ լաւ ես ասում, հայրիկ. բայց ես դեռ անյարմար եմ դատում, որովհետև կեանքի փորձառութիւն չունեմ:

Յովհաննէս. Այդ ոչինչ:

Տիգրան. Ի՞նչպէս թէ ոչինչ, բանի որ այդ ապագայ երջանկութեան աղբիւրն է:

Յովհաննէս. Ի՞նչպէս:

Տիգրան. Այ, թէ ինչպէս. երբ մենք, կեանքի փորձառութիւն չ'ունենալով ամուսնում ենք առաջին հանդիպածի հետ, հենց այդ է, որ հիմք է դնում մեր ապագայ գմբախտութեան...

Յովհաննէս. Միթէ առաջին հանդիպածը լաւ չի կարող լինել:

Տիգրան. Իմ խօսքը դրա մասին չէ. ես չեմ ասում, որ բացառութիւն չի կարող լինել: Ո՛չ, այլ ասում եմ, որ յաճախ, երբ մենք ամուսնում ենք առանց երկար ու բարակ մտածելու, դրանով արդէն գմբախտանում ենք:

Յովհաննէս ենք գմբախտանում:

Տիգրան. Մենք գիտենք, որ սէրն անցողական է. երբ նա կապվում է մէկի հետ առանց երկար ու բարակ ուսումնականութեան, նրա լաւ և վատ կողմերը մեզ միշտ լաւ է ցոյց տալիս: Սակայն սէրն անցնելուց յետոյ՝ մարդը երևում է իր իսկական պատկերով և այն ժամանակ միայն վատն է սկսում միշտ աշքի զարնվել: Դրանից անսպասելի կերպով սկսում են առաջ գալ զանազան անհամաձայնութիւններ, գմբախտանութիւններ, մի խօսքով՝ ընտանեկան փոթորիկ..., որով և թունաւորվում է ընտանեկան երջանկութեան բաժակը:

Մարիամ. Այդ հաշուով ուրեմն գու բոլորովին չը պէտք
է ամուսնանաս:

Տիգրան. Ո՞վ ասեց այդ:

Մարիամ. Որովհետև ընտրութիւն անելիս՝ կարող է պատահել, որ գու ցանկալի հետևանքի չը հասնես: Այս էլ իմացիր, որ երբեմն շատ լաւերին վնարելիս՝ շատ վատերին ենք հանդիպում:

Տիգրան. Առաջինը չի կարող պատահել, քանի որ ես հակառակ եմ անամուսնութեան: Իսկ երկրորդը, ես հակառակ չեմ, կարող է պատահել: Բայց և այնպէս այդ չի արգելում մեզ ընտրութիւն անել:

Մարիամ. Իսկ դու, ընտրութիւն ասելով՝ ինչ ես հասկանում:

Տիգրան. Ուշադրութիւն դարձնել կնոջ մտաւոր, բարոյական և ֆիզիքական արժանաւորութիւնների վրայ:

Մարիամ. Բայց գիտես, որ ամեն լաւ բան մէկին չեն տայ, այնպէս որ մարդն ամեն կողմօվ լաւ լինել չի կարող:

Տիգրան. Մարդկային կատարելագործութեան ձգտելը հենց դրա մէջ է կայանում: Եւ վերջապէս ընտրութիւն անելը մեզ չի կարող վնաս հասցնել:

Յովիաննիւս. Կեանքի փորձը դրդում է ինձ ասել, որ ամուսնութիւնը բախտի բան է: Լաւ կարծվածները վատանում են, իսկ վատերը՝ լաւանում: Գեղեցիկները տգեղանում են, իսկ տգեղները՝ գեղեցկանում: Երբեմն այրի և ոչ այրի կանանց մէջ աւելի գեղեցիկներն են պատահում, քան թէ օրիորդների մէջ: Այդ է պատճառը, որ երբեմն այրիները թակարդում են ամուրի երիտասարդներին և ամուսնանում նրանց վրայ:

Տիգրան. Այդ գէպում երբեմն մեծ գեր է խաղում ոչ այնքան գեղեցկութիւնը, որքան նիւթապաշտութիւնը,

ինչպէս նաև այն դէպքում, երբ այրի տղամարդիկ ամուսնանում են օրիորդների վրայ:

Մարիամ. Լաւ, թողնենք այդ: Պէտք է շտապել, քանի որ մեր կեանքի վերջալոյն արդէն մօտ է: Մենք չը դիտենք, թէ յաւիտենական քնի հրեշտակը երբ կը մօտենայ մեր գուանը, և սարսափելի է միակ որդու հարսանիքը չը տեսած իջնել գերեզման:

Յովիաննիւս. Այն, պէտք է շտապել, քանի որ հարսնացուն էլ պատրաստ է:

Տիգրան. Ո՞վ է նա:

Յովիաննիւս. Աղնիւ ծնողների աղնիւ ծնունդ, որին մայրդ էլ է ճանաչում: Ես արդէն յայտնել եմ նրա հօրը, որ շուտով գալու ենք տեսութեան:

Տիգրան. Ի՞նչ է նրա անունը:

Յովիաննիւս. Սաթենիկ:

Տիգրան. Ես պատրաստ եմ կատարել ձեր կամքը, եթէ միայն փոքրիշտէ բաւարարութիւն կը տայ իմ պահանջներին:

Յովիաննիւս. Ես հաւատացած եմ, որ լիովին կ'արդարացնի քո յօյուը: Մայրդինձ հեռուից ցոյց է տուել նրան: շատ լաւ աղջիկ է:

Մարիամ. Վստահ եմ, որ բոլորովին յուսախար չենք լինի:

Տիգրան. Ծանօթանալուց յետոյ ես մի առժամանակ կ'ուսումնասիրեմ նրան և ապա միայն պատրաստականութիւն կը յայտնեմ ամուսնանալ նրա հետ:

Յովիաննիւս. Շատ բարի: Գնանեք ուրեմն տեսութեան:

Տիգրան. Լաւ, գնանք: (Դուրս են գնում):

ՉՈՐՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ.

Տան դահլիճում.

Ներս են մտնում ՍԱՐԳԻՍԸ, ՀՐԻՓՄԻՄՔՆ և ՍԱԹԵՆԻԿԸ:

Սարգիս. Միրելի ամուսինս, գիտես ինչ կայ:

Հռիփսիմէ. Ի՞նչ կայ:

Սարգիս. Մաթենիկին ուզող կայ:

Հռիփսիմէ. Ո՞վ է:

Սարգիս. Միուսումնաւարտ երիտասարդ, աղնիւ ծնողների զաւակ:

Հռիփսիմէ. Դու անձամբ տեսել ես նրան:

Սարգիս. Ո՛չ, միայն նրա հայրը յայտնեց ինձ այդ մասին և ասեց, որ շուտով կը գանք տեսնելու: Կարծեմ, հէնց այսօրվայ համար ասեց:

Հռիփսիմէ. Շատ բարի. միայն թէ պէտք է նկատի ունենալ, որ ինչպէս տղայի տէրն իրան իրաւունք է համարում ոտից գլուխ լաւ դիտել աղջկան, այնպէս էլ աղջկայ տէրն իրան իրաւունք պէտք է համարի լաւ դիտել տղային. որովհետև երկուսն էլ հաւասարապէս հասարակութեան անդամներ են և ընտանեկան կեանքի հաւասար լծակից ընկերներ պէտք է դառնան:

Սարգիս. Նորագոյն ժամանակի մտքեր ես յայտնում, որոնք հիմնված են արդարութեան և հաւասարութեան սկզբունքների վրայ:

Հռիփսիմէ. Այո, այդպէս պէտք է լինի. որովհետև ընտանեկան փոթորիկների մեծ մասը առաջանում է գրեթէ մարդու և կնոջ անհաւասարութիւնից:

Սարգիս. Ոտերի ձայն է գալիս, կարծես, թէ նրանք դալիս են:

(Ներս են մտնում Յովհաննէսը, Մարիամը եւ Ցիգրանը):

Բարով եկաք, պ. Յովհաննէս, մենք հէնց նոր ձեր մասին էինք խօսում և ձեզ սպասում:

Յովհաննէս. Ճատ շնորհակալ եմ: Բարե՛ ձեզ, պ. Մարգիս. ինչ լաւ եղաւ, որ ձեզ տանը գտանք: Բարե՛ ձեզ, տիկին, և ձեզ, օրինրդ: (Կնոջը եւ որդուն): Մանօթացէք: (Ժանօթանում են):

Սարգիս. Բարով էք եկել, հաղար բարով. շնորհակալ եմ, որ այդպէս շատապեցիք կատարել ձեր խոստումը:

Յովհաննէս. Շտապեցինք, որովհետև երբեմն երկար սպասելը լաւ հետևանքի չի հասցնում: (Կնոջը եւ որդուն): Լաւ դիտէք: (Սարգսին): Պ. Մարգիս, ձեզ արդէն պարզ յայտնի է, թէ ինչի համար ենք եկել: Իմ և քո որդիները թնդ միմեանց լաւ դիտեն: Եթէ կը հաւանեն միմեանց, այն ժամանակ թնդ տան իրանց համաձայնութիւնը:

Սարգիս. Ես հակառակ չեմ. թնդ այդպէս լինի: (Կնոջը): Ազնիւ և գուրեկան տղայ է երեսում:

Յովհաննէս. Միրելիդ իմ Տիգրան, յայտնիր կարծիքը, թէ ինչ կայ սրտումդ:

Տիգրան. Միրելի հայրիկ, չը նայելով որ ճիշտ է, թէ մարդ ճանաչելու համար գեռ պէտք է սպասել, սակայն այդ ասված է այնպիսիների համար, որոնք հոգեկան նուրբ հոտառութիւն չ'ունեն: Այն ինչ իմ ծանօթութիւնը հոգեբանական գիտութեան հետ և գրանից ու կեանքի մինչև այժմ ունեցած շատ ու քիչ փորձառութիւնից ստացած հոգեգիտութիւնս շտապեցնում են ինձ իմ ձեռնարկութեան մէջ:

Մարիամ. Առաջ էլ եմ ասել և հիմա էլ ասում, որ աղջիկն ինձ վրայ շատ լաւ տպաւորութիւն է թողնում:

Տիգրան. Դուք չը կարծէք, որ այդ ասում եմ միայն արտաքին գեղեցկութիւնից յափշտակված:

Յովիաննէս. Ես էլ իմ կողմից շատ յարմար եմ դատում, մանաւանդ որ ինքն էլ ազնիւ ծնողների զաւակ է և ներքին ու արտաքին արժանաւորութիւնների տէր։ Տեսնենք, օրիորդն էլ համաձայն է։

Սարգիս. (Սաթենիկին)։ Ի՞նչ կ'ասես, որդիս։
Սարենիկ. Համաձայն եմ։

Յովիաննէս. Ուրեմն շտապենք պատրաստութիւն տեսնելու նշանադրութեան համար։

Տիգրան. Ոչ մի պատրաստութիւն հարկաւոր չէ. բաւական է այս մատանին։ (Հանում է մատից եւ տալիս օրիորդին)։

Մարիամ. Այդքան շտապել...

Տիգրան. Մէրը սահման չի ճանաչում։

Սարգիս. Շատ ուղիղ է նկատում. թող այդպէս լինի։ Աղջկաս քմծիծաղ դէմքն էլ համաձայնութեան նշան էր՝ մատանին ընդունելիս։ Ուրեմն օրհնենք նրանց նշանադրութիւնը, որ նրանք հասնեն իրանց մուրազին։

Յովիաննէս. Թող օրհնված լինի այդ նշանադրութիւնը և թող դա հիմք լինի երջանիկ կեանքի։ Ուրեմն ամեն ինչ վերջացած է նշանադրութեան կողմից, այժմ գնանք և պատրաստվենք հարսանիքի համար։ Մնաք բարով, աղնիւ խնամիներս։

Սարգիս. Գնաք բարով, թանկագին բարեկամներս։ Շտապելու ոչինչ չը կայ, երբ ուղում էք, այն ժամանակ անենք հարսանիքը։

Յովիաննէս. Շատ լաւ։ (Յովիաննէսը, Մարիամը եւ Տիգրանը դուրս են գնում)։

Սարգիս. Այժմ մնում է մեզ խոհարհվել նախախնամութեան վճռի առաջ և տեսնել մեր շուտափոյթ ձեռնարկութեան արդիւնքը։



ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐՎԱԾ.

ԱՌԱՋԻՆ ՏԵՍԱՐԱՐԱՆ

Դա հլի ճում։

Ներս են մտնում ՀՌԻՓՍԻՄԵՆ, ՏԻԳՐԱՆԸ և ՍԱԹԵՆԻԿԻ։

Հոկիսիմէ. Ինչով պէտք է պարապէք, միրելի փեսա։
Տիգրան. Ուսուցչութեամբ։

Հոկիսիմէ. Չէ որ դա մի այնպիսի պաշտօն է, որ ապագայ չ'ունի. այնպէս որ ես քեզ խորհուրդ չեմ տայ պարապել դրանով։ Ի՞նչ էլ դառնաս՝ ուսուցչից լաւ է։ Ի՞նչ բան է ուսուցչութիւնը, եթէ ոչ՝ թոքերի մաշում, շատա-խօսութիւն, գլխացաւանք, բամբասանքների առարկայ և ամենի գլուխ գրապանի դատարկութիւն։

Սարենիկ. Ճիշտ է. ցանկալի է, որ ուրիշ գործով պարապէք, մանաւանդ որ հիմա ուսուցիչների վարկը շատ ըն-կած է։

Տիգրան. Շատ լաւ էք ասում. բայց խմացէք, որ ամեն մի արհեստ ամենից աւելի իր վարպետին է դուր դա-լիս։ Ճիշտ է, մի քանի հանդամանքների և անշնորհների պատճառով ուսուցչութեան վարկն այժմ ընկել է, սա-

կայն, եթէ լուրջ դատելու լինենք, դրանից ազնիւ արհեստ չը կայ:

Հովհանիմէ. Կարծեմ մի երկու ազնւի պատահել ենք...

Տիգրան. Ես հասկանում եմ ձեր միտքը. այդ ես չեմ հերքում: Հենց մի քիչ առաջ դրա մասին ակնարկեցի: Զը դիտէք միթէ, որ մի անշորհք կով ամբողջ նախրի անունը կը խայտառակի: Ի՞նչպէս կարող է ազնիւ չը լինել այն արհեստը, որը գործ ունի անմեղ մանուկների հոգու՝ սըրտի և մտքի հետ, և որն ազնուութեան, ճշմարտութեան և գեղեցկութեան սերմեր է ցանում մատաղ սերնդի մտաւոր անդաստանում: Պաշտօնը կարող է ազնիւ և վեհ լինել, իսկ պաշտօնակատարները կարող են լինել անազնիւ, ստոր, անպիտան, անշորհք և անընդունակ. Ես դրան հակառակ չեմ: Բայց և այնպէս դրանցով չը պէտք է չափել արհեստի վեհութիւնն ու ազնուութիւնը:

Հովհանիմէ. Շարունակեցէք, շարունակեցէք. Հրաշալի մտքեր էք արտայայտում:

Տիգրան. Այն, ուսուցչութիւնը վեհ արհեստ է, քանի որ դրա կարապետներն են, որոնք առաջնորդում են ողջ մարդկութեանը դէպի լուսաւորութիւն, քաղաքակրթութիւն: Աշխարհիս մէջ ոչ մի երեելի մարդ չի եղել, որ ունեցած չը լինի իր ուսուցիչը. կայսրներ, բարձրաստիճան հոգեսորականներ, հանճարեղ բանաստեղծներ, փիլիսոփաներ, դերասանական և պատերազմական հանճարներ, նշանաւոր քաղաքագէտներ և այլն, բոլորն էլ ունեցել են իրանց ուսուցիչները: Ուսուցչութիւնն առհասարակ շատ նուրբ գործ է. լաւ կամ վատ ուսուցչի ձեռքի տակից կարող է դուրս դալ և լաւ կամ վատ մարդ, որովհետև ուսուցիչն է իսկապէս աշակերտի ապագան տնօրինողը, իսկ աշակերտն, այսպէս ասած, իր ուսուցչի հայելին է: Ապացոյց դրան.

Երեելի մարդիկ ունեցել են և երեելի ուսուցիչներ:

Սաքենիկ. Այդ այդպէս է. բայց որ ուսուցիչները սովոր չեն...

Տիգրան. Այն, մարդիկ դեռ չեն կրթվել այն աստիճան, չեն հասել այն կատարելութեանը, որ կարողանան արժանապէս գնահատել այն, ինչ որ հարկաւորն է: Ոչ մի արհեստ, ըստ երևոյթին, այնպէս ստոր չի գնահատվում, որպէս ուսուցչութիւնը, արհեստներից ազնւագոյնը: Սակայն կ'անցնեն գարեր, կը փոփոխվեն շատ սերունդներ, տգէտներին տեղի կը տան ուսեալներ, այն ժամանակ միայն կը բարձրանայ ուսուցչութեան յարգն ու պատիւր: Եւ եթէ ներկայ պայմաններում ուսումի կարապետներն աղքատ են նիւթապէս, բայց նրանք հարուստ են մտաւորապէս: Ինչի՞ է պէտք նիւթականը, ուր չը կայ մտաւորը: Դեռ մտաւորն առանց նիւթականի իր մէջ ամփոփում է քաղցրութիւն, իսկ այն ինչ նիւթականն առանց մտաւորի ոչ մի քաղցրութիւն չի ներկայացնում, բացի անասնական ստոր կեանքից, եթէ ձգենք առողջ դատողութեան: Լաւ է հասկացող մեռնել, քան թէ անհասկացող ապրել:

Սաքենիկ. Ինչի՞ս է պէտք ուսումը, երբ նա ինձ նիւթական օգուտ չի տալիս և նրանով ես ոչինչ չեմ կարող անել. բայց եթէ ունենամ շատ փող, այն ժամանակ ես կ'անեմ այն, ինչ որ կամենամ:

Տիգրան. Այդ այժմեան նիւթապաշտութեան փիլիսոփայութիւնն է. հիմիկվայ մարդիկ փողի տարված մարդիկ են, Փողն արդէն իշխում է ամեն տեղ: Բայց կը դայ ժամանակ, երբ գերերը կը փոխվեն: Եթէ մի փոքր խորը քննենք, կը տեսնենք, որ փողի իշխանութիւնը ժամանակի վերաբերմաբ այնքան էլ տեղական, յարատե չէ:

Քանի՞ —քանի՞ միլիոնատէրեր են եղել, որոնց գոյութեան մասին այսօր մենք, յետագայ սերունդներս, ոչ մի տեղեկութիւն չ'ունենք և որոնց հրճվանքով չենք մտարերում. այն ինչ գիտութեան մշակներն ապրում են դարձդար: Նրանք անմահ են և յետնորդներն աստիճանաբար աւելի ու աւելի են պաշտում, անմահացնում նրանց: Նրանց վաստակներն այնպիսի քաղցրութիւն են պատճառում ընթերցողին, որպիսին նա չի զգում ամենաքաղցրահամ կերակուրներ ուտելիս:

Սարենիկ. Դուք արդէն անցաք ընդհանրապէս գիտութեան մշակներին, այն ինչ մեր խօսակցութիւնը մասնաւորապէս ուսուցիչների մասին է. ձեր ասածով՝ առհասարակ հօ բոլոր ուսուցիչները չեն անմահանում, որ դուք պնդում էք:

Տիգրան. Ճիշտ է, որ ես մասնաւորից անցայ ընդհանուրին, և այդ այն պատճառով, որ ուսուցիչներն էլ նոյնպէս մտքի, գիտութեան մշակներ են կոչվում: Ճիշտ է և այն, որ ոչ բոլոր ուսուցիչներն են անմահանում, որպէս նաև առհասարակ գիտութեան մշակները: Անմահութեան բարձր ու ցածր աստիճաններ կան, այնպէս, ինչպէս հարըստութեան աստիճանները: Առհասարակ գիտութեան մշակներից կան այնպիսիները, որոնք իրանց ոգին աւանդում են ժամանակակիցներին, այսպէս և փոխանցաբար յետնորդներին, միայն իրանց կեանքի ընթացքում, առանց դրաւոր յիշատակների: Այդպիսիների մտքերը, ոգին շարունակում են ապրել յաճախ առանց յիշատակելու իրանց հեղինակին: Բայց կան և այնպիսիները, որոնք իրանց մտքերը, ոգին աւանդում են յետնորդներին գրաւոր վաստակներով, որոնք միշտ յայտնի են դարձնում հեղինակին: Ուսուցիչների մի մասն անցնում է առաջին խմբին, միւս՝ երկրորդ:

Սարենիկ. Իսկ դուք այդ խմբերից հրին պէտք է պատկանէք, եթէ պարապէք ուսուցչութեամբ: Տիգրան. Այդ ապագայի հարց է: Միայն ես պնդում եմ, որ առհասարակ մտաւոր ասպարէզում գործելը մեծքաղցրութիւն է պատճառում մարդուս: Գուցէ ձեզ փառասիրութիւն թւի անմահութեան ձգտելը, պակայն այդշատ բնական է: որովհետև երբ մարդու վիկտորիայոքն է մտածում իր վրայ, միշտ հարց է տալիս իրան, թէ ինչու համար եմ իզուր ստեղծվել, երբ իզուր պէտք է կորչեմ: Եւ գիտէք, որքան է վրդովում նրան այն միտքը, թէ ինչպէս պէտք է նա բոլորովին անհետ կորչի այս աշխարհից: Նա չի ուզում երբէք հաշտվել այդ մտքի հետ, ուստի և ձգտում է որևէ կերպով անմահացնել իրան:

Սարենիկ. Ուրեմն գուք այնքան էլ անպատճեր չէք համարում պատասխաններին այդ գէպքում:

Տիգրան. Այս, և ոչ միայն այդ գէպքում, այլ և ուրիշ գէպքերում, եթէ միայն դրան համնելու միջոցներն ազնութեամբ են սնվում: Եւ եթէ մենք խորը քննենք, կը տեսնենք, որ փառասիրութիւնն իր մէջ որոշ չափով մրցութիւն է պարունակում:

Սարենիկ. Ես այժմ եմ զգում գիտութեան քաղցրութիւնը: Եթէ ես էլ զարգացած լինէի այնպէս, ինչպէս դուք, այն ժամանակ ես չէի ընկճվի ձեր առաջ: Այն գէպքում, երբ գիմացինդ այնպիսի մտքեր, տեղեկութիւններ է հաղորդում, որոնց մասին դու գաղափար անդամ չ'ունես, դու չես էլ կարող վկայել նրանց հաւաստիութիւնը, կամ ստութիւնը, այլ պէտք է ձգես բնական գատողութեան:

Տիգրան. Կեանքի վերջալոյսին մենք շատ բաների ենք ափսոսում: Մէկը ողբում է իր կորցրած առողջութիւնը,

կամ երիտասարդութիւնը, միւսը՝ գեղեցկութիւնը, երրորդն՝ անուսում մնալը, չորրորդն՝ իր սիրելու անփոխարինելի կորուստը և այլն:

Հոփիսիմէ. Շատ ճշմարիտ է:

Տիգրան. Հեռու չը դնանք, դառնանք մեր հարցին։ Աշխարհս մի թատրոնական բեմ է, ուր իւրաքանչիւր մարդ, որպէս դերասան, աշխատում է փայլել իր արուեստով և անմահանալ. այսպէս,—արհեստաւորն՝ իր հրաշալի ձեռակերտով, հարուստն՝ իր բարեգործութեամբ, հոգեսրականն՝ իր արթուն հովտութեամբ, զինուրականն՝ իր ռազմական քաջութեամբ, թագաւորն՝ իր բարեկարգ կառավարութեամբ, դերասանն՝ իր դերասանական հանճարով, գիտական՝ իր գիտական գիտական գրածներով, հեղինակն՝ իր գրական երկերով, ատենաբանն՝ իր սքանչելի ատենաբանութեամբ, նկարիչն՝ իր վրձինի հրաշալիքներով, երաժիշտն՝ իր երաժշտական հանճարով, քաղաքագէտն՝ իր քաղաքագիտական համարով, ուսուցիչն՝ իր հոգեսուն աշակերտներով և այլն, և այլն,—մի խօսքով ամենքը ձգտում են անմահութեան և ոչ ոքի ցանկալի չէ անխորհուրդ ապրել և անխորհուրդ մեռնել ու անհետ կորչել այս աշխարհից։ Սա փառասիրութիւն չէ. սա կեանքի նպատակն է։ Եթէ անժառանդ մարդուն վրդովում է անժառանդ մեռնելու միտքը, ապա ուրեմն որքան կը վրդովի բանական մարդուն մահանալու, անհետ կորչելու միտքը։ Ահա այս բնազդն է, որ դրդում է մարդուն անմահացնել իրանորեւ ճանապարհով, և այս է պատճառը, որ ողջ մարդկութիւնը ձգտում է անմահութեան։ Բայց մի կարծէք, որ բոլոր մարդիկ կ'անմահանան. որովհետև շատերն են կանչված, բայց քչերն են ընտրված։ Այդ ընտրեալների ստեղծագործութեան արդիւնքներն են, որ մնում են, որպէս մի-

մի կոթողներ, մարդկային ազգի քաղաքակրթութեան պատմութեան մէջ։ (Ներս է մտնում Սարգիսը):

Տիգրան. Բարել' ձեզ, ազնիւ փեսացուս:

Տիգրան. Աստծու բարին ձեզ, բարի հայրիկուս:

Տիգրան. Ինչպէս երեսում է, խօսակցութեամբ էիք զբաղված։

Տիգրան. Լոռութիւնը մի քանի հոգու մէջ ձանձրալի է։

Տիգրան. Ի՞նչ էր ձեր խօսակցութեան նիւթը։

Տիգրան. Կեանքի նպատակը։

Հոփիսիմէ. Աւելի շուտ պարապմունքի ընտրութիւն։ (Ամուսնուն): Գիտես, սիրելի ամուսինս, մեր փեսան վճը-ռել է ուսուցչութեամբ պարապել։

Տիգրան. Շատ ուրախ եմ։

Տիգրան. Ո՞րքան տարբերութիւն հայեացքների։ Ճիշտոր որ որքան մարդ, այնքան կարծիք։

Հոփիսիմէ. (Ամուսնուն): Ինչումն է ձեր ուրախութիւնը, քանի որ դա անհիմն գործ է։

Տիգրան. Աշխարհում ի՞նչ կայ հիմնաւոր. չէ որ ողջն է անցաւոր, միայն մենք ամեն բան չափում ենք համեմատական կերպով։

Տիգրան. Ինչ ուզում է, թող լինի. միշտ մարդ առաջ կը գնայ այն արհեստի մէջ, որին ըոլոր սրտով սիրում է։ Կամաւոր աշխատանքը զվարճութիւն է, ակամայ աշխատանքը՝ տանջանք։

Տիգրան. Շատ ճիշտ նկատեցիք, սիրելի հայրիկուս. երեսում է, որ դուք անցել էք կեանքի բովից։

Տիգրան. Սիրելի փեսաս, ձեր պաշտօնի մասին արդէն բանակցութիւն եղել է։

Տիգրան. Նշանակվել եմ արդէն։

Տիգրան. Ո՞րտեղ։

Տիգրան. Հեռաւոր գլուղերից մէկում:

Սարգիս. Տգէտների աշխարհնում...

Տիգրան. Ի՞նչ արած. ցածրից պէտք է սկսել և բարձրը դիմել:

Սարգիս. Ե՞րբ էք ճանապարհվելու ձեր պաշտօնատեղին:

Տիգրան. Մի քանի օրից յետոյ. արդէն մօտ է սեպտեմբերը, ուսումնական տարվայ առաջին ամիսը:

Հոփիսիմէ. (Զարմացած): Ի՞նչ էք ասում... Հապահարսանի՞քը:

Տիգրան. Վճռել եմ մէկ տարի նշանված մնալ. ասում են, որ նշան դրված մնալը շատ քաղցր է լինում: Չը գիտեմ, գուցէ շատ դառը լինի, բայց կան արդելառիթ հանգամանքներ...

Հոփիսիմէ. Սակայն ձեր ծնողներն այդպիսի պայման չը կապեցին: Նրանք նշանադրութեան միջոցին յայտնեցին, որ շուտով պատրաստութիւն պէտք է տեսնեն հարսանիքի համար: Իհարկէ այդպէս կը լինի, երբ որ մարդս ասի, թէ շտապելու ոչինչ չը կայ:

Սարգիս. Ես ի՞նչ էի իմանում, թէ այդպէս կը լինի:

Հոփիսիմէ. Շտապելու ոչինչ չը կայ, իմանալու էլ կարեք չը կայ: (Ծիգրանին): Ի՞նչո՞ւ շուտ չէիք յայտնում:

Տիգրան. Մինչև նշանադրութիւնը ոչինչ յայտնի չէր, թէև մտադրութիւն կար. բացի դրանից՝ այդ մասին հարց էլ չի եղել: Այստեղ, կարծեմ, խաբերայութիւն չը կայ. դիտէք, թէ որքան շուտափոյթ եղաւ մեր նշանադրութիւնը. կարծեմ, այնքան շուտ, որ ժամանակ չ'եղաւ այդ մասին մտածելու և հարց տալու:

Սարգիս. Մեզ լաւ յայտնի էր, որ դուք, իբրև նորաւարտ, պէտք է նոր դորձի մտնէիք. իսկ ճիշտ է և այն,

որ մենք այնքան շտապեցինք, որ ձեր նպատակի մասին չը հարցրինք: Եթէ հարցնէինք էլ, ձեր նպատակը վատ չէինք դտնի. կարծեմ, այս դէպքում մի առանձին ոխալ չենք գործել: Բայց լաւ կը լինէր, որ մեզ մօտ և քաղաք տեղ նշանակէին ձեզ ուսուցիչ:

Տիգրան. Լաւ կը լինէր. բայց բանն ուր կը հասնի, եթէ ամենքն էլ քաղաքում լինեն: Պէտք է մի քիչ էլ գաղափարականութիւն:

Հոփիսիմէ. Շատ լաւ, ինչո՞ւ շուտ չէիք ասում. գոնէ մեր այսօրվայ խօսակցութեան սկզբում ասէիք:

Տիգրան. Խօսակցութիւնն այնպէս էր, որ բուն հարցին աստիճանաբար պէտք է մօտենայինք:

Հոփիսիմէ. Դուք նշանադրութիւնից առաջ էք վճռել մի տարի նշանված մնալ:

Տիգրան. Ո՛չ, յետոյ վճռեցի:

Հոփիսիմէ. Ի՞նչն էր պատճառը:

Տիգրան. Նիւթականի սղութիւնը:

Սարգիս. Ա՛խ, այդ սղութիւնը, որ շատ ամուսնութիւնների արդեկը է դառնում և ծաղիկ կեանքերը զըրկում երջանկութիւնից...

Հոփիսիմէ. Ես հակառակ եմ մեծամեծ ծախսեր անելուն: Լաւ կը լինի, որ ամուսնանք և միասին գնաք. շատ թեթև կը նստեցնենք ծախսը, որ երկու կողմի համաձայնութիւնից է կախված: Իմ դժգոհութեան պատճառն ապասեն է:

Տիգրան. Ես էլ հակառակ եմ մեծածախս և բազմականչ հարսանիքին, որ, իբրև շոայէ և ապարդիւն սովորութիւն, արդարև զրկում է մատաղ կեանքերը երջանկութիւնից և ազգը բազմաթւութիւնից: Այդ իմ սկզբունքն է: Սակայն պէտք է վայելչութեան սահմաններից էլ չ'ան-

ցնել. իսկ իմ նիւթական հանգամանքները դրան էլ են հաշկառակում և մեր ամուսնութիւնը ներկայ պայմաններում անկարելի դարձնում:

Սարգիս. Ինչ որ լինելու է, այն էլ կը լինի. Նախախնամութեան կամքը թող օրհնված լինի:

Հոփիսիմէ. (Սաթենիկին) Իսկ դու ի՞նչ կ'ասես, Սաթենիկ ջան:

Սաքենիկ. Ի՞նչ կարելի է անել այնտեղ, ուր ոչինչ չէ կարելի անել: Ուստի մնում է ակամայ հաշտվել կեանքի պայմանների հետ:

Հոփիսիմէ. Ես վախենում եմ, որ վերջը մի բան դուրս դայ...

Տիգրան. Միթէ դուք կասկածում եք իմ մասին, որ մի գուցէ յետ կանգնեմ իմ մտադրութիւնից. հեռութինձնից այդպիսի անազնութիւն: Հեռանալով՝ ես չեմ դադարի Սաթենիկին սիրելուց: Սէրը հեռաւորութիւն չի ճանաչում. հեռաւորութիւնը, կարոտութեանն օդնութեան կանչելով՝ աւելի է սաստկացնում սէրը: Այդ կողմից, ազնութեան անունով, բոլորովին միամիտ կացէք: (Կամենում է զնալ): Բաւական երկար խօսեցինք. հիմա ծնողներս ինձ սպասում են, ես գնամ:

Սարգիս. Ինչու եք այդպէս շուտ գնում:

Տիգրան. Շուտ չէ. Ճեղանից շատ առաջ եմ եկել:

Սարգիս. Իհարեկ ճանապարհ ընկնելու ժամանակ մեղկը հանդիպէք:

Տիգրան. Անշնչառ: Յաեսութիւն: (Դուրս է զնում):

Հոփիսիմէ. Սիրելի ամուսինս, Աստուած մեզ այսպէս էր կամեցել:

Սարգիս. Այն, բայց լաւ գաղափարական երիտասարդ է մեր փեսացուն, այնպէս որ ես շատ հաւանեցի նրան:

Հոփիսիմէ. Այդ կողմից ես ոչինչ չ'ունեմ ասելու: Սարգիս. Նա հէնց առաջին անգամից ինձ դուր եկաւ: Զը նայելով՝ որ առաջին անգամի տպաւորութիւնը միշտ զօրեղ է լինում, սակայն նա երկրորդ անգամ էլ միևնույն տպաւորութիւնը թողեց: Թէև յաճախ մարդկանց արտաքինը խաբուսիկ է, բայց որա մէջ բնութիւնը, կարծես, արտաքին գեղեցկութեանը միացրել է և ներքին գեղեցկութիւնը, որ շատ հազւագիւտ է:

Հոփիսիմէ. Ապագան ամեն բան կը պարզի: Ամեն փայլուն իր ոսկի չէ:

Սարգիս. Ճիշտ է, միայն երբեմն հէնց առաջին անգամից կարելի է լինում ճանաչել մարդուն: (Դուրս են զնում):

ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ.

Տան մի սենեակում:

Ներս են մտնում ՅՈՎՀԱՆՆԵՍԸ և ՄԱՐԻԱՄԸ:

Մարիամ. Ի՞նչ պատահեց մեր Տիգրանին. Նա շատ ուշացաւ: Աների տուն գնալիս՝ խոստացաւ, որ շուտով կը վերադառնայ:

Յովիաննէս. Է՛հ, կը գայ էլի:

Մարիամ. Մայրերն աւելի են դէմ ընկնում իրանց որդիների համար, քան թէ հայրերը:

Յովիաննէս. Այդպէս էլ պէտք է լինի անկասկած: Ճատ կարելի է զոքանչը ծանր ու թեթև է անում նրան իր երկար ու բարակ հարցերով:

Մարիամ. Աստուած տայ, որ Տիգրանս պարզերեա դուրս դայ այդ փորձից:

Յովիաննես. Յոյժ ունեմ, որ պարզերես դուրս կը գայ, իմ խաչի զօրութիւնը ես գիտեմ:

Մարիամ. Կարծես, նա գալիս է՛ Այն, նրա ոտերի ձայնն է՛ (ներս է մտնում Տիգրանը): Ինչո՞ւ այդքան ուշ շացար, սիրելի որդեակա:

Տիգրան. Զրոյց էինք անում: Հօ գիտես կանանց մանրագննին հարցերը, որոնք երբեմն մարդու ձանձրացնում են: Եւ վերջապէս ի՞նչ կայ այդքան դէմ ընկնելու ինձ համար:

Մարիամ. Իհարկէ քեզ ծանօթ չէ ծնողական սիրտը, այն էլ մայրականը, մանաւանդ այն դէպքում, երբ իր մինուճար որդին մօտ օրերում թռչելու է օտար աշխարհ:

Տիգրան. Է՛հ, ի՞նչ կայ դրա մասին մտածելու:

Մարիամ. Ճիշտ ես ասում, որդի: Այդ ասված է մի- այն տղամարդկանց համար, որոնց սիրտը մօտենում է քարի կարծրութեան: Սակայն իմացիր, որ կանանց սիրտը շատ քնքոյշ է և նրգագաց:

Տիգրան. Քնքոյշ, որպէս նոր քաղած ծաղիկ և նուրբ ու շուտաբեկ, որպէս բարակ ապակի...

Յովիաննես. Այդ նրանից է, որ տղամարդկանց սիրտը միշտ գործ ունի կեանքի փոթորիկների հետ, այն ինչ կանանցը սիրոյ թագաւորութիւնից այն կողմը չի անցնում: Թէև այդտեղ էլ փոթորիկներ կան, սակայն նրանք շատ չնշին են առաջինների հետ համեմատած: Լաւ, թողնենք այդ հարցը: Տիգրան, պատմիր, տեսնենք, թէ ի՞նչ էին հարց ու փորձ անում քեզ:

Տիգրան. Այնպէս մի առանձին աչքի ընկնող բան չը կար. խօսում էինք այն, ինչ որ պատահում էր: Միայն մեր խօսակցութեան նիւթը գլխաւորապէս իմ պաշտօնի և առումնութեան շուրջն էր պտտում:

Մարիամ. Ասացիր նրանց, որ շուտով գնալու եա:

Տիգրան. Ինչպէս չէ:

Յովիաննես. Հապա նրանք ի՞նչ ասացին:

Տիգրան. Նրանք թէև սկզբում հակառակ էին իմ գնալուն, բայց վերջը համաձայնեցին՝ յանձնելով ինձ իմ հակումների ներքին մզման:

Յովիաննես. Իսկ պսակադրութեան մասին բան չ'ասացի՞ն:

Տիգրան. Խօսեցին դրա մասին ևս, թէ ինչո՞ւ առանց պսակելու եմ հեռանում, մանաւանդ որ դու էլ ասացիր, թէ՝ գնանք, պատրաստվենք հարսանիքի համար, որ նրանք էլ ասացին, թէ կարիք չը կայ շտապելու, երբ ուզում էք, այն ժամանակ անենք հարսանիքը: Իհարկէ նրանք չէին կարծում, որ այդքան կ'ուշանայ. Նրանց խօսքը վերաբեկարծում, մի այդպահ մէջին ճանապարհին: Ինչ րում էր շտապելու և ուշանալու միջին ճանապարհին: Ինչ և իցէ. ես նրանց, մի քանի հանգամանկներ մէջ բերելով կարողացայ միամտացնել, այնպէս որ խաղաղացրի նրանց անհանգիստ սրտերը և հաւատ ու յոյս ներշնչեցի դէպի մեր ազնւութիւնը:

Յովիաննես. Անձարն ուտում է բանջար: Ի՞նչ անեն խեղճերը... երբեմն մարդ ակամայ հաշտվում է կեանքի հանգամանկների ոչ ցանկալի դասաւորութեան հետ:

Մարիամ. (Տիգրանին): Քեզ չը խնդրեցին գնալու ժամանակ տեսնել իրանց:

Տիգրան. Ինչպէս չէ: Առանց նրանց խնդրելու էլ իմ պարտականութիւնն է դնալ և հրաժեշտ տալ նրանց: Այս ժըմ գնանք, ճանապարհի պատրաստութիւն տեսնենք: (Դուրս են զնում):

ԵՐՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

Առանձնասեննեակում:

Ներս են մտնում լեի՛՛նը և ներսէսը:

Լեւոն. Ո՞ւր է Տիգրանը:

Ներսէս. Միւս սենեակումն է, ծնողների մօտ:

Լեւոն. Ի՞նչ է անում:

Ներսէս. Ճանապարհի պատրաստութիւնով է զբաղված: Եթէ կամենաք, կարող եմ կանչել:

Լեւոն. Կանչէք, եթէ միայն նեղութիւն չի լինի ձեզ:

Ներսէս. Ո՛չ մի նեղութիւն. ինձ վիճակված է ընդմիշտ ուրիշներին ծառայել: Տիրոջ ծառան նրա բարեկամներին էլ ծառայութիւն կ'անէ: (Դուրս է գնում):

Լեւոն. Գնացէք, ձեր հնարադիտութիւնն ինձ շատ լաւ յայտնի է. կարիք չը կայ կեղծաւորութիւն անելու: Դուք, ծառաներդ, խաբեբաների խաբեբաներն էք. դուք, որ ձեր հին տէրերից ակնածում էք, իսկ նորերին մատերի արանքից նայում... (Ներս է մտնում Տիգրանը):

Տիգրան. Բարե՛ քեզ, ազնիւ ընկերս. Էլ չես երեսում:

Լեւոն. Չերեալու ժամը նոր է մօտենում:

Տիգրան. Իհարկէ լսած կը լինես, որ եկար:

Լեւոն. Անկասկամ. ծածուկ բան չը կայ, որ չը յայտնի, ուր մնաց ծածկելու անարժանը:

Տիգրան. Լաւ արեցիր, որ եկար. թէ չէ՝ կանչել էի տալու քեզ, մանաւանդ որ հրաժեշտի ժամն էլ մօտ է:

Լեւոն. Շատ ուրախ եմ, որ այդպէս շուտ որոշվեց քո պաշտօնը:

Տիգրան. Շնորհակալ եմ. իսկ քեզ համար ոչինչ չը կայ դեռ:

Լեւոն. Ոչինչ, բացի անորոշ գրութիւնից: Անգործութիւնը վատ է ազդում մեր ջղերի վրայ և առաջ բերում երերվող ու տատանվող թոյլ բնաւորութիւններ:

Տիգրան. Քեզ ևս աջողութիւն եմ ցանկանում: Բացի պաշտօնից մի ուրիշ բան էլ կայ. չը գիտեմ, այն էլ լսել ես:

Լեւոն. Գիտեմ, նշանադրութեանդ մասին է խօսքը. այն, լսել եմ: Դու շտապեցիր. ես պէտք է ասէի: Շնորհաւութում եմ նշանադրութիւնդ և լիակատար բերանով բարի վայելում մաղթում: Ընկերի աջողութիւնն ընկերակցի աշողութիւնն է, ինչպէս և ուրախութիւնը: Նրա աջողութիւնից մեզ օգուտ կը դայ, իսկ անաշողութիւնից՝ վսաս:

Տիգրան. Շնորհակալ եմ, ազնիւ հոգի. միայն ցաւում եմ, որ այնքան շտապ և անակրնկալ կերպով կատարվեց իմ նշանադրութիւնը, որ չը կարողացայ գոնէ քեզ կանչել:

Լեւոն. Ո՞վ էր կանչված, որ ես կանչվէի, և միթէ կանչված պէտք է լինէի, որ ուրախանայի: Ընկերծ բարեկանչված հիւրասիրութեան կարօտ չեն: Բայց ինչու հարկամները հիւրասիրութեան կարօտ չեն: Բայց ինչու հարկամները էլ միանդամից չ'արեցիր, վերջանար, գնար:

Տիգրան. Է՛հ, այդպէս եղաւ: Ուրեմն քեզ բոլորը յայտնի է առանց իմ պատմելու:

Լեւոն. Այն, յայտնի է. պղինձը, որ վայր ընկնի, ձայն կը հանի:

Տիգրան. Գիտեմ, հարսանիքի համար աներանքս էլ շատ դէմ ընկան, որ լինի. սակայն ես չ'ուզեցի, որ այս տարի լինի, որովհետեւ, քեզ լաւ յայտնի է, մեր դրութիւնն այնքան էլ չի ներում հիմա: Թէև ես մեծածախս հարսանիք անել չեմ սիրում, սակայն համեստ ուրախութեան համար ժլատ լինել չեմ ուզում: Բացի այդ՝ առանց

այն էլ նշանադրութեան վերաբերմամբ շտապեցինք, լաւ չեր լինի, եթէ հարսանիքի համար էլ շտապէինք:

Հետոն. Լաւ, Աստուած եղածն օրհնի: Ինչ եղել է, արդէն եղել է: Աստուած չ'անի, որ կառըը կէս ճանապարհին կանգնի:

Տիգրան. Բայց մենք խօսքով ընկանք: Գնանք միւս սենեակը, ծնողներիս մօտ, նրանք արդէն ինձ ճանապարհելու պատրաստութիւնով են զբաղված: Այնտեղից էլ մենք, բոլորս, կը գնանք աներոջս տուն՝ մնաս բարով ասելու: Մառայի միջոցով նրանց իմացրել ենք արդէն: (Դուքս են զնում):

ԶՈՐՈՐԴԻ ՏԵՍԱՐԱՆ.

Դա հլի Շում:

Ներս են մտնում ՍԱՐԳԻՍԸ և ՀՐԻՓՍԻՄԵՆ:

Հռիփսիմէ. Կարծեմ, ժամանակն է. շատ կարելի է հիմա Տիգրանն իր ծնողների հետ գայ մնաս բարով ասելու: Արդէն տեղեկացրել են մեզ:

Սարգիս. Այս, սպասենք և տեսնենք, երբ բախտ կ'ունենանք նրան նորից տեսնելու:

Հռիփսիմէ. Բայց, սիրելի ամուսինս, մտքովս մի բան անցաւ, այնպէս որ սիրտս վատ է նախազգում:

Սարգիս. Ի՞նչ կողմից:

Հռիփսիմէ. Ո'վ գիտէ, Տիգրանը դուցէ էլ յետ քառնայ:

Սարգիս. Ի՞նչպէս, թէ՝ «դուցէ էլ յետ չը դառնայ»:

Հռիփսիմէ. Ասել չի լինի. մարդուս կեանքը նման է ծովում լողող նաւակի, իսկ ինքը՝ նաւափարի: Ինչպէս որ

նաւը ենթակայ է ծովի ալիքներին, այնպէս էլ մարդու կեանքի ծովի ալիքներին:

Սարգիս. Է՛հ, ինչ անենք, որ ենթակայ է. դրա համար էլ մենք միշտ պէտք է պաշարվենք չարագուշակ նախազգացումներով... Դուք, կանայք, միշտ այդպէս վախկոտ եք, երկմիտ, կասկածոտ, նախապաշարված և սնահաւատու:

Հռիփսիմէ. Ինչ կ'ուզես, հաշւիր, միայն ես կ'ասեմ, որ կանայք շատ զգայուն սիրտ ունեն, և այն, ինչ որ կարող է զգալ սիրտը, չի կարող ըմբռնել միտքը:

Սարգիս. Շատ լաւ, փիլիսոփայութիւնների յետևեց մի ընկիր. մի տարի չէ, այնպէս կ'անցնի, որ չես իմանայ, թէ ինչպէս անցաւ: Եթէ գլխարկդ ծուռ դնես, մինչեւ ուզգելը մի տարին կանցնի, միայն ջանսազութիւն լինի:

Հռիփսիմէ. Հէնց ես էլ դրա վրայ եմ մտածում: Օտար երկիր, հիւանդութիւն կայ, մեռնել կայ, կեանքի հազար ու մի տեսակ փորձանքներ կան. բացի դրանցից՝ կարող է պատահել, որ այնտեղ սիրահարվի մի աղջկայ վըրայ և նրա հետ էլ ամուսնանայ ու մեղանից երես դարձնի:

Սարգիս. Աշխարհումս շատ բան կարող է պատահել. ես դրան հակառակ չեմ: Սակայն բոլոր մարդիկ միատեսակ ազնւութեամբ չեն առաջնորդվում: Հիմա եթէնա մեղ պէտք է խարի, Աստուած իր հետ: (Ներս է մտնում Սաթենիկը):

Հռիփսիմէ. Արի մեղ մօտ, սիրելի զաւակս. մենակ կարող ես ծանձրանալ: Նշանածդ էլ բաւական ուշացաւ. կարող ես ճանձրանալ: Եթէնա մեղ պէտք բայց կը գայ, գուցէ ճանապարհի պատրաստութիւնն է ուշացնում նրան: Սակայն այսօր դու տիսուր ես երկում սովորականից գոււրս:

Սարգիս. Ինչու համար դու վատ նախազգացումներ կ'անես, իսկ նա չի տիսրի. չէ որ նրա նշանածն է հեռու ճանապարհ գնում:

Սարենիկ. (Ժածկելով վրդովմունքը): Զէ, ոչ մի տըխ-
րութիւն չը կայ, սիրելի ծնողներս. դրա համար անհան-
գիստ մի լինեք:

Հովիվիսիմէ. Որքան էլ տքնես արդարացնելու քեզ,
բայց և այնպէս դէմքդ մատնում է սիրտդ: Իմացիր, որ
մարդուս դէմքն իր ներքին աշխարհի յայտարարն է: Նրա
վրայ կարելի է կարդալ ներքին աշխարհում կատարվածը:
Ահա և նրանք: (Ներս են մտնում Յովհաննէսը, Մարիա-
մը, Տիգրանը և Լեւոնը):

Յովհաննէս. Բարե՛ ազնիւ խնամիներիս:

Սարգիս. Աստծու բարին թանկագին բարեկամներիս:
Ինչու այսքան ուշացաք. բաւական ժամանակ է, որ ձեզ
սպասում ենք:

Յովհաննէս. Դէհ, չի լինում. ճանապարհի պատրաս-
տութիւնն իսկոյն և եթ չի կատարվում: (Ցոյց տալով
Լեւոնին): Սա էլ Տիգրանիս դասընկերն է և նրա մտերի-
մը. խնդրեմ, ծանօթանաք:

Սարգիս. Շատ ուրախ եմ:

Լեւոն. Ես նոյնպէս:

Տիգրան. (Սարզսին): Սիրելի հայրիկ, ի՞նչ կայ ձեր
կրողմից շտապելու. ամեն բան աշխարհիս վրայ իր սովո-
րական կարգով է ընթանում: Թողարկում էնդ մինչև անդամ ձեզ տա-
րօրինակ չը թւի, թէ ինչու ես խուլ անկիւն ընտրեցի
դործելու համար և այն էլ այնպիսի սապարէզում, ուր
նիւթական սղութիւնն է տիրում և ուր խաւարն անհաշտ
կուր է մղում լրյուի դէմ: Բայց իմացէք, որ այդ պատե-
րազմն անողոք է. քանի՛—քանի՛ մատաղ կեանքեր ընկել
են, ընկնում են և պէտք է լմկնեն այդ պատերազմում,
մինչև որ վերջապէս լոյսը թագաւորի ամեն տեղ:

Սարգիս. Շատ ճիշտ էք սպասում: Ես կը բարեմաղթեմ

ձեզ լինել աննկուն և անվեհեր այդ պատերազմում:
Տիգրան. Շատ շնորհակալ եմ, սիրելի հայրիկ. բայց
ես դեռ չեմ վերջացրել խօսքս: Զը նայելով աննպաստ
հանդամանքներին՝ ես այն պատճառով ցանկացայ գրիել
լոյսի թագաւորութեան կամաւոր զինուոր, որովհետեւ իմ
ձգտումներն այդպէս էին թելադրում: Ամեն բան աշխար-
հիս վրայ բնական ճանապարհով է ընթանում: Բայց թէ
ինչպէս կը հիւրընկալի այդ սապարէզն ինձ, այդ մօտիկ
ապագան ցոյց կը տայ: Այժմ ինձ մտաւոր պատերազմ
ուղարկելով՝ յիշեցէք սպարտացոց մայրերի վերջին խօս-
քերը, որ ասում էին իրանց որդիներին պատերազմ ու-
ղարկելիս. «Վահանդ ուսիդ, կամ վահանիդ վրայ»: Այն, եր-
կուսից մէկը. կամ յաղթութիւն և կեանք, կամ պարտութիւն
և մահ: Խօսքերս փիլիսոփայական նրբութեամբ քննեցէք:

Մարիամ. Մինչեւ այժմ ինձ այնքան չէր թւում, որ-
քան այժմ. տխուր մտածմունքները պաշարում են ինձ:
Սիրոս սկսում է վատ նախազգալ. մի գուցէ հէնց առա-
ջին քայլափոխում անաջողութիւնների հանդիպես...

Տիգրան. Սիրելի մայրիկ, սիրտդ կասկած մի ձգիր.
ամեն բան լաւ կ'անցնի: Շատ անգամ մեր անտեղի կաս-
կածներով իսկապէս անաջողութիւնների ենք հանդիպում:
Զը գիտեմ միթէ, որ յաճախ ստանում ենք այն հիւան-
դութիւնը, որի մասին կասկածում ենք և մտածում:

Մարիամ. Սիրելի որդի, ճիշտ է քո սասածը. սակայն
այսակեղ ծագում է մի հարց, որի լուծելու համար պէտք
է հողերաններին օդնութեան կանչել, այն է՝ «Ճիշտ է ար-
դեօք նախազգացումը, թէ՞ ոչ»: Կարծեմ, շատ պարզ են
նախազգացում և կասկած բառերը: Յաճախ երկուսն էլ
երագործվում են. բայց հարցը գլխաւորապէս նրանումն է,
թէ պէտք է հաւատալ դրանց, թէ՞ ոչ:

Յովիաննէս. Այդ հարցը մեր խելքից, վեր է։ Սակայն այսքանը կասեմ, որ պէտք է հաւատալ երկուսին էլ և աշխատել, որքան մեր ոյժերը կը ներեն, նախազգացումի դէպքում զդուշութեան միջոցներ ձեռք առնել, որպէսզի դալիք անաջողութիւնները չը պատահեն. թէև երբեմն չենք կարող, որովհետեւ հանգամանքների դասաւորութիւնը մեզանից չի կախված։ Իսկ կասկածի դէպքում, աչքի առաջ ունենալով ամեն կողմից նրա մնասակարութիւնը պէտք է աշխատել զանազան միջոցներով ցրել այդ կասկածը և ամեն բան կը վերջանայ։

Սարգիս. (Տիգրանին): Սիրելի փեսաս, Սաթենիկը և իր մայրը ձեր դալուց առաջ յայտնեցին, որ նոյնպէս վասեն նախազգում ձեր գնալու վերաբերմաբ։ Եւ եթէ այժմ ձեր մայրն էլ է վատ նախազգում, այդ դէպքում ես խորհուրդ եմ տալիս թողնել ձեր մտադրութիւնը. ատա թէ ոչ մենք կը կրենք մնասը։ Յաճախ մենք պատժում ենք նրա համար, որ ականջ չենք դնում մեր ներքին ձայնին։

Տիգրան. Ո՞չ, անկարելի է։ Ինչ էլ որ լինի, պէտք է գնամ։ Ո՞վ դիտէ, գուցէ մենք չենք կարողանում զանազանել նախազգացումը հրաժեշտի ժամին զդացած տիրութիւնից։ (Ներս է մտնում ծառան)։

Ծառայ. Պ. Տիգրան, ճանապարհի կառքն արդէն պատրաստ է և ձեզ է սպասում. շտապեցէք։

Տիգրան. Այս լոպէին։ Իրեղէններն ամուր կապեցիք։

Ծառայ. Այ՞։

Տիգրան. Լաւ, գնա կառքի մօտ, սպասիր մինչև իմ դալը։ (Ժառան դուրս է գնում)։

Տիգրան. Դէ՞հ, ուրեմն մնաք բարով։ (Համբուրում է իր ծնողների, աների եւ զոքանչի ծնուերը)։ Մնաս բարով և դու, հոգեանկա։ (Սեղմելով Սաթենիկի ծնողը եր

համբուրելով շրջունքները)։ Մնաս բարով և անարատ մինչև իմ վերադարձը. թէև ես գնում եմ, բայց իմ սիրութեղ եմ թողնում։ (Իսկ ծնողներին լացակամած)։ Սրան շուտ-շուտ կ'այցելէք և կը միիթարէք մինչև իմ դալը։ (Երկուան էլ լալիս են)։

Մարիամ. Միամիտ կաց, սիրելի որդի։ Այդ, առանցքու ասելու էլ, մեր պարտականութիւնն է. Միայն չը մոռանամ մեզ շուտ-շուտ նամակ դրել։

Տիգրան. (Հետոնին): Մնաս բարով և դու, իմ ընկեր Լեռն։ (Գրկում է նրան եւ արտասվում)։ Ի՞նչպէս հեռանամ ես քեզանից, ով դու, թանկագին յիշողութիւնների ընկեր։ Ո՞հ, սիրու ճնշվում է, այն, ճնշվում է, սասաիկ ճնշվում... Ա՛խ, անողնք բախտ... Ո՞հ, սիրու կտրատվում է, չի ուզում բաժանվել քեզանից։

Թէև սիրոս կը հեռանայ
Տարածութեամբ անսահման,
Բայց քեզ երբէք չեմ մոռանայ
Իմ սրտի մէջ յաւիտեան։

Յիշիր, միշտ մտքիդ մէջ վահիր մեր ուխտը։

Լեռն. (Արտասվելով): Ա՛խ, Տիգրան ջան, սրտիս սաստիկ կոկծից ես բառ չեմ դտնում յայտնելու իմ դաւը վիշտը, որ զգում եմ այս անջատման ժամին։ Լեզուն լուսում է զգացմունքների սաստկութեան ժամանակ։ Գնաս բարով, Աստուած քեզ հետ և իմ սիրոն էլ տար քեզ հետ։ (Համբուրվում են)։ Ողջերթ։

Տիգրան. Ուրեմն կրկին անգամ մնաք բարով բոլորդ էլ։

Բոլորը. Գնաք բարով, բարի ճանապարհ։ (Դուրս են գնում)։

ԵՐՐՈՐԴ ԱՐԱՐՎԱԾ.

ԱՌԱՋԻՆ ՏԵՍԱՐԱՆ.

Դիւղ. մի սենեակում:

Ներս է մտնում ՏիգրԱնը:

Տիգրան. Երկար ճանապարհորդութիւնից յետոյ վերջապէս հասայ պաշտօնավայրս: Ո՞հ...

Արդէն ծածկվեց հայրենիքս
Հորիզոնի յետևում,
Որտեղ թողի սիրելիքս
Մտածմունքի խոր ծովում:

Նրան, որին պատահել է
Հայրենիքից բաժանվել,
Յայտնի է, թէ որքան ծանր է
Սուրբ վայրերից անջատվել:

Դառն է ժամը, երբ պիտ' թողնես
Օրօրանը պապերիդ,
Որպէս նաև այն վայրկեանը,
Երբ էլ չը կայ սիրելիդ:

(Խորասուզվելով դառը մտածմունքների մէջ): Թէև ես կարող էի աշխատել հայրենիքումս էլ պաշտօն դտնել, սակայն ճանապարհորդելու անդուսպ ցանկութիւնն արգելք եղաւ դրան: Իմ սիրտը, կարծես, միշտ ուզում է թռչել հայրենիքից հեռու և հեռու: Հայրենիքը, կարծես, նեղ է նրա համար. նա ուզում է թափանցել բնութեան խորչքերը և բնութիւնը տեղն ու տեղն ուսումնասիրել: Բայց այդ գիտեմ բնութիւնն ինչի՞ համար է դրել իմ մէջ ճանապարհորդելու այդ բուռն ցանկութիւնը: Գուցէ դա էլ բընական ճանապարհով է եղել: Եթէ իմ մէջ կայ ձգտում անընդհատ և ճշմարտապէս զարգանալու՝ բնականաբար և իմ մէջ պէտք է առաջ գայ ճանապարհորդելու վառ ցանկութիւնը: Շատ ման եկողը շատ բան կ'իմանայ, քան թէ շատ ապրողը, Այժմ նոր վայրեր, նոր մարդիկ, նոր բարքեր, մի խօսքով՝ նոր միջավայր: Անցեալն է երազ, ներկան՝ հիասթափում, — մի կողմով՝ լաւ, միւս կողմով՝ վատ: Մի խօսքով՝ ամեն բան աշխարհումս ունի իր լաւ և վատ կողմերը: Է՞հ, կ'աշխատեմ կեանքն ուսումնասիրել և նրա համաձայն առաջ ընթանալ: (Ներս է մտնում Արշաւիրը):

Արշաւիր. Բարեկ' ձեզ, վարժապետ. գալու հազար բարի, մեր գլխի, մեր աչքի վրայ:

Տիգրան. Շատ շնորհակալ եմ: Խնդրեմ, նստեք:

Արշաւիր. Ի՞նչպիսի տպաւորութիւն է թողնում մեր գիւղը ձեզ վրայ:

Տիգրան. Դեռ զգալի ոչինչ. մասամբ զգալին միայն օտարութիւնն է:

Արշաւիր. Ոսկու արժէքը ոսկերիչը կ'իմանայ: Ես կարծում եմ, որ մեր գիւղը ձեզ վրայ խուլ տպաւորութիւն կը թողնի: Ես մի քանի տարի քաղաքումն եմ անցկացրել և քաղաքի կեանքին ընտելացել. այժմ քաղաքից յետոյ

գիւղն ինձ խորթ է թւում: Եթէ ինձ այդպէս, որքան աւելի ևս ձեզ, որ մանկութիւնից քաղաքում ծնվել, մավել, մեծացել և կեանք էք ստացել: Հետզհետէ կը զգաք այստեղի կեանքի տաղտկութիւնը:

Տիգրան. Ներողութիւն, ինչ է ձեր անունը:

Արշաւիր. Արշաւիր, ձեզ ծառայ:

Տիգրան. Ոչ թէ ծառայ, այլ եղբայր: Արշաւիր եղբայր, եթէ մի քանի քեզ պէս հասկացող երիտասարդներ լինեն, որոնց հետ մենք ժամանակ անցկացնենք, այն ժամանակ կեանքը ձանձրալի չի լինի, եթէ իսկապէս լինէր էլ:

Արշաւիր. Չատ ճիշտ էք ասում. բայց գիւղում ո՞վ է տուել հասկացող երիտասարդներ: Եթէ ամեն մարդու հարցնէք, նա իրան հասկացող կը համարի և մինչեւ անգամ մտքում ուրիշների անհասկացողութիւնը կը ծաղրի:

Տիգրան. Ո՞րքան բնական կերպով էք դատում: Դուք սովորել էք ուսումնարանում:

Արշաւիր. Մի երկու տարի անցրել եմ տեղիս ուսումնարանում. սակայն զանազան ընտանեկան հանդամանքների պատճառով ստիպված եղայ կիսատ թողնել ուսումնայի բանի մէջ գլխաւոր գեր խաղաց հօրս տրամաբանական դատողութիւնը..., թէ՝ որդին պապից, կամ հօրից, լաւ չը լինի. նրանք ինչ արհեստ որ ունեցել են, նա էլ այն պէտք է բանեցնի: Եթէ տաւարած են եղել, նա էլ տաւարած պէտք է դառնայ:

Տիգրան. Իսկ դուք չե՞ք բողոքում այդ բանի դէմ:

Արշաւիր. Ինչպէս չէ. հէնց բնական խելքով հասկանալով այդ դատողութեան սխալ լինելը՝ ամեն կերպ կը ում էի դրա դէմ: Բայց ինչ կարող ես անել երբեմն ծընզական անողոք կամքի դէմ: Կան դէպքեր, որ ոչինչ չես կարող անել, եթէ մինչև իսկ կամենաս անել:

Տիգրան. Այն, այն, հասկանում եմ և զարմանում աշխարհիս վրայ, թէ մարդն առհասարակ ինչպիսի հանդամանքների մէջ է ծնվում ու զարդանում: Նա, կարծես թէ, ամուր կապանքներով կաշկանդված է: Յաճախ չես կարողանում ձեռքք բերել այն, որին ձգտում ես:

Արշաւիր. Եւ այս յիշողութիւնն ամեն անդամ դառը մտածմունքներ է ծնում իմ մտքի մէջ. դեռ սկզբներում մինչեւ անդամ արտասունքներ էր հոսեցնում աչքերիցու բայց հետզհետէ տպաւորութիւնը թուլանալով՝ անցնում է երազների շարքը:

Տիգրան. Ես ցաւում եմ այդ բանի վրայ և շատ ափսոսում: Բայց միւս կողմից ուրախ եմ, որ դուք ձեր առողջ դատողութեամբ հասկացել էք ձեր հօր արամբանութեան սխալը: Ակներև է, որ եթէ աշխարհն այնպէս ընթանար, ինչպէս ձեր հայրն է դատում, այն ժամանակ գիտութիւնը կը քարանար: Այդ հին աշխարհի փիլիսոփայութիւնն է: Ո՞վ է արհեստները սեփականացրել այս կամ այն դասակարգին: Եթէ այդպէս լինէր, այն ժամանակ մի որևէ դասակարգի մահացումով կը մահանար և նրա սեփական արհեստը: Կամ միթէ մի դասակարգի բուրուր որդիներն էլ միևնոյն ընդունակութեան տէր կը լինեն: Եթէ այդպէս լինէր, այն ժամանակ արհեստագիւնեան ծիւղերը, նրանց թւում և գիտութիւնը, ամեն անդամ չէին կազդուրվի նորանոր և թարմ ոյժերով:

Արշաւիր. Այն, այդպէս է: Չը նայելով որ յաճախ չես կարողանում ձեռքք բերել այն, որին երազում ես, սակայն չես էլ քարանում նրանում, որի մէջ քո պապերն էին խարիսափում:

Տիգրան. Ո՞հ, այժմ որքան ուրախ եմ, որ շատ ու քիչ հասկացող մի ընկեր դտայ այս տգէտների աշխար-

հում: Եւ այդ ուսումնարանի շնորհով... Այն, ուսումնարանը տալիս է մեզ գիտակցութիւն, որ լուսաւոր ջահի նման առաջնորդում է մեզ դէպի ամեն կողմ: Բայց այս էլ պէտք է իմանալ, որ եթէ մենք չենք ամփոփում մեր մէջ բնութիւնից պարգևած ընդունակութեան սաղմեր, ուսումնարանը բոլորովին չի կարող արմատացնել նորը, չեղածը. Նա միայն զարգացնում է արդէն եղածը: Ես, իբրև կեանքի պարագաների ուսումնասիրով, յայտնում եմ կարծիքս այդ տեսակէտից, որ ուսումը չի ամփոփվում միայն ուսումնարանի չորս պատի մէջ. կան մարդիկ, որոնք ամենավայրին ուսումնարանի երես չեն տեսել, սակայն այնպէս առողջ դատում են, ինչպէս և քո ամենալաւ ուսումնականը:

Արշաւիր. Այդ իհարկէ բնատուր ձիրք է:

Տիգրան. Այն, բնատուր ձիրք է, և այդ է պատճառը, որ մինչեւ անդամ միենոյն ուսումնարանի աւարտողները շատ են տարբերվում միմեանցից: Յաճախ նոյն իսկ կիսաւարտը շատ բարձր է դուրս գալիս աւարտողից: Գիտութիւնն այդ կողմից օրինակելի դասեր է տալիս մեզ: Քանի՞-քանի՞ երեւելի մարդիկ են եղել, որոնք, չընայելով՝ որ զանազան հանդամանքների պատճառով կիսատ են թողել իրանց ուսումը, սակայն շատ բարձր են դուրս եկել իրանց լիակատար ուսումնաւարտ ընկերներից:

Արշաւիր. Իհարկէ դա էլ կ'ունենայ իր պատճառը:

Տիգրան. Այն, դա էլ ունի իր հոգեբանական վերլուծութիւնը: Յաճախ ուսումնաւարտ մարդիկ, գոռողանաւով այն բանի վրայ, որ արդէն աւարտել են իրանց ուսումը, դրանով էլ բաւականանում են, հաւատացած լինելով՝ որ այդ է, վերջացաւ ուսումը, այժմ ամեն բան գիտեն, և այնուհետև սկսում են ոլիմպիական բարձրութիւնից նայել տղէտների, մանաւանդ թերուսների վրայ:

Բայց կան և այնպիսի կիսաւարտներ, որոնք, ակամայ թողած լինելով իրանց ուսումը՝ իրանց մէջ անշէջ պահում են ուսման սիրոյ կրակը, որ և խթան է լինում նրանց ձեռք բերելու սեփական ջանքերով, այսինքն՝ ինքնակը թութեան միջոցով, այն, ինչ որ չը կարողացան ձեռք բերել ուսումնարանի չորս պատի մէջ:

Արշաւիր. Բայց և այնպէս ես շատ եմ ցաւում, որ թերի թողեցի ուսումս:

Տիգրան. Այն, նայելով այժմեան տրամաբանութեան շատ ցաւալի է. այժմ մեծ նշանակութիւն են տալիս կըրթական արտօնութեանը, առանց որի, եթէ փիլիսոփայ էլ լինես, անպէտք ես բարձր պաշտօնների համար: Կեանքի հանդամանքների անյարմար գասաւորութեան պատճառով երբեմն շատ ընդունակ մարդիկ կորչում են անյատութեան մէջ, իսկ անընդունակների համար լայն ասպարէդ է բացվում:

Արշաւիր. Թողնենք այդ ամենը: Այժմ դուք այն ասէք, թէ մօտաւորապէս ինչ տպաւորութիւն են թողնում ձեզ վրայ այստեղի աշակերտները, ժողովուրդը և բնութիւնն առհասարակ:

Տիգրան. Աշակերտները, ոչինչ, ընդունակ են և համեմատաբար առողջ քաղաքի երեխաներից: Եւ այդ շնորհով այստեղի առողջարար օդի և ջրի, որոնք հաւասար այժմ կարող են մրցել լաւ մննդի հետ, երբեմն և գերազանցել: Բացի գրանից՝ բնութիւնը հարուստ է և բուսականութեամբ: Իսկ ինչ վերաբերում է ժողովրդին՝ առայժմ ոչինչ չեմ կարող ասել, քանի որ գեռ չեմ ուսումնասիրել: Ուսումնասիրութեան համար ժամանակ է հարկաւոր: Բայց այսքանը միայն կարող եմ ասել, որ կոպտութիւնն արդէն հեռուից աչքի է խփում:

Արշակուր. Մեր գիւղացիները վերին աստիճանի կողիտ
են և անտաշ: Նրանցից ոչ մէկի խօսքին նշանակութիւն չը
տար, որովհետեւ մինն այլ կ'ասի, միւսը՝ ձախ: (Կամենութէ
զնալ): Բաւական երկար խօսեցինք: Կարծեմ, ժամանակ է
դնալու:

Տիգրան. Ինչու էք շտապում:

Արշակուր. Ի՞նչ անեմ, չը շտապեմ. անհանգիստ սիր-
ութը մի տեղ երկար մնալ չի սիրում...

Տիգրան. Լաւ, ուզում էք, գնացէք. բայց ինձ շուտ-
շուտ այցելէք:

Արշակուր. Կ'աշխատեմ: Յտեսութիւն: (Դուքս է զնում):

Տիգրան. Յտեսութիւն: Խեղճ տղայ, քեզ հասկանալու
համար սրտագէտ չը պէտք է լինել: Ո՞հ, կեանք, կեանք,
ինչպէս ես դասաւորում հանգամանքները մեզ համար:
Բայց թողնեմ այդ և մի րոպէ մտքով սլանամ գէպ' իմ
ծննդավայրը: Արդեօք ինչ է կատարվում այնտեղ, հարա-
զատներիս, սիրելիներիս և մտերիմներիս շրջանում... Ահա
միմեանց յետելից պատկերանում են երևակայութեանս ա-
ռաջ ծնողներիս, սիրոյս հատոր Սաթենիկի և իմ մտերիմ
ընկեր Լեռնի գէմքերը: Բոլորն էլ թախծալի՛... Կարծես,
ինձնից մի բան են սպասում... Այն, սպասում են. հեռա-
նալիս՝ մայրս ասեց, որ շուտ-շուտ նամակ գրեմ, և հար-
կաւոր է գրել: Սակայն մի քանի օր էլ կը սպասեմ և ա-
պա կը գրեմ, որպէսզի տպաւորութիւններս լրիւ հաղոր-
դեմ. իսկ այժմ գնամ դուրս՝ մի փոքր դոզ օդ ծծելու:
(Դուքս է զնում):

ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ.

Փողոց:

Մանում են մի քանի գիւղացիներ:

Ա.. Գիւղացի. Ո՞վ էր այս անցնողը, որ մեզ պատաշ-
հեց. չը լինի թէ մեր վարժապետն է, որի մասին ասում
էին, թէ շուտով պէտք է դայ:

Բ. Գիւղացի. Այն, նա է: Մերքահանան արդէն յայտ-
նել է ինձ նրա մասին: Նա, ի միջի այլոց, ասեց, որ ինեւ-
քը գլուխն տղայ չէ:

Ա.. Գիւղացի. Հաւանական է. շատ ջահէլ է, կար-
ծես, երեխայ լինի: Նա ինչ է, որ ինչ կարողանայ դա-
տալ:

Գիւղացիներ. Այն, այն. ճիշտ է:

Գ. Գիւղացի. Ինչու էք այդպէս խօսում. խելքը ջա-
հէլութեան կամ ահէլութեան մէջ չէ: Խելօքը խելօք կը
լինի, թէկուղ ջահէլ լինի, թէկուղ՝ ահէլ: Միթէ խելօք
ջահէլին բանի տեղ չը պէտք է դնել: Ոսկին փոքր է, բայց
արժեքը՝ մեծ:

Բ. Գիւղացի. Ի՞նչ կ'ուզես, ասա. մեր գլուխը չի
մտնի:

Գիւղացիներ. Շատ ուղիղ է:

Գ. Գիւղացի. Իհարկէ չի մտնի, քանի որ մեր ըա-
հանան արդէն իր կամեցածը հալել է ձեր ականջներում:
Նրա արածն ունի իր որոշ նպաստակը և այդ հասկանալի է...

Ա.. Գիւղացի. Զը գիտեմ, ինչ կարիք կայ պաշտպա-
նելու. գիւղի մեծ մասն արդէն ընդդէմ է ուսումնարա-
նին: Երեկ այդ մասին խօսում էին գիւղամէջին: Սուտ էլ

շեն ասում. տարին տասներկու ամիս աշխատում ենք, տը-
րորվում և հաղիւ կարողանում մի երկու կոպէկ յետ դցել,
որ ահա քաղաքացու մէկը, տարին մէկ անդամ, վեր է կե-
նում, գալիս և ունեցած-չունեցածներս էլ նա է տանում:
կարծես, քիչ տանող կայ... Ախր, մեզ ի՞նչ հարկաւոր է
ուսումը. չէք տեսնում, որ մեր գիւղից քանիսները կան,
ուսոնք քաղաքում ուսում են առել և էլ չեն ուզում գիւ-
ղում ապրել։ Եթէ մեր որդիներին էլ ուսումի տանք, նը-
րանք էլ կը փախչեն քաղաք և այն ժամանակ մեր տնե-
րը լաւ կը շինվեն։ Մենք ինչ դառել ենք, մեր որդիներն
էլ թող այն դառնան. նրանք մեղանից և մեր պապերից
հօ մեծ մարդիկ չեն...

Բ. Գիւղացի. Շատ ճիշտ է ասում։ Եթէ ինձ լսէք,
նրան այստեղից կը փախցնենք։

Գիւղացիներ. Հապա էլ ի՞նչ պէտք է անել։

Գ. Գիւղացի. Ի՞նչ տարօրինակ բաներ էք ասում։
Դուք չէք ուզում ձեր երեխաներին տալ կարդարու, մի
տուեք։ Ո՞վ է ձեր ձեռքը բռնում։ Սակայն ինչու էք ար-
դելք հանդիսանում նրանց, որոնք անպատճառ ուզում են
տալ իրանց զաւակներին կարդարու։ Զէ որ մի քանիսներն
էլ կան ինձ նման։ Հօ բոլոր գիւղացիներն այստեղ չեն։
Ամեն մարդ իր համար։

Ա. Գիւղացի. Դու ինչպէս ուզում ես, այնպէս արա,
միայն մենք մեր արածը կ'անենք։ Շատ լաւ է, որ Սարի-
բէզն էլ մեր կողմն է. բաւական է մեր մի ակնարկը, որ
նա իր արածն անի։

Գիւղացիներ. Նրանից յարմարը չը կայ։

Գ. Գիւղացի. Թէ դուք և թէ նա ոչինչ չէք կարող
անել։

Ա. Գիւղացի. Ապագան ցոյց կը տայ։ (Գնում են)։

ԵՐՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ.

Սեննակում։

Ներս է մտնում ՏիգրԱնէ։

Տիգրան. Հիասթափութիւնն արգէն մօտ է. գիւղացի-
ները շատ խորթ աչքով են նայում ինձ վրայ։ Պակաս
խորթ աչքով չը նայեց և քահանան, գրոշանոց հոգաբար-
ձութեան նախագահն՝ իր արժանաւոր զինակիցների հետ։
Գուցէ նա է բոլորին այդպէս տրամադրել։ Ինչեւ իցէ. ու-
սուցիչներն իսկապէս ինքնակամ նահատակներ են՝ անմիտ-
ների ձեռքին խաղալիք դարձած... Ո՞հ, կեանքն ուզում
է յուսահատեցնել, կուլ տալ ինձ, ինչպէս նա կուլ է տուել
և կուլ է տալիս շատերին։ Բայց ոչ, նա չի կարող... մա-
նաւանդ նրան, ով ունի կամքի ոյժ։ Հեռու ինձնից, յու-
սահատութիւն, հեռու ինձնից, թուլասրութիւն... Ես, վճը-
ռել եմ գաղափարական լինել, այդպէս էլ կը մնամ. ինչ
ուզում է, թող լինի. ինչ պատահարներ ուզում են, թող
երեան գան։ Ես այդ բոլորի համար միայն մի զէնք ու-
նեմ, — այդ իմ կամքն է։ Եթէ այսպէս մենակ մնամ, գեռ-
շատ կը խորասուզվեմ տխուր մտածունքների մէջ։ (Ճա-
ռային)։ Մկրտիչ։ (Ներս է մտնում ծառան)։ Գնա Ար-
շաւրենց տուն և Արշաւրին առա, թող շուտ դայ ինձ մօտ։
Դուք ունեմ նրա հետ։

Մկրտիչ. Այս բոպէին։ (Դուրս է գնում)։

Տիգրան. Երբ մարդ յուզված է, կարդալ էլ չի կա-
րող. իսկ միայնութիւնն առատ սնունդ է տալիս մաշող
մաքերին։ Այդպիսի գէպքերում միակ փրկութիւնը մնում
է ընկեր որոնել և ժամանակն անցկացնել, էլ չեմ ասում

սպանել։ Տասնութ գարուն, տասնութ անդամ տասներկու լուսնի շրջան կեանքիցս արդէն անցել են անօդուտ։ գոնէ ինձ այդպէս է թւում։ Մինչև այդ հասակը շատերն արդէն իրանց կեանքում մի որոշ չափով անուն են վաստակել, բայց ես... Մանկութեան ինն արագ, երազ տարիներ և նոյնքան երկար ու ձիգ՝ ուսումի անխոնջ տարիներ,—ահա կեանքիս ներկայ նաւահանգիստը։ Թէև այսուհետեւ է լինելու այն, ինչ որ եմ ցանկանում, սակայն այդ էլ ծածկված է խորին մթութեան մէջ։ Շատ անդամ մեզ երեակայում ենք այն, ինչ որ իրօք չենք։ Այսօրվանից մի քայլ է միայն և ահա մենք այն չենք, ինչ որ էինք։ Սակայն ես այսօր մի փոքր լաւ չեմ զգում ինձ... Առողջ գէպքում մարդն ամբողջ բնութիւնը, կարծես, իր մէջ է ամփոփում, բայց հիւանդ գէպքում... Ինձ այնպէս է թւում, թէ և հիւանդ եմ, և հիւանդ չեմ։ Ի՞նչ կը լինի այն ժամանակ, երբ յաւիտենական քնի մունետիկը յանկարծ վրայ հասնի ինձ այս պանդիստութեան մէջ... Ո՞հ, դառը մտքեր... Յանկարծակի ինձ տանջում է այն միտքը, որ ես, ով դիտէ, կարող է պատահել, օտար երկրում փշեմ շունչս,—հեռու իմ պապերի ննջած տեղից։ Մի այլ կողմով պանդիստութիւնն այնքան սարսափելի չէ։ Գուցէ այստեղ, օտար երկրում, անյայտանայ գերեզմանիս հետքն անդամ, խունկ չը ծխվի և ոչ իսկ արցունք թափակի նրա վրայ,—օրհնվելուց զուրկ լինի նա. բայց իղձերս, ձգտումներս, իդէալներս, ցնորքներս, օդային ամրոցներս, ցանկութիւններս... Ո՞հ, ես կը խելագարվեմ. ուր կը կորչեն դրանք։ Երկինք, երկիր, աշխարհի տարրեր, թէև աըլվէք նրանց, թնդ թռչեն, գնան, անմահ հոգիների նման թափառեն անսահման յաւիտենականութեան մէջ, մինչև որ կարողանան նորից ներս մտնել հողեղէն կարծված մար-

մինների մէջ։ Մենք, կեանքի գերիներս, չենք կարողանում գնահատել նրանց. և ժամանակներս վատնում ենք անօդուտ բաների վրայ։ Մենք, յիմարներս, որ երբեմն հարիւրներ ենք ծախսում առանց խնայելու և մտածելու, յաճախ կոպէկների համար մեր ողջ կեանքն ու ապագան ենք թունաւորում, մեր մարդկային արժանապատութիւնն արատաւորում և կոպէկային մարդ գառնում։ Կեանքի ստորաքարշութիւնն, առատաձեռն շռայլութիւն և ժլատութիւն,—էլ ուրիշ ոչ մի նպատակ... Մեր արարքները չը կշռող և մեր պակասութիւնները չը տեսնող... բայց ամենից սոսկալին՝ ուրիշի գժբախտութեան մէջ մեր երջանկութիւնը որոնող... (Ներս է մտնում ծառան)։

Ծառայ. Ասեց, որ հիմա կը գամ։

Տիգրան. Շատ լաւ, գնա։ (Ժառան զնում է)։ Տեսնենք, որքան կը տեի այդ հիման։ Անհամբեր սպասելուց վատ բան չը կայ։ Ի՞նչպէս են անում սիրոյ ժամադիրները։ Քիչ չեն վսասում մեր կազմվածքին այդպիսի գէպքերը։ Սիրու խաղաղութեան սահմանից դուրս կատաղի թշնամի է մարմնին։ Մարդկանց կեանքը սովորականից երկար կը տեի, եթէ հոգեկան անդորրութեան մէջ անցկացնեն իրանց կեանքը։ Սակայն կեանքն այնպիսի պատկեր է ներկայացնում, որ յիմար մարդեկն են ամենախաղաղը. զգայուն սիրտը և խելացի միտքը միշտ պարաստ են յուզվելու։ (Ներս է մտնում Արշաւիրը)։

Արշաւիր. Բարի երեկոյ, պ. Տիգրան։ Պարտականութիւնն ստիպում է առանց կանչելու գալ ձեզ մօտ. սակայն ես գործ ունէի։

Տիգրան. Նախ և առաջ ընկեր և ոչ պ. Տիգրան, և ապա միայն գիտակից եղիր իմ դրութեան։

Արշաւիր. Ես խոյս չեմ տալիս ձեզ մտերիմ լինելուց։

սակայն եթէ ամեն հանդիպածին մենք անպայման այդպէս կոչենք, այն ժամանակ կարող է պատահել, որ շատ հիասթափութիւնների մէջ ընկենք. կամ կարող է պատահել, որ դուրս գայ մէկը և մեղ հէնց սկզբից իրան ընկեր չ'ուզենայ ճանաչել:

Տիգրան. Բայց ինչ կ'անես, որ մաշտու սիրտը միայնութեան դէպքերում ընկերներ է որոնում, որոնց ընտրութիւնը թողնում է ապագային: Նա, կարծես, այդ դէպքում այնպէս է վարվում, ինչպէս հոտոտելիքը գարնանային ծաղիկների հետ: Շատ դէպքերում ընկեր բառը միայն մեր մտքի յուշատետրում գոյութիւն ունի: Արտերի միութիւնը շատ դժուար է, իսկ անջատումը՝ շատ հեշտ: Միութեան մասին շատերն են խօսում, բայց քչերն են իրագործում:

Արշաւիր. Ազգերի կեանքն էլ այդ է ցոյց տալիս: Ես շատ ու քիչ կարդացել եմ և այն համոզմանը եկել, որ ազգերի կեանքն անհատների կեանքի արտադրութիւնն է, արտացոլման հայելին:

Տիգրան. Այն, այդպէս է, բայց մասամբ: Ծիածանի վրայ փայլում են ոչ բոլոր գոյները: Երկրագնդի մանրիկ, բայց մեծ աշխարհների մէջ քանի՛՛քանի՛ գաղտնի ողբերգութիւններ են կատարվում, որոնց պատկերացնելու համար բանաստեղծների թիւն անգամ բաւական չէ: Այդպիսի դէպքերում հարեանցի համադրական համախմբումները մեծ դեր են կատարում: Երբեմն միայն հանճարեղ բանաստեղծի միտքը կարող է թափանցել այդ աշխարհների խորին ծալքերի մէջ, կամ սաւառնել նրանց վրայ: Փոքր ազգերի բանաստեղծներն էլ փոքր կը լինեն: Նրանց կեանքը դեռ ընդունակ չէ համաշխարհային սրտագէտ հանճարները ծնելու: Թոյլը երբ է հաւատացել իր ոյժերին:

Արշաւիր. Այդտեղ էլ ճակատագրի իշխանութիւնն է երկում...

Տիգրան. Սակայն մեծ սիրագործութեան անընդունակը մեծ չարագործութեան ընդունակ կը լինի և քանդող ոյժն ստեղծագործող ոյժին կը գերակշռի: Դրանց հեղինակներն էլ հանճարներ են, բայց բացասական հանճարներ և ազգերի երեսծեծանքը: Եռանդի յորդութիւնը դորձագործիւն է պահանջում: Եւ այսպէս, եթէ մենք շարունակելու լինենք, ազգերի մեղքն ուսուցիչների վրայ կը բարդենք, իսկ ուսուցիչների մեղքն՝ ազգերի վրայ: Բնութիւնը կապակցութիւններ շատ է սիրում, — աջող, թէ անաջող: Երբ ասողին լսող չը լինի, ասողն ինչ անի: Սակայն միւս կողմից ծուլութիւնն ընդարձակում է իր տիրապետութիւնը: Նախնիքների տոկունութիւնը թոռների համար յեշելիք պէտք է լինի: Ծնուեսական կեանքի պայմանները խլում են հոգու խաղաղութիւնը, հոդին խլում է մտածմունքները, իսկ մտածմունքները խլում են ժամանակը: Պայմանների բարդութիւնը խլում է մեր ոսկի ժամերը և անխղճօրէն դարերին յանձնում, իսկ սրանք էլ յանձնում են յաւիտենականութեան: Թէև երբեմն բռնկվում է մարդկային բողոքն այդ անխղճութեան դէմ, բայց իզուր: Թոյլի հառաջանքներն էլ, սպառնալիքներն էլ ուժեղի չափանդութեանն են արժանանում:

Արշաւիր. Դուք մոռանում էք մարդկային հրէշների անխղճութիւնը:

Տիգրան. Իսկ դուք էլ մոռանում էք, որ ճշտութեամբ պէտք է ըմբռնէք իմ ասածը: Ո՞րտեղից է առաջանում տնտեսական կեանքի պայմանների բարդութիւնը, ո՞վքեր են նրանց բարդողները և վերջապէս ովքեր են խաղաղ կեանքի թելի կծիկը իմձողները: Աշխարհի սկզբից մինչև

այժմ երկնքի կամարները դղրդում են հառաջանքների ովակիանոսից։ Սակայն մարդկային սրտերը կարծր են քարից։ Մարդը քարասիրտ արարած է. այսպէս պէտք է ասել՝ նըրան կենդանիներից զանազաններու համար։ Շահասիրութիւնը չքայնում է ամեն ինչ. նա կարծրացնող գօրութիւն ունի։ Մարդկային յարաբերութիւնները նրա ազգեցութեան տակ կեղծ են և առերես։ Ամեն դեպքում շահն է նկատի առնվում,—այ շահ, ձախ՝ շահ, առաջ՝ յետ՝ շահ։ Ո՞ւր է նախնի դարերի անկեղծութիւնն ու անշահասիրութիւնը և դէպի միմեանց ունեցած հաւատը։ Դար դարի վրայ զանազանութիւն ունի։ Դեռ մտքի խեղկատակները տքնում են ապացուցանել, որ մեր դարը լուսաւորված դար է և դիտութիւնը շատ առաջ է գնացել։ Այն, շատ առաջ է գնացել որոդայթալարութեան մէջ։ Ո՞հ, աւելի լաւ է չը լինել զգայուն սրտի տէր. ապա թէ ոչ՝ չի կարելի դուրս գալ թշուառութեան ովկիանոսից։ Ի՞նչպէս համբերես, երբ վերջին ծայր հարուստը քամում է որբերի վերջին արտասունքը։ Այն, լոել, լոել և լոել...

Արշաւիր. Գուել ինձ դլորեցիք դառը մտածմունքների
աշխարհու

Տիգրան. Մենք վաղուց ենք գլուխել այդ աշխարհը:

Արշակունյաց պատմութեացիք նրան:

Տեսակը որ խառնես, ձեռքերդ կ'այրի:

Տիգրան. Աշակերտական վերջին նստարանից արդէն ես մտածում եմ այդ մասին անհանգիստ կերպով և մինչեւ անդամ ձեռնարկել եմ. սրանք միայն հատվածներ են այդ աշխատութիւնից: Սակայն դեռ չեմ վերջացրել: Զանգան արգելառիթ հանդամանքներ թոյլ չեն տալիս կեան-

Քի ճանապարհորդի առաջ ձիւնի և ժայռի հիւսեր ընկնելը սովորական բան է։ Շատերը կարծում են, որ մենք անտարրեր ենք։ Յաճախ մեր ներքին լաւ կողմերը չեն երեսում։

Արշակունյաց թագավորության պատմությունը հայության պատմություն է:

Տիգրան. «Տանջանքի ծով». Իսկ բնաբանն՝ «Առանց տանջանքի կեանք չը կայ»:

Արշակիր. Զի՞ կարելի տեսնել:

Տիգրան. Կիսատ չենքը վատ տպաւորութիւն կը թողնի: Ես արդէն կտորներ արտասանեցի, որոնցից կարող էք եղակացնել բովանդակութիւնը: Վերջացնելուց յետոյ՝ ես պատրաստ եմ կատարել ձեր խնդիրը: Ամեն ջանք գործ եմ դնում վերջացնել, սակայն երբեմն տրամադրութիւնս, երբեմն առողջութիւնս և երբեմն ժամանակս չեն ներում: Տրամադրութեանս եղած դէպքում, որին մարդիկ սովորաբար ոգևորութիւն կամ մուսայ են կոչում, զարթնում է իմ մէջ ոգևորութեան նշոյլը, և ես, կարծես, առնում եմ կենդանութեան մի շունչ. այնուհետեւ մտքերս տեղատարափ թափվում են, միայն ձեռքի արագութիւն է հարկաւոր նրանց տողերի մէջ բանտարկելու համար: Թափվածը թափված է: Այդ միջոցին իմ մի ժամկի կատարած աշխատանքը հարիւրապատիկ շատ է անտրամադիր ժամանակի կատարածից: Իմ կարծիքով իւրաքանչիւր մարդու ընջ չափով բանաստեղծ է, որովհետեւ նա ունի վշտի, ուրախութեան և զայրոյթի զգայուն սիրտ. սակայն իսկական բանաստեղծ նա է, որ զգում է և արտայայտում իր տպաւորութիւններն աւելի մեծ չափով:

Արշակի իշխանի մարդ է ձեր հերոսը:

Տիգրան. Հերոսս, տանջանքի ծովում շատ տեղերլուց
յետոյ՝ սաւառնում է ողիների աշխարհը, նրանց հետ բա-

րեկամութիւն հաստատում և նրանց օգնութեամբ կամեանում է լուծել կեանքի հանելուկը։ Առայժմ բարձած սայւը հանդիպել է ժայռին։

Արշակուր. Լաւ, թողնենք այդ։ Այժմ դուք այն ասէք, թէ ինչպէս են անցնում ձեր օրերը։

Տիգրան. Շատ վատ. այսօր էլ լաւ չէի զգում ինձ, փոքր ինչ հիւանդ էի։ Բացի դրանից, չը նայելով որ ես իսկապէս երազների չեմ հաւատում, բայց հանգստութիւն չ'ունեմ նրանցից։ Գիշեր չի լինում, որ նրանք խմբերով չը շրջապատեն ինձ։ Երբեմն այնպիսի սարսափելի բաներ եմ տեսնում, որ երկիւղից վեր եմ թռչում տեղից։ Շատ անգամ զգում եմ, որ այդ ամենը երազ է և երազում իսկ ինձ սիրտ եմ տալիս չը հաւատալ այդպիսի բաների։ Բայց որքան էլ չը հաւատաս, նրանցից շատերն իրագործվում են և մենք, նախապաշարված՝ հաւատում ենք նրանց։ Ո՞չ մի մարդ ազատ չէ նախապաշարմունքներից, մինչև անգամ և գիտնականները։ Որովհետև մեզ սկզբից դաստիարակում են նրանց մէջ և ապա միայն սկսում ջրել։ Պատի հիմքը վերին մասից ամուր է։ Ես փոքրուց լսել էի, որ երազում ինձոր տեսնելլ հիւանդութիւն է, խաղող տեսնելն՝ արտասունք։ Դրանց ես երեկ գիշեր երազում տեսայ, այսօր անմիջապէս կատարվեց, — ես հիւանդացայ և ծածուկ արցունքներ թափեցի։ Հիմա տատանվում եմ՝ հաւատալ, թէ չը հաւատալ երազներին։ Նրանք սաստիկ կապ ունեն մեր երեակայութեան և սրտի հետ։ Նրանց տրամադրութիւնից առաջանում են և նրանց տրամադրում։ Ես տանջվում եմ անքնութիւնից, մնացածն էլ երազներն են լրացնում։ Քունը մօտ չի գալիս աչքերին, երբ նրանց գլուխը շատ է մտածում։ Սակայն երբեմն հակասարար մօտ է վազում վշտաբեկին։ Իսկ նա սերտ բարեկամ է անհոգին։ Փոքր

ժամանակ ես շատ քնկում էի, ինչպէս լինում են առհասարակ բոլոր փոքրերը։ Զարմանում էի հօրս վրայ, թէ նա ի՞նչպէս է ուշ քնում, շուտ զարթնում։ Երբեմն, երբ նա փորձում էր ինձ անմտարար դրան վարժեցնել, ինձ համար դրանից սարսափելի բան չը կար։ Երբ քունս դար՝ ինձ թագաւորութիւն անդամ առաջարկէին, ես անքուն չէի մնայ. այնպէս էլ, երբ քաղցր քնած էի, չէի զարթնի, մինչև որ քունս չ'առնէի։ Միայն այժմ, երբ արգէն մտազբաղ և բազմահող եմ դարձել, զգում եմ, որ հայրս իր արշինով էր չափում ինձ։ Բոլորն ասեցի, բայց մի բան մուացայ. քիչ չեն անհանդիստ անում մեզ գիշերաշրջիկ, երազների սիրահար ոգիները, մեռելների ուրուականները։ Երբ գալիս է գիշերը, նրանց թագաւորութեան շրջանը, նրանք պղտորում են մեր միտքը և ձուկը որսում։

Արշակուր. Իսկ ցերեկները նրանք չեն արջում։

Տիգրան. Նրանք մեր հակապատկերն են ներկայացնում. ցերեկը քնում են, գիշերը արջում։ Կամ գուցէ նրանք էլ մեզ պէս տանջվում են անքնութիւնից։ Նրանց նրանք էլ մեզ պէս տանջվում են անքնութիւնից։ Նրանցից շատերն անհամբեր սպասում են գիշերին, որ շտացից շատերն անձկալիների և անձկալիների մօտ։ Իմ հրեշպեն իրանց սիրելիների և անձկալիների մօտ։ Նա սիրող էլ շտապում է ինձ մօտ, նա, որին ես անշափտակում էի և նա՝ ինձ եւ որի մահի պատճառը ես եղայ։ Ո՞հ, չեմ կարող մոռանալ այդ։

Արշակուր. Ի՞նչպէս։

Տիգրան. Ահա այսպէս։ Մենք փոքր ժամանակ միախին էինք պառկում։ Այդ բղխում էր ոչ այնքան մեր ծնողների անմտութիւնից, որքան նրանց աղքատութիւնից։ Եթէ ոչ այդ լինէր և ոչ այն, քոյր ու եղբայր սիրում էինք պառկել միմեանց մօտ։ Պատահեց, որ մի օր ես հիւանդացայ կել միմեանց մօտ։ Պատահեց, որ մի օր ես հիւանդացայ կել բկացաւով։ Մնողներիս անմտութիւնն այստեղ ես սաստիկ բկացաւով։

րեաց։ Մենք չը զատվեցինք իրարից։ առաջվայ պէս միւմեանց մօտ էինք քնում։ Դրա հետևանքն այն եղաւ, որ ես առողջացայ, իսկ նա, այդ գեղեցիկ երկնային հրեշտակը, վարակվեց ինձնից այդ ցաւով և միւս աշխարհը դլորվեց... Այն օրից արդէն նա ինձ հանդիստ չի տալիս իր գիշերային այցելութիւններով։ Ո՞հ, գիտես, թէ որքան փարթամ և գեղեցիկ էր նա։ Շատերը զարմանում էին նրա վրայ։ Ութ տարեկան հասակում թողնում էր տամնը՝ չորս տարեկանի տպաւորութիւն։ Հանդիստ ոսկորներիդ, կենակից անցորդ։ հանդիստ թող կեանքիս մնացորդ։ Ո՞հ, պատանեկական կեանքի յիշողութիւններ։ Քաղցրութեան հետ դառնութիւնը միշտ խառն է։

Արշաւիր. Այդ դառը յիշողութիւններն իմ մտքի մէջ էլ արձագանք տուին։

Տիգրան. Անկեղծ սիրան ընդունակ է դիմացի սրտի տրամադրութեանը ենթարկվել։ Թէև երբեմն գէպերն ըստ երևյթին մոռացվում են, բայց նրանք այսող գէպերում վերարտադրվում են։ Բազմահասոր գլքեր կ'ունենայի, եթէ կեանքիս բոլոր գէպերը գրի անցնէի։ Մինը չը վերջացած՝ միւսն է պատահում, իւրաքանչիւրն իր նախորդին քօղարկում։ Շատ անդամ մտածում եմ այդ բոլորը գրի անցնել, սակայն չը գիտեմ, որտեղից սկսել և որտեղ վերջացնել։ Եթէ տեղն ու տեղը չես արձանագրում գէպերը քո յուշատերում, մի քանի բոպէ ևս և ահա նա աշխատում է մոռացութեան քօղով քօղարկվել։ Երբեմն նըրանց ասում եմ. «Կացէք, այ գէպեր, ինչու էք փախչում։ Ես ձեզ պէտք է գրի անցնեմ և, աւանդելով յետնորդ գարերին՝ ձեզ անմահացնեմ»։ Եւ ապա դիմում եմ հանճարների ոգիներին. «Ո՞վ մեծասքանչ հանճարային ոգիներ, մի մերժէք մի անդամ ևս ընդունել ձեր մէջ, որ-

քան շատ, այնքան լաւ։ Կեանքի բարօրութիւնը մեծամասնութեան մէջ է։ Դուք, մենավաճառութեան ընդդէմ ոգիներդ, այնքան վեհ էք, որ ատելի կը լինեն ձեզ նանիր բաները, որոնք գժառութիւնների բուն պատճառներն են։ Այն, նանիր մարդիկ նանիր բաների յետեկից կ'ընկնեն, բարձր մարդիկ՝ բարձր բաների։ Զուր կը լինի շեղել մարդկանց այդ շաւղից։ Մեղաւոր կը լինի նա, ով կ'աշխատի բամբասասէրին իր ճանապարհից դարձնել։ Իւրաքանչիւր մարդմի արհեստ ունի և այդ արհեստն էլ պէտք է բանեցնի։ Եւ նրանք են միշտ հետաքրքրվում ուրիշների նիստ ու կացով, ովքեր յայտնի են իրանց տգիտութիւնով։ Նրանք էլ պակաս տգէտ չեն և նոյնպէս յանցաւոր, ովքեր սիրով ականջ են դնում դրանց։ Ո՞հ, ես շատ խօսեցի, որով և շատ յոգնեցի։ Գիշերից էլ արդէն բաւական անցել է։ Արքաղաները, ցերեկի այդ մունետիկները, մի քանի անդամ արդէն կանչեցին։ Ժամ է հանդստութեան, որից յետոյ ես դարձեալ պէտք է գնամ շատախօսութեան...»

Արշաւիր. (Վեր է կենում տեղից)։ Ես վաղուց էի ուզում գնալ, սակայն ձեր այդ լաւ խօսքերը և ձեզ մենակը թողնելը կամքիս յաղթեցին, քունս ճնշեցին։

Տիգրան. Կեանքի մէջ սիրած և հետաքրքիր բաները յաճախ մեր քունը խլում են։

Արշաւիր. Դէհ, բարի գիշեր։ Վաղը ճաշեց յետոյ մենք դարձեալ կը տեսնվենք։ (Դուքս է զնում)։

Տիգրան. Ձեզ լոյս բարի Անշնւշտ։ (Ինքն իրան)։ Դէհ, սրանից յետոյ ժամանակ կորցնեն աւելորդ է. պէտք է գնալ և հանդստանալ։ (Դուքս է զնում)։

ՉՈՐՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ.

Մի տափարակ:

Երևում են գիշերապահները:

Ա. Գիշերապահ. Դեռ շատ կայ լուսանալու:

Բ. Գիշերապահ. Մօտ է ժամը, շատ հեռու չէ:

Գ. Գիշերապահ. Դուք, որ նոր էք յանձն աւել գիշերապահնութիւնը և այդքան անհանդիստ էք, հապաղի պահպանութիւնը ինձ նման չորս-հինգ տարի շարունակ պահպան լինէք, ինչ կը վիճի այն ժամանակ ձեր դրութիւնը:

Ա. Գիշերապահ. Տարիների ընթացքում մարդը հաշտվում է իր դրութեան հետ և այլևս այնպէս անհանդիստ չի լինում, ինչպէս սկզբում:

Բ. Գիշերապահ. Անհանդստութիւնն այդ դէպքում մեղադրելի չէ, որովհետև ուղեղը կանոնաւոր դրութեան մէջ չէ. իսկ այս էլ նրանից է, որ ցերեկը գիշեր ենք անում, գիշերը՝ ցերեկ:

Գ. Գիշերապահ. Գիշերն անտանելի է դառնում աւելի ևս այն դէպքում, երբ մի անսովոր բան չի պատահում: Ի՞նչ տեսաք ձեր շրջած տեղերում:

Ա. Գիշերապահ. Շների հաջոց լսեցի, բայց ոչինչ չը տեսայ:

Բ. Գիշերապահ. Վարժապետն այս գիշեր շատ նստեց. Բոլոր ճրագները հանգել էին, միայն նրանն էր վառ: Դեռ մոլոր ճրագները հանգել էին, միայն նրանն էր վառ: Դա կամ այս ժամը կամ անթարեն, կամ անթարթ աջքերով յաճախորդների սպասեն: Այդ է պատճառը, որ դործի ժամանակ նրանցից շատերի քունը տանում է. եթէ չի էլ տանում, բայց ե-

Գ. Գիշերապահ. Միայն այս գիշեր չէ. նա միշտ երկար է նստում՝ աւելի կամ պակաս չափով:

Ա. Գիշերապահ. Կարգացողներն առհասարակ երկար են նստում:

Գ. Գիշերապահ. Այս գիշեր նա աւելի երկար նստեց, որովհետև Արշաւիրը նրա մօտ էր: Մի չորրորդ, բայց կէս գիշերապահ էլ նա չէ: Մեզ անսովոր բան է թուում, որ գիշերապահ էլ նա է: Միայն գիշեր ճրագները հանգչում են, մէջտեղում միայն մի ճրագն է մնում վառ, բայց քաղաքում սովորական է: Վարժապետը քաղաքացի է, քաղաքներում, ուր կեանքը զարգացած է, մարդիկ առհասարակ աւելի ուշ են քնում, քան թէ գիշերում, որտեղ օրվայ ծանր աշխատանքից ծեծված ու ջարդված՝ շուտ քուն են մտնում:

Ա. Գիշերապահ. Բացի դրանից՝ քաղաքացիները, իշարկէ ոչ բոլորը, ցերեկը, ճաշից յետոյ, սովորաբար քը նույն են, հետեւապէս գիշերը պէտք է շատ նստեն: Մեր վարժապետն էլ այդ սովորութիւնն ունի:

Բ. Գիշերապահ: Քաղաքներում զվարճութեան տեղեր շատ կան, ուր մարդիկ գիշերը, դործից բացարձակապէտ այդ աղատ միջոցին, ժամանակ են անցկացնում, երբեմն և անքուն գիշերներ լուսացնում:

Ա. Գիշերապահ. Հապա միւս օրն ինչպէս են գնում դործի:

Բ. Գիշերապահ. Յոդնած ուղեղով և թուլացած մարմնով:

Գ. Գիշերապահ. Այդպիսի դէպքերում անտանելի է այնպիսի ծառայողների դրութիւնը, որոնք օրնիբուն պէտք է դործ կատարեն, կամ անթարթ աջքերով յաճախորդների սպասեն: Այդ է պատճառը, որ դործի ժամանակ նրանցից շատերի քունը տանում է. եթէ չի էլ տանում, բայց ե-

ուանդը կորչում է, ուտելու և խօսելու ախորժակը փակ-
վում և ման գալը դադարում, իսկ ընդհակառակը բարկա-
նալու ախորժակը բացվում:

Ա. Գիշերապահ. Այդպիսի դրութիւն կարող է պա-
տահել և ճաշից յետոյ քնողների հետ:

Բ. Գիշերապահ. Ինչու չէ: (8ոյց տալով): Բայց նա-
յեցէք, արևելքն արդէն սկսել է լուսաւորվել: Շուտով եր-
կինքը կը բոցավառվի:

Գ. Գիշերապահ. Այս, լուսաբաց է. երկինքը շառա-
գունում է: Այդ է պատճառը, որ աքաղաղները գործ են
դնում իրանց վերջին ճիղը գիշերի փախուստը մարդկու-
թեանն աւետելու: (Դնում են):

(Մտնում են Ա. եւ Բ. Գիշերացիները եւ Սարիբէզը):

Սարիբէգ. Ճիշտ էք ասում այդ բոլորը, ինչ որ ման-
րամասն պատմեցիք: Ճիշտ է և այն, որ մեծամասնութիւ-
նը մեր կողմն է:

Ա. Գիշերացի. Խաբելու կարիք չ'ունենք:

Բ. Գիշերացի. Վերջապէս կենդանի վկաներ կան: Բո-
լորի յոյսը քո վրայ է:

Սարիբէգ. Այն ժամանակ մնում է մեր անելիքը:

Ա. Գիշերացի. Ի՞նչպէս պէտք է անել և որտեղից
սկսել:

Սարիբէգ. Այդ իմ գիտենալու բանն է:

Բ. Գիշերացի. Մեր մասնակցութեան պէտք չ'ունես:

Սարիբէգ. Մասնակցութեան կարիք չեմ զգում:

Ա. Գիշերացի. Բայց կարելի է իմանալ, թէ ինչ պէտք
է անես:

Սարիբէգ. Առայժմ աչ: Մօտաւոր միտքն արդէն ծա-
գեց գլխումս, սակայն նրա իրագործելու ճանապարհների
մասին գեռ պէտք է մտածել: Բայց կարող է պատահել,

որ մինչեւ մեր մտածելը՝ կեանքն իր անելիքը ցոյց տայ:
Ա. Գիշերացի. Խնդրում եմ, գոնէ այդ միտքը յայտ-
նիր:

Սարիբէգ. Դեռ չը սկսած գործի մասին մնապարձու-
թիւնն աւելորդ է, մանաւանդ որ կարող է յայտնվել և
այն ժամանակ նպատակին հասնելը դժուար կը լինի, մին-
չեւ իսկ կը խափանվի:

Ա. Գիշերացի. Միթէ կասկածում ես մեր մասին. քեզ
դրաւական չէ մեր այսքան տարվայ հաւատարիմ բարեկա-
մութիւնը:

Բ. Գիշերացի. Աւելորդ է կասկածանքը: Ասա, ես ևս
խնդրում եմ:

Սարիբէգ. Լաւ, որ շատ էք խնդրում, կ'ասեմ: Աւելի
շուտ կանանց պէտք է դաղտնիքներ չ'ասել, քան թէ տղա-
մարդկանց, այն էլ ոչ բոլոր մարդկանց:

Ա. Գիշերացի. Դէհ, շնոր արա, ասա:

Սարիբէգ. Դիտէք, խօսքը մեր մէջ մնայ...

Բ. Գիշերացի. Մի երկարացրու:

Սարիբէգ. Առայժմ այսպէս եմ մտածել: Ես կ'աշ-
խատեմ մի կերպ ծանօթանալ վարժապետի հետ Արշաւրի-
միջոցով, քանի որ նա է նրա մօտ գնում, գալիս: Յետոյ
նրանց կը տրամադրեմ մի խնջոյք կազմել. երբ այդ խըն-
ջոյքը գլուխ կը գայ, այն ժամանակ գինին առիթներ կը
դանի մեր գործն սկսելու: Եւ մինչեւ վերջն այնպէս հըմ-
տութեամբ պէտք է տանել գործը, որ չը կարծեն, թէ մը-
տածված բան էր:

Ա. Գիշերացի. Յետոյ:

Սարիբէգ. Այդ էլ էք ուզում իմանալ: Հենց այդ է,
որ անորոշ է: Զի կարելի ասել, թէ ինչպէս կը սկսվի և
ինչպէս կը վերջանայ:

Ա. Գիւղացի. Բայց և այսպէս դու մի բան կարծելիս կը լինեմ:

Սարիբէգ. Մօտաւորապէս այսպէս եմ մտածում, որ նրա պէս մարդկանց կողտութիւնը դուր չի գայ. բաւական է իմ կողմից մի թթու խօսք, որ նա վիրաւորվի: Այն ժամանակ ես կը տաքանամ, նա կը տաքանայ, բանը վերջապէս բռունցքի կը հասնի:

Ա. Գիւղացի. Յետո՞յ, յետո՞յ:

Սարիբէգ. Յետոն այն է, որ ես նրան, ինչպէս քո կամքն է, մի լաւ կ'ուտեցնեմ. իսկ նա այդ անպատճութիւնը չի կարող տանել և դլուխ կ'առնի, կը դնայ. մենք էլ կ'աղատվենք նրա ձեռքից:

Ա. Գիւղացի. Բայց դուցէ գործն այլ կերպ վերջանայ:

Սարիբէգ. Դրա մասին չեմ կարող դուշակել:

Բ. Գիւղացի. Համաձայն եմ, բայց դրանով ոչինչ չի լինի. նա դատարանի կը դիմէ:

Սարիբէգ. Քիչ գործեր կան, որոնք առանց դատարանի են վերջանում:

Ա. Գիւղացի. Լաւ, առայժմ գեղեցիկ միտք է: (Հեռուից երեսում է Վաղինակը):

Սարիբէգ. Բայց գեղեցիկն աւելի ևս այն է, որ դուք հիմա գնաք: (Ցոյց տալով Վաղինակին): Տեսէք, վաղինակը գալիս է. թնդ նա չիմանայ, թէ մենք խորհուրդ նակը գալիս է. թնդ նա չիմանայ, թէ մենք խորհուրդ նակը անում: Շտապեցէք և ասածներս դաղտնիք պահինք անում: Հետո գալիս է անդուր լինի դուրս հեցէք, այնպէս որ ունելիքով անդամ դժուար լինի դուրս քաշել:

Ա. և Բ. Գիւղացիներ. Բոլորովին անհնդ կաց: (Գլուխում են):

Սարիբէգ. (Ինքն իրան): Լաւ եղաւ. Վաղինակը չը տե-

աւ նրանց: Նա ուղիղ այստեղ է գալիս: Կարելի է և նրանով սկսել գործը... (Մտնում է Վաղինակը):

Վաղինակ. Բարի լնյս, Սարիբէգ:

Սարիբէգ. Աստծու բարին, Վաղինակ: Ո՞ւր ես գընում:

Վաղինակ. Հենց այսպէս դուրս եկայ իմանալու, թէ ինչ կայ գիւղամէջում:

Սարիբէգ. Ես էլ նոյնպէս: Այսօր սովորականից շատ վաղ եմ զարթնել: Տեսնում ես, ի՞նչ պայծառ և գեղեցիկ առաւօտ է. օդն էլ սառը և թարմ: Լաւ եղանակներին մարդ աշխատում է շուտ վեր կենալ:

Վաղինակ. Ճիշտ է: Կարծես, մէկն ասում է. «Վեր կաց»:

Սարիբէգ. Իսկ անձրևային և ձիւնային եղանակներին մարդ ուզում է տանից դուրս չը դալ, այլ միալար քնել ու քնել:

Վաղինակ. Մեր սիրտը կապ ունի բնութեան հետ. երբ երկինքը ծիծաղում է, մեր սիրտն էլ է ծիծաղում. երբ տիրում է, նա էլ է տիրում:

Սարիբէգ. Ո՞ւր է այս մեր Արշաւելը. մի քանի օր է, չերեսում:

Վաղինակ. Գուցէ գլուխը խառնված է:

Սարիբէգ. Ի՞նչ խառնված է. ասում են, որ մեր նոր ուսուցչի հետ լաւ գնալդալ է սարքել:

Վաղինակ. Ի՞նչ կը լինի որ. օտար տղայ է, գուցէ չերեսում մենակ թողնել նրան:

Սարիբէգ. Դու ծանօթ ես նրա հետ:

Վաղինակ. Ես ծանօթ չեմ. բայց տեսել եմ հեռուից: Լաւ տղայ է երեսում. արժէ ծանօթանալ նրա հետ:

Սարիբէգ. Ի՞նչու չէ, կարելի է: Մենք այսպէս կ'անենք.

Արշաւրին կը կանչենք և խորհուրդ կ'անենք նրա հետ, որ այսպիսի մի գեղեցիկ օր վարժապետին վերցնի, գնանք, ուրախութիւն անենք գիւղից հեռու, մի գեղեցիկ պարագում:

Վաղինակ. Շատ լաւ միտք է. դրանով համ կը ծառաթանանք ուսուցի հետ, համ էլ լաւ ուրախութիւն կ'անենք: Ես շատ եմ սիրում այսպիսի գեղեցիկ օրերում և կանաչաւէտ տեղում լաւ ընկերների հետ ժամանակ անց կացնել, ինչպէս մի քանի անդամ ինձ պատահել է: Պէտք է շտապել, քանի դռու բնութիւնը չի զրկվել իր զգեստից և կեանք պարզեղ ջերմութիւնից:

Սարիբէգ. Եթէ համաձայն ես, ես այսօր և եթ Արշաւրին կ'ասեմ, որ այս շաբաթ գնում ենք քէփ անելու: Տեսնեմ, ինչ կ'ասի:

Վաղինակ. Ի՞նչ պէտք է ասի. ոսով, գլխով ուրախ կը լինի: Նա եթք է մեր խօսքից դուրս եկել. լաւ ընկերի համար մեռած է:

Սարիբէգ. Այս անդամ էլ կը փորձենք: (Անցնում է Ժիգրանը): Ահա ուսուցիչը գնում է: Գրքեր կան թե տակ: Երեսում է, որ ուսումնարան է գնում:

Վաղինակ. Այս, արդէն ժամանակն է: Նա միշտ սուվորական այս ժամին շտապում է ուսումնարան: Ասում են, որ բոլորովին յետ չի ընկնում դպրոցից. շատ արի է իր գործում: Աշակերտները շատ գոհ են. ասում են, որ սա մեր անցեալ տարվայ ուսուցից տամապատիկ աւելի լաւ է: Նախկին ուսուցիչը շատ էր ծեծում և մինչև իսկ հայշ հոյում աշակերտներին. իսկ սա՝ բոլորովին: Նախկինը աչքի էր ընկնում նաև իր վերին աստիճանի ծուլութեամբ և անհոգութեամբ: Տեսնում ես, ինչ խոնարհ և համակրելի

տղայ է երեսում: Նրա ամեն մի շարժումը, կարծես, չափած ու ձեւած լինի:

Սարիբէգ. Դուրսը շատ էլ լաւ է, բայց ինչ իմանաս, թէ ներսն ինչ կայ:

Վաղինակ. Զես լսել, որ մեր քահանան ասում է. «Քայլք ոտից և գոյնք երեսաց յայտ առնեն զմարդն»:

Սարիբէգ. Բայց դու էլ չնս լսել, որ նոյն քահանան նրա համար ասել է, թէ մի բան չի:

Վաղինակ. Առհասարակ մի մարդ մէկին լաւ է թըսում, միւսին՝ վատ, այնպէս որ իւրաքանչիւրի մօտ մի տեսակ է երեսում: Օրինակ՝ ես այն չեմ քեզ մօտ, ինչ որ եմ Արշաւրի մօտ և նա այն չէ ինձ մօտ, ինչ որ է քեզ մօտ: Բայց եթէ այդ էլ չը լինի, իմացիր, որ մեր քահանան նախանձից դրդված է այդպէս ասում: Ո՞ր եկողին է նա լաւ ասել: Ես այս կարճ խելքովս պարզ հասկանում եմ, որ տգէտը երբէք չի ուզի, որ իր կողքին դիտունն էլ լինի: Եւ վերջապէս ինչ են ուզում դրանով հասկացնել: Վերջըն այնպէս կ'անեն, որ այս դիւդն էլ ոչ մի խելքը գըլխին վարժապետ չի գայ: Զէ որ ձայնը տարածվում է ամեն տեղ: Զես յիշում, երբ մենք Արշաւրի հետ միասին քաղաքում աշխատում էինք, հեռաւոր գիւղերում պատահած գէպերը բերանից բերան ասում էին: Զէ որ այժմ ամեն բան գրվում է լրագրներում, ընդհանուր մարդկութեան այդ նամակներում և ցրվում աշխարհի բոլոր կողմերը: Առաջ այդ բաները չը կային. ով ինչ անէր, անէր: Այժմ եթէ մի վատ բան անես, ամբողջ աշխարհի առաջ կը խայտառակվես:

Սարիբէգ. Դէհ, ասա, պէտք է վախենալ այդ լրագրներից...

Վաղինակ. Իհարկէ պէտք է վախենալ. բայց ճշմարիտ և

աղնիւ մարդիկ բոլորովին չեն վախենում: Եթէ դու մի յանցանք չես գործել, ինչից պէտք է վախենաս:

Սարիբէգ. Դէհ, դատարկ բաներ են այդ բոլորը: Ի՞նչ լրագիր, ի՞նչ բան: Ո՞վ է կարդում: Կարդացողներն են շատ, թէ չը կարդացողները: Մարդիկ, երբ որ պարապ են և ոչինչ չունեն գրելու, սկսում են գլխներից դուրս տալ, կամ միմեանց բամբասել: Աւելի շուտ բամբասանքների աղբիւր է, քան թէ լրագիր:

Վաղինակ. Անտեղի ես խօսում:

Սարիբէգ. Իսկ դու տեղին ես խօսում: Շատ լաւ, դու այն ասա, եթէ դու մի վատ բան արած լինես, կ'ուզեմ, որ գնան, ուրիշ տեղ ասեն:

Վաղինակ. Եթէ արել եմ, թող ասեն. չեմ կարող արդեւել: Չը կայ մի ծածուկ բան, որ չը յայտնվի: Ամենից լաւն այն է՝ ինչու եմ անում, որ ինչու ասեն:

Սարիբէգ. Քիչ է պատահում, որ մարդ սխալվում է: Եւ դու կարող ես ասել, որ ես երբէք չեմ սխալվել, կամ չեմ սխալվի:

Վաղինակ. Ո՞վ կարող է այդպիսի բան ասել: Մենք, բոլորս, սխալական մարդիկ ենք, աւելի կամ պակաս չափով:

Սարիբէգ. Եթէ մենք, բոլորս, կարող ենք սխալվել, հետեւապէս լաւ չի լինի, որ այսօր ես քո սխալը ծածկեմ, վաղը դու իմը: Աշխարհը փոխ է:

Վաղինակ. Դու ինչեր ես խօսում: Աւելի լաւ չէ, որ մէկի յանցանքն իմացվի, որպէսզի ուրիշներն զգուշանան և նոյն յանցանքը չը գործեն: Եթէ յանցանքները ծածկվեն, կարող է պատահել, որ միենոյն յանցանքը ես էլ գործեմ, դու էլ: Էլ ուր մնաց զգուշութիւնը:

Սարիբէգ. Էհ, ես համաձայն չեմ քեզ հետ:

Վաղինակ. Ո՞վ է ստիպում, որ համաձայն լինես:

Դուցէ քեզ պէս մտածողներ հազարաւորները լինեն: Աշխարհում ամեն յարդ իր խելքով է կառավարվում: (Հեռուից երեւում է Արշաւիրը):

Սարիբէգ. Լաւ, թողնենք այդ: (Ցոյց տալով Արշաւիրին): Նայիր, ահա գալիս է Արշաւիրը. յայտնենք նրան մեր մտադրութիւնը:

Վաղինակ. Շատ լաւ կը լինի: Թող գայ, մօտենայ: (Մօտենում է Արշաւիրը):

Արշաւիր. Բարե՛ ձեզ:

Սարիբէգ. Այ, Աստծու բարին: Մենք հէնց քեզ էինք սպասում:

Վաղինակ. Բարով եկար: Անունդ չը տայինք, չէիր գայ: Ասում են, որ եթէ մէկը մէկի անունը տայ, միւսի ականջը ձայն կը տայ. ուր մնաց, որ երբեմն կը գայ:

Արշաւիր. Ի՞նչ կայ այդպէս, ասե՞ք, շուտով. պատրաստ եմ ես:

Սարիբէգ. Ինչպէս մինչեւ այժմ վստահ ընկերներ, որ ասած խօսքս գետին չի ընկել, ես առանձնապէս իմ կողմից խնդրում եմ, որ դու ամեն միջոց գործ գնես, որ այս շաբաթ ես, դու, Վաղինակը, մեր նոր ուսուցիչը, որի հետ դու մեզ պէտք է ծանօթացնես, և մի քանի ուրիշ յօժարակամ երիտասարդներ, եթէ միայն ցանկութիւն կը յայտնեն, մի կանաչ պարտէզում մի լաւ ուրախութիւն կազմենք և զվարճանանք, Վաղուց է, որ ուրախութիւն չենք արել: Այս անդամ պէտք է ուրախանամ դժվածի նման, այնպէս, ինչպէս որ հորթը վազում է գէպ' իր մօր ստինքները:

Արշաւիր. Ես պատրաստ եմ ամենայն յօժարութեամբ, միայն բանը մնում է մեր ուսուցչին. Եթէ նա եկաւ, այն ժամանակ կարող է գլուխ գալ, հակառակ դէպքում՝ ոչ:

Վաղինակ. Ես կարծում եմ, որ սիրով կը գայ. որով

Հետեւ պէտք է պանդխոռութիւնն սպանել: Յամենայն դէպուրակը նրան. կը լինի՝ լաւ, չի լինի՝ դարձեալ լաւ:

Արշաւիր. Շատ լաւ. իմ կողմից ասել, նրա կողմից կատարել, իսկ ձեր կողմից էլ գլուխ բերել:

Սարիբէզ. Մենք պատրաստ ենք, միայն շնուռ իմաստում մեզ: Եթէ կարող ես, հէնց այսօր:

Արշաւիր. Կ'աշխատեմ, որքան ոյժերս կը ներեն:

Սարիբէզ. Դէհ, էլ չեմ ասում. աշխատիր, որքան կարող ես, շուտ կամքի բերել: Ես ուզում եմ գնալ: Յանութիւն:

Վաղինակ. Պաց, ես էլ եմ դալիս. էլ կանդնելու կարեք չը կայ: (Արշաւիրին): Յանութիւն:

Արշաւիր. Յանութիւն: (Սարիբէզն ու Վաղինակը զնում են): Իսկ ես էլ դնամ Տիգրանի մօտ: Երէկ դիշեր նրան խօսք տուեցի: Ի դէպ. նրան կ'ասեմ այդ մասին: (Գնում է):

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ.

Անեակոս:

Ներս է մտնում Մկրջիջը:

Մկրտիչ. Ի՞նչ շահ այսքան տարվայ ծառայ լինելուց իրօք և ոչ մի: Գուցէ հէնց ծառայ էլ մեռնեմ... իդուր ես այս ստոր կեանքը գերադասեցի դաշտային ազատ աշխատանքից: Այնտեղ մեր աշխատանքը կախված է բնութեան քմահաճոյքից, իսկ այստեղ՝ մարդկանց. բայց բնութիւնն այնքան անողորմ չէ, որքան մարդիկ... (Ներս է մանում Տիգրանը): Քո դրութեան մասին խօսելու համար անդամ ժամանակ չեն տալիս:

Տիգրան. Արշաւիրը չ'եկամ:

Մկրտիչ. Ո՞չ:

Տիգրան. Հիմա պէտք է եկած լինէր:

Մկրտիչ. Եթէ եկած լինէր, այստեղ կը լինէր:

Տիգրան. Ի՞նչ ես բառախաղութիւնների յետեկց ընկեր: Չը լինի, թէ ուզում ես խելացնորվել: (Ներս է մըտնում Արշաւիրը):

Մկրտիչ. Ահա և նա: Հիմա ես աւելորդ եմ: (Դուրս է գնում):

Տիգրան. Ի՞նչո՞ւ ուշացաք: Հէնց նոր ձեր մասին էինք խօսում:

Արշաւիր. Ժամանակը թւաբանական ճշտութեամբ հօ չէինք որոշել: Գիւղի մէջ մի երկու երիտասարդի հետ խօսում էինք. այդ պատճառով ուշացայ: Այդ երիտասարդները, որոնց հետ, նրանց խնդրանքով, ես ձեզ կը ծանօթացնեմ, խնդրեցին ինձ յայտնել ձեզ, որ այս քանի օրը մի լաւ խնջոյք են կազմակերպելու. կը բարեհաճէք արդեօք դուք ևս մասնակց լինել:

Տիգրան. Ո՞րտեղ է լինելու:

Արշաւիր. Կանաչաղարդ պարտէզներից մէկում:

Տիգրան. Ե՞րբ:

Արշաւիր. Այս շաբաթ:

Տիգրան. Ո՞ր օրը:

Արշաւիր. Այն օրը, որ դուք կը բարեհաճէք:

Տիգրան. Իհարկէ լի օր չեմ կարող. մնում են կիրակի և տօն օրերը:

Արշաւիր. Հէնց այս կիրակի կարող էք:

Տիգրան. Տեսնենք:

Արշաւիր. Էլ տեսնելու բան չը կայ. հաստատ խօսք, որ մարդկանց իմացնենք: Համաձայն էք:

Տիգրան. Լաւ:

Արշաւիր. Ուրեմն կանչեք ծառային, պատուիրենք նրան, որ գնայ, նրանց ասիւ Հիմա նրանք անհամբեր կը լինեն: Իսկ մենք գնանք զբօսնելու:

Տիգրան. Լաւ կը լինի: (Ժառային): Մկրտիչ:

Մկրտիչ. (Դրսից): Համմէ:

Տիգրան. Ազի այստեղ: (Ներս է մտնում Մկրտիչը):

Տիգրան. (Արշաւրին): Պատուիրեք, ինչ որ պատուիրելու էք:

Արշաւիր. Մկրտիչ, գնա Սարիբէդի և Վաղինակի մօտ և նրանց ասա, որ խնջոյքը թնդ հէնց այս կիրակի կաղմեն: Տիգրանը համաձայն է: Հասկացար:

Մկրտիչ. Այս:

Արշաւիր. Իսկ մենք գնում ենք զբօսնելու. բայց դու գնա, չը մոռանաս:

Մկրտիչ. Հէնց հիմա կը գնամ: Զեմ մոռանայ:

Արշաւիր. (Տիգրանին): Գնանք: (Տիգրանը եւ Արշաւրը դուրս են գնում):

Մկրտիչ. Ի՞նչ շուտ և անկեղծ հաւատացող է մեր վարժապետը: Երեք օրվայ մի ծանօթ... և մի քանի անծանօթներ հրաւիրում են նրան քէֆի, նա համաձայնում է գնալ առանց տատանվելու: Աստուած տայ, որ վերջը չը փոշմանի: Երևում է, որ իսկապէս դեռ երիտասարդ է: Բայց ի՞նչ եմ ասում. կարելի է ե' երիտասարդ լինել, ե' խելօք: Մեղադրելի չէ. նա, որպէս քաղաքացի, կրթված և անփորձ երիտասարդ, այնպէս որ կեանքի հանդոյցներին անծանօթ, բնական է, որ անկեղծաբար վերաբերվի դէպի ամենքը: Բացի դրանից՝ նա, իբրև պանդուխտ, կը կամենալ անշուշտ ուրախանալ: Նրա մաքուր և անարատ հոգուն դեռ անծանօթ են մեղ պէս դռեհիկների անտաշ

վարմունքը, ստախօսութիւնը, խաբերայութիւններն ու խարդախութիւնները, որոնք աւելի տղէտներին են յատուկ, քան թէ դիտուններին: Մոռացայ յիշել և բամբասանքները: Նա դեռ չը դիտէ, որ այստեղ այն անկեղծութիւնն ու մտերմութիւնը չի կարող գտնել, ինչ որ քաղաքում: Զը դիտէ և այն, թէ ինչպէս են վարվել իր նախորդների հետ: Մենք, ծառաներս, որ երբեմն կարող ենք աւելի խելօք դատել, քան թէ մեր տէրերը, զուրկ ենք պատւից. ոչ ոք բանի տեղ դնող չը կայ մեր խօսքերը, հետեւապէս աւելորդ են և մեր դատարկաբանութիւնները: Բայց ես ուշացայ: (Դուրս է գնում):

ՎԵՅԵՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ.

Գերեզմանատանը:

Մտնում են Տիգրանը և Արշաւրը:

Արշաւիր. Այդպէս ուրեմն. կը նշանակի, այս շաբաթ, կիրակի օրը, երբ դուք ազատ կը լինեք դասերից, մենք մի լաւ ուրախութիւն պէտք է անենք:

Տիգրան. Չուրախացողին ի՞նչ ուրախութիւն: Եւ միայն այս չէ կեանքի մէջ, որ մենք ստիպված ենք առերես կատարել:

Արշաւիր. Ես այս տեսակէտից եմ ցանկանում, որ այդ ուրախութիւնը տեղի ունենայ. առաջին՝ որ տղաներ են, թնդ ձեզ հետ ծանօթանան և երկրորդ՝ որ դուք մի քանի րոպէ մոռանաք ձեր պանդխտութիւնը:

Տիգրան. Ես որ մոռանամ, դժուք ինչ կ'անէք:

Արշաւիր. Մենք ի՞նչ ունենք, որ ի՞նչ անենք:

Տիգրան. Միթէ նա է պանդուխտը, որ իսկապէս պան-

դուխտ է. իսկ աշխարհի ժամանակաւոր հիւրերը պահանջուխտները չեն:

Արքալիր. Այդ իր կարգով, բայց մենք վերցնում ենք համեմատական չափով:

Տիգրան. Ի՞նչ կը լինէր, որ այդ համեմատական չափն ամեն տեղ և ամեն գէպքում գոյութիւն ունենար: (Ցոյց տալով զերեզմանները): Ահա միայն այս մուլթ բնակարանների անխօս բնակիչները չեն մտածում այդպիսի բաների մասին: Նրանք կատարելով իրանց դերը կեանքի բեմի վըրայ՝ վաղուց իջել են այստեղ ընդ միշտ հանգստանալու: Նրանք յետ են տուել այն, ինչ որ ստացել էին: Եւ միթէ մշտնչենաւոր անմեռ նիւթին մենք կարող ենք պարտապան գտնվել: Եթէ այստեղ հանգչողների ոդիներն ունենային լեզուներ, այն ժամանակ կը պատասխանէին իմ տուած հարցերին. ասում են, որ մեռելների հոգիները դիտեն այն ամենը, ինչ որ կատարվում է այս աշխարհում:

Արքալիր. Ուրեմն այդ է պատճառը, որ նրանք հանգիստ չեն տալիս կենդանի մարդկանց:

Տիգրան. Դեռ ոչ ոք այն աշխարհից չի վերադարձել այս աշխարհը, որ մի հաստատ բան ասէր: Առայժմ խարեբանների դատողութիւններով են կերակրվում: Եթէ այնպէս լինէր, որ այն աշխարհի բնակիչները նորից մեռնէին և այս անգամ մեր աշխարհն ընկնէին, այն ժամանակ նըրանք գուցէ մեզ մի հաստատ բան ասէին: Գուցէ ասէին նոյնպէս, թէ մահն ինչից է առաջանում իսկապէս: Զէ՞ որ նոյն նիւթն է, ինչպէս գետնի տակ, այնպէս էլ նրա վրայ. թող գոյութիւն ունենայ: Ինչպէս որ հասարակ արհեստական մեքենայի գործունելութիւնը խանգարվում է զանազան արդելառիթ հանդամանքներից, այնպէս էլ բնական գեղեցիկ մեքենայի գործունէութիւնն է խանգարվում զա-

նազան հանգամանքներից, որոնք եթէ չը պատահէին, թերեւ երկար, շատ երկար, շարունակվէր այդ գործունէութիւնը: Թերեւս և մահ տեղի չ'ունենար: Ո՞վ կարող է երաշխաւորել, որ մարդը չի մեռնում վնասակար կերակուրներից,—հիւանդու և ընդհատված կեանք պարունակող մըսից, խմիչքներից, խարդախված կերակրանիւթերից և մթերքներից, վնասակար օդից և ջրից, սաստիկ ցրտից, շոգից և քամուց, քաղցից, ծարաւից, կեղտառութիւնից, անքնութիւնից, յոգնածութիւնից, պարապութիւնից, բարկութիւնից, յուղմունքից, երկիւղից, տիսրութիւնից, յուսահատութիւնից, մտածմունքից և այլն, և այլն: Եթէ սրանք և սրանց նմանները գոյութիւն չ'ունենային, այն ժամանակ մարդիկ թերեւս անմահ լինէին. բայց հաստատ է, որ երկար կ'ապրէին:

Արքալիր. Այդ ճիշտ է, որ ամեն մէկը մի պատճառով է մեռնում:

Տիգրան. Ահա մի նիւթ, որ տակաւին կարօտ է ուսումնասիրութեան: Ո՞ւր են այն անմահական ինձորները, խոտերն ու ջրերը, որոնք իբրև թէ կեանք են տուել, հէքեաթների ասելով, հիւանդներին: Եթէ ճիշտ լինէին հէքեաթները, հետևապէս և այդ անմահական հիւթերը, այն ժամանակ գեռ մինչեւ հիմա էլ կ'ապրէին այդ անձերը: Այդ ինչպիսի անմահական հիւթեր էին, որ մարդիկ դարձեալ մահկանացու մնացին: Գուցէ եղել են և մոռացվել: Եթէ եղել են, ուր են անմահացած մարդիկը. Եթէ չեն եղել, ինչու են հնարել մեր նախնիքը: Երկի հնարել են երանց միիթարելու համար: Սակայն ինչ էլ որ լինի, բայց կայ բոյսերի մէջ կեանք երկարացնող, աւելի կամ պակաս կենդանութիւն տուող գործութիւն: Եթէ կը դայ ժամանակ,

որ կը գտնեն այդ զօրութիւնը, սակայն մենք չենք ապրի մինչև այդ օրը:

Արշաւիր. Քանի գնում է, մարդիկ կարճ են ապրում, դուք ասում էք, երկար ապրեն...

Տիգրան. Կարճ են ապրում, որ երկար ապրեն: Բայց ինչու են դիւղին այսքան մօտ և բարձր շինել դերեղմանատունը. չ՞ որ վնասակար է այդ:

Արշաւիր. Որպէսզի մեռելները չը վախենան:

Տիգրան. Կատակի ժամանակ գտաք:

Արշաւիր. Հապա ի՞նչ ասեմ, որ չը գիտեմ: Հեռու որ տանեն, մեռելները կը տիրեն: Բայց դրանից՝ այդ յաւիտենական տները թուղ այդպէս մօտ լինեն մարդկանց, որպէսզի նրանք միշտ տեսնեն ու մտաբերեն իրանց վերջին ապաստարանները և էլ անիրաւութիւն չը դործեն:

Տիգրան. Եւ էլ չեն գործի... Զեր կատակը ձեզ դառնայ: Բայց ես կ'ասեմ, որ դերեղմանների մշտական այցելուների պատճառով է այդպէս մօտ:

Արշաւիր. Բայց դրանից՝ գիւղն զբօսավայր չ'ունենալով՝ նա նրա տեղ էլ է ծառայում: Այդտեղ են գալիս երեկոյեան վերջալոյսին գիւղը հեռուից դիտողներն ու մաքուր օդ ծծողները, որոնց համար ամուր գերեզմանաքարերը նստարանների տեղ են ծառայում: Եւ որովհետեւ մեր այդիներն ու պարակները գիւղից աւելի հեռու են, քան թէ սա, այդ պատճառով մենք այստեղ չնորհ բերինք զբօսնելու: Տեսնում էք, ի՞նչ հիանալի տեսարան է ներկայանում ձեր առաջ այստեղից:

Տիգրան. Թո՞ղ այս լուռ վայրերի լուռ բնակիչները լի կրծքով վայելեն այդ միակ միիթարութիւնը և թո՞ղ ոչ ոք ձեզանից չը նախանձի նրանց, որովհետն բոլորիդ էլ հաւասարաշափ բաժին է տրված:

Արշաւիր. Ինչու պէտք է նախանձել, քանի որ այժմ էլ վայելում ենք. այստեղ են վարատվում մեր տխուր մըտածմունքները և սրտի դառն զգացմունքները:

Տիգրան. Եւ այդ գուցէ մեռելների կախարդական զօրութեամբ... Բայց կեանքի մէջ հակասութիւններ շատ կան, ինչպէս և այս դէպքում. այստեղ երբեմն մարդ փարատվում է դառը վշտերից, երբեմն սուզվում նրանց անտակ ծովի մէջ: Կարելի է, մեռելները հաւասարակշռութիւն են սիրում. ուրախութեան ժամանակ ուրախութեան հակապատկերն են ցոյց տալիս, տիրութեան ժամանակ՝ տիրութեան հակապատկերը:

Արշաւիր. Մենք շատ ենք սիրում փիլիսոփայական հարցերի մէջ խրվել. բայց կարող ենք խակապէս խրվել և էլ գուրս չը պրծնել:

Տիգրան. Կեանքը փիլիսոփայութիւն է և փիլիսոփայդառնալու համար պէտք է ունենալ հոգեբանական նուրբ հոտառութիւն և լուրջ դիտողութիւն: Կարելի է մինչև անդամ չ'առանձնանալ առանձնասենեակում, այլ ուսումնասիրել փիլիսոփայութիւնն առօրեայ կեանքում: Կեանքի դասախոսութիւնը կատարվում է բացօդեայ և ոչ թէ խեղդող ու ձնշող նեղ մթնոլորտում, որով մենք կորցնում ենք մեր կեանքի կէսը: Այդտեղ չեն տիրապետում ակամայ յուղմունքները: Ես շատ եմ պատահել կեանքի փիլիսոփաների, որոնց մարդիկ վարձատրել են ծաղր ու ծանակով և հեգնական ժպիտով: Նրանք գանդատվել են ինձ, որ մարդիկ յիմար են և նախանձու. Նրանք ծաղրել գիտեն տեղի-անտեղի, վատնել գիտեն իրանց ոյժերն անտեղի. մարդկանց մատնել գիտեն անյայտութեան և դառը, շատ դառն, աղքատութեան: Նրանք սիրում են, որ մարդիկ ապրեն ցնցոտիների մէջ, որ ծիծաղեն նրանց վրայ միշտ, անվերջ: Սիրում են

տեսնել մարդկանց միշտ անյօյս, փոխանակ տալու նրանց խրախոյս։ Այսպէս շարունակ նրանք վատնում են իրանց լաւ ոյժեր, ասելով՝ որ մենք չ'ունենք լաւ գործողներ։

Արշակուր. Այդ ճիշտ է։ Եթէ մարդիկ մէկին միշտ ծաղրելու սովոր են, խելօք բան էլ ասի, դարձեալ կը ծաղրեն։

Տիգրան. Սովորութիւնը սիրում է միշտ միակողմանի վերաբերվել։

Արշակուր. Եւ որովհետև մենք սիրում ենք մի հարցեց գէպի միւսն անցնել, այժմ անցնենք այն հարցին, թէ նվազեր են այստեղ ննջում։ Գոնէ կ'ասեմ իմ ճանաչածներին։ (Ցոյց տալով)։ Ահա, տեսնում ես, այն նոր հողակոյտը, որ գեռ քար չը կայ քաշած վրան։ Գնանք առաջ։ (Քնում են)։ Նա իննամսեայ գերեզման է, որի տակ թաղվածը զո՞ն գնաց մի սէրի և որի տապանագիրը պէտք է լինի։

ՍԻՐՈՅ ԶՈՅ.

«Կեանքիս մէջը ես մի օրիորդ սիրեցի,
Որին ազատ սէրս յայտնել ուզեցի։

Բայց նա անգութ վերաբերվեց իմ սէրին,
Որ շուտ յանձնեց ինձ այս տիսուր սև քարին։»

Տիգրան. Շատերը երանի են տալիս մեռնողներին, թնդ երանի տան և սրան...

Արշակուր. Այս փոքրիկ հասարակ սև քարն էլ մի երիտասարդ զինուորի է, որը չորս երկար ու ձիգ տարիներ հեռաւոր օտարութեան և անտանելի նեղութեան մէջ և խիստ կարդապահութեան տակ տեգերելուց յետոյ՝ գեռ նոր էր վերադարձել իր սիրասուն հայրենիք, գէպ՝ իր կարօտակէզ ընտանիք, որ շուտով հողին յանձնեց իր մաշված և հիւանդոտ մարմինը։ Բայց գիտես, ինչ էր նա այստեղ, զինւորութիւնից առաջ, — մի հաղւագիւտ առողջ և գե-

ղեցկադէմ պատանի, որին ամենքը տալիս էին երանի։ Տիգրան. Աւրեմն էժան չի նստել նրան չորսամեայծանը նեղութեան լուծը։ Չորս տարին քիչ ժամանակ չէ. քանի՛ քանի՛ կեանքեր կը գան ու կ'երթան և կը մաշվեն այդ ժամանակամիջոցում։ Նեղութեան տարիները կրկնապատիկ են երեսում։ Բայց օրերը ծանր են թւում, քան տարիները. նրանք անցնելով՝ երկար են թւում, տարիներ կազմելով՝ կարճ են երեսում։ Եւ որովհետև մենք միշտ սովոր ենք անցած նեղութիւնները մոռացութեան տալ, գրա համար էլ տարիները կարող են մեղ թեթև երեալ։ Այդ է պատճառը, որ ամեն տեսակ անցած օրերին մենք տալիս ենք երանի։ Իսկ օրերը, վշտի և նեղութեան այդ աղբեկները, ծանր են թւում, մինչև անգամ տարիներից էլ ծանր։ Թնդ օգնութեան գան այդ ապացուցելու նեղ ու մութ բանտի բնակիչները, սիրելիների և անձկալի հայրենիքի կարօտակէզ սրտերը, հապճէպ գործերի անհամբեր սպասողները, սիրոյ ժամագիրները և հիւանդութիւնից տանջվողները։

Արշակուր. Իսկ այն կարմիր քարն էլ պատկանում է մի սեաբախտ արհեստատորի, որ իր արհեստում չ'ունէր նմանը մեր ամբողջ գիւղում։ Նա հիւսն էր արհեստով և բարձր՝ խելքով։ Նրա փոքրիկ ձեռքերն այնպէս նուրբ, հմտօրէն էին պատրաստում իրերը, որ մարդ մնում էր ապշած, զարմացած։ կարծես, երկնքից լինէր վէր եկած։ Նա պարապ մնալ երբէք չէր սիրում, ամեն մի ըսպէն թանգ էր գնահատում։ Գործը նրանից անպակաս էր միշտ, ամեն մի պատուէր կատարում էր ճիշտ։ Եւ մեր շըջակայծանօթ գիւղերը նրան էին տալիս իրանց պատուէրը։ Բայց երկար չը տեսց ժպիտն այդ բախտի, նա վերջն ունեցաւ վիճակ անբախտի. մի օր շըջակայ գիւղը գնալիս՝ անօրէնի-

անգութ սուրը նրա կեանքին վերջ է տալիս: Նրա տապա-
նագիրը, գերեզմանների այդ համառօտ պատմութիւնը,
կարդացէք: (Կարդում է):

«Ո՞վ անցւորական, խնդրեմ ինձ նայես,
Թշուառ մարդկանցից մէկը եղայ ես,
Որ զաւակներիս թողնելով անհայր՝
Մտայ այս տիսուր գերեզման խաւար»:

Տիգրան. Անբախտ ծնվել ենք, անբախտ էլ կը մեռ-
նենք: Եթէ նա այստեղ կենդանի մարդկանց համար էր
բան շինում, այժմ էլ թող մեռածների համար շինի. դու-
ցէ նրանց էլ են հարկաւոր լաւ արհեստաւորներ: Ուրիշ
արհեստաւորների համար չեմ կարող երաշխաւորել, բայց
հաստատ գիտեմ, որ նրանց հարկաւոր են լաւ որմնադիր-
ներ և ատաղձագործներ:

Արշաւիր. Այս փոքրիկ սիրուն քարի տակինն էլ մի
գեռափթիթ մարդկային բողբոջ էր, որ դեռ չը ծաղկած՝
այն աշխարհ դնաց:

Տիգրան. Մենք միշտ սովոր ենք այդպէս ասելու: Ի՞նչ
օգուտ, հէնց դնենք, թէ նա ծաղկէր էլ և պտուղ էլ տարչ
Այն, լաւ է եղել, որ նա այս յանցաւոր աշխարհի դառ-
նութիւններին անծանօթ է մեռել: Այս անցաւոր աշխար-
հում որ մահկանացուն ունի կեանք՝ երջանկութեամբ լե-
ցուն: Եւ միթէ մարդիկ այնքան յիմար են, որ թողնեն,
ուրիշները երջանիկ կեանք վայելեն...

Արշաւիր. Այդպէս մի ասէք: Կեանքի խեղկատակները
ձեզ յոռետես և մարդատեաց կ'անւանեն:

Տիգրան. Ես ասում եմ այն, ինչ որ կայ: Կարող են
ուրիշները չը տեսնել այդ: Միթէ մենք, ուրիշներից եր-
կեւզ կրելով չը պէտք է արտայայտենք մեր սեփական դի-
տողութիւններն ու համոզմունքները մարդկանց և աշխար-

հի մասին: Ամեն մարդ աղատ է այդ իրաւունքի մէջ: Թէ և
մարդու շատ դէպքերում կաշկանդված է և չի կարող իր
կարծիքներն աղատ արտայայտել, բայց կան դէպքեր, երբ
դուք նրանց կարծիքներ արտայայտելու իրաւունքը չէք
կարող խլել:

Արշաւիր. Զգնյշ կացէք. կ'ասեն, ուրեմն ինքն այն-
պէս է, որ այդպէս է ասում:

Տիգրան. Շատ բան կարող են ասել, ամեն ասածի չը
պէտք է հաւատ ընծայել: Միթէ մենք չենք կարող գողին
գող ասել, ինչ է որ, նա էլ մեզ կ'ասի:

Արշաւիր. Լսել էք ժողովրդական այն առածը, որ
ասում է. «Սոխ չես կերել, սիրտգ ինչու է մրմռում»:

Տիգրան. Եթէ այդ տեսակէտից դատելու լինենք, այն
ժամանակ որևէ յանցանքի մէջ արդարն ու մեղաւորը շատ
դժուար կը լինի որոշել: Եւ իսկապէս դժուար է: Ամեն
մարդ իր տեսակէտից է բացատրում դէպքերը, այսինքն՝
այնպէս, ինչպէս որ իրան է ձեռնտու, մանաւանդ այն
դէպքում, երբ երրորդը ներկայ չի եղել, անցքն առանց
վկայի է կատարվել: Եթէ աւելացնենք սրա վրայ և խղճի
բացակայութիւնը, այն ժամանակ ամեն ինչ կատարեալ կը
լինի: Առհասարակ մարդկանց մէջ նկատվում է միմեանց
ձգելու յատկութիւն, այդ է պատճառը, որ նրանց մէջ չը կայ
հաւատ դէպի միմեանց: Մարդկային յարաբերութիւնների
մեծ մասը կեղծ է և առերես: Մարդիկ լաւ են առաջին
ծանօթութեան և վերջին հրաժեշտի ժամանակ: Մնացած
ժամանակ նրանք երեւան են գալիս իրանց իսկական պատ-
կերով... նրանք աշխատում են միմեանց կուլ տալ: Վայն
եկել է և խեղճերին տարել. նրանք անողորմաբար զօհ են
գնում անգութ զօրեղներին: Եւ այդ անկուշտ կանումը
վառք ու պարծանք է համարվում: Էլ ում վրայ զօրեղները

ցոյց տան իրանց ոյժը՝ կեանքը մրցութիւն է սիրում, առաջընթացութեան հարվածները եղը որ ընկաւ, դանակաւորները կը շատանան։ Կան դէպքեր, երբ արդարութիւնն այնպէս է ոտնակոխ լինում, նրա ձայնը խեղդվում, որ խեղճ մեղաւոր ճանաշված անմեղը մնում է շլւարած, և մինչեւ անգամ ինքն էլ է զարմանում, որ միթէ, իրաւ, այդչափ մեղաւոր է նա։ Մարդիկ զահազան շահերով միանում են միւսներին տապալելու համար. էլ մի վնտրիր այդտեղ ընկերական անկեղծ յարաբերութիւն։ Մարդիկ, որոնք միմեանց չեն հաւանում ներքուստ, որոշ դէպքերում միանում են արտաքուստ։ Թո՞ղ այս ինչն ընկնի. այդ է նըրանց հարկաւոր, էլ ուրիշ ոչ մի բան, չը նայելով որ նա ոչինչ չի արել, բոլորովին անմեղ է։ Եւ քանի գնում է, օր օրի վրայ, մարդկանց յարաբերութիւններն աւելի կեղծ են դառնում։ Գիտութիւնները, կարծես, մարդկանց անհաշտ են դարձնում՝ նրանցից ստանաներ ստեղծելով։

Արշաւիր. Ես ժողովրդի մէջ էլ յաճախ լսել եմ այդպիսի կարծիք։ Միամիտ մարդիկ աւելի վարվեցող են և հիւրնկալ։

Տիգրան. Կան մարդիկ, որոնք ուրացողի դերը յանձնառած՝ երբեմն սրան են յարում, երբեմն նրան։ Նա, որ այսօր մէկին վատարանում է միւսի մօտ, վաղը միանում է առաջինի հետ և վատարանում երկրորդին։ Կան մարդիկ էլ, որոնք շատ գեղեցիկ դիտեն դլուխ պահել և մէշտեղից օդավել։ Երբ որ ձին ու ջորին կուտում են, մէջտեղում էշի բախտն է բանում։ Այդպիսիները շատ զգոյշ են իրանց վարմունքի և խօսքերի մէջ։ Թէև սրտանց մէկին չեն համակում, բայց երեսանց համակում են։

Արշաւիր. Աշխարհն էլ դրանց է պատկանում. կեանքը իսկապէս դրանք են վայելում։

Տիգրան. Իշային աշխարհը... Այն, խոնարհութիւնը լաւ բան է, միայն խոնարհութեան դէպքերում. սակայն հացի խնդրի համար վիզ ծռելն ու դողդողալը, սեփական կաշու երկիւղից արդարութիւնը ոտնատակ տալը և ստըրակական կեանք վարելը, —այս բոլորը մահացու մեղք է։ Պէտք է ապրել ճշմարտութեամբ՝ ճշմարտութեան համար։ Շատ դէպքերում հարկաւոր է ամենեւին նկատի չ'առնել այն միակողմանի կարծիքը, թէ՝ աշխարհում խոնարհութիւնը կը տանի։ Այն, կան դէպքեր, որ աշխարհում խոնարհութիւնը կը տանի, բայց կան դէպքեր էլ, որ խոնարհութեամբ ընթացողի քունը կը տանի։ Խոնարհութիւնը պէտք է լինի կեղծաւորութիւնից դուրս՝ օրինաւորութեան և ճշմարտութեան սահմաններում։

Արշաւիր. Հեռու մի գնացէք։ Այս գերեզմանն էլ մի բամբասամէր մարդի է, որ իր կեանքում սիրում էր միշտ բամբասամքով պարապել։

Տիգրան. Մրանից՝ նրան, նրանից՝ սրան, —այս է այդպիսիների բան։ Փոքրիկ ու տգէտ ազգութիւնների մէջ դըրանցից շատ կան։ Մատնութեան առաջին աստիճանը բամբասանը է։ Հիւանդակազմ ազգերի հիւանդոտ անդամները շատ են սիրում բամբասանքով պարապել։ Ինչպէս որ մարդն առանց հացի չի կարող ապրել, այնպէս էլ դրանից՝ առանց բամբասանքի։ Նրանց լեզուն և ծնօտները միշտ սովոր են ուրիշների միսը ծամելու և որոճալու, ականջներն՝ ուրիշների պակասութիւնների մասին լսելու և աչքերն՝ ուրիշների միայն պակասութիւնները տեսնելու, բայց երբէք իրանց տիրոջ վրայ չը նայելու։ Բացի դրանից՝ նրանք ձգտում չ'ունեն մի այլ բանի. այդպիսիները կատարեալ արհամարհանքի են արժանի։

Արշաւիր. Ես շատերից եմ լսել, որ աշխարհը քանի

գնում, վատանում է և մարդկանց կեանքը թունաւոր վում:

Տիգրան. Օրինակը վարակիչ է, լաւ, թէ վատ: Բայց մարդիկ աւելի հակամիտ են վատ օրինակներով վարակվելու: Եւ որովհետեւ մեր մարմի նիւթը հազարաւոր դարերի ընթացքում զանազան մարմինների մէջ է մտել, դուրս եկել, այդ պատճառով էլ այդքան պայմասութիւններ է փոխ առել: Հիմնվելով այդ բանի վրայ՝ կարելի է հարց տալ. «Միթէ դու՝ դու ես, իսկ ես՝ ես եմ»: Եթէ անունների և ազգանունների տարբերութիւնը վերացնենք, դա էլ այնքան բան չի պարզում: Այժմ միևնոյն անունով և միևնոյն ազգանունով շատ մարդիկ կան, որոնք թէեւ արտաքին գծագրութեամբ որոշակի տարբերվում են միմիանցից, բայց ներքինով միևնոյն են: Եթէ դրանցից մէկն ու մէկը մի հանճարեղ բան գրի, ինչպէս կարելի է ասել, թէ դրանցից ո՞րն է գրել. ամեն մէկն իրան կը վերագրի... Խօսքս ներկայի մասին չէ, այլ ապագայի:

Արշալիր. Գնանք. բաւական է, ինչքան այստեղ մը նացինք:

Տիգրան. Այն, բաւական է. հանդիստ տանք այս մեռելների նշխարներին, որոնց մեր ոտերն անհանգստութիւն են պատճառում: Մենք անխիղճ կերպով տրորում ենք նրանց շիրիմներն ու անյնում: Բայց խմացիր, որ ապագայում մեզ էլ նոյն վիճակն է սպասում: Ինչ որ չենք ուղում, որ ուրիշներն անեն մեզ, մենք էլ նոյնը չը պէտք է անենք ուրիշներին: Գնանք, արդէն մօտ է արեն իր մտին, թողնենք այս վայրը տխուր ու մթին: (Գնում են):

ՉՈՐՐՈՐԴ ԱՐԱՐՎԱՆ.

ԱՌԱՋԻՆ ՏԵՍԱՐԱՆ.

Տափարակում:

Մանում են ԱՐՃԱԽԻՐԸ և ՎԱՂԻՆԱԿԸ:

Վաղինակ. Մեր խնջոյքն ուրեմն անպատճառ տեղի է ունենալու. ծառայի ասածը դու էլ ես հաստատում:

Արշալիր. Այն, այդպէս ենք մտադիր. միայն, Վաղինակ, այնպէս անենք, որ մեր ուրախութիւնների ժամանակ տեղի ունեցող սովորական անկարգութիւնները չը կրկնվեն:

Վաղինակ. Հէնց ես էլ այդ եմ ուզում. մանաւանդօտարականի առաջ մենք պէտք է մեզ շատ համեստ պահնք: Այն որ կարող ենք անել առանց նրան, չը պէտք է անենք նրա ներկայութեամբ:

Արշալիր. Շատ ճիշտ է: Եթէ մեր նպատակն է զվարճանալ և զվարճացնել մի օտարականի, հետեւապէս պարզ է, որ այնպէս պէտք է անենք, որ չը տիսրեցնենք թէ մեզ և թէ նրան:

Վաղինակ. Այդ կողմից դու միամիտ կաց ինձանից, մանաւանդ որ գիտես իմ բնաւորութիւնը:

Արքաւիր. Իմ և Տիգրանի կողմից էլ ես լիովին երաշ-
խաւոր եմ: Իմ անցեալը քեզ գրաւական. իսկ Տիգրանի
համար կ'ասեմ, թէ նա այն տեսակ օտարականներից չէ,
որ թոյլ տայ իրան անհամեստ վարմունք:

Վաղինակ. Մնացին Սարիբէգը և մի քանի երիտա-
սարդներ: Ճիշտն ասած, ես չեմ կարող նրանց կողմից ե-
րաշխաւորել, միայն կասկածում եմ Սարիբէգի վրայ. նրա
բնաւորութեան մէջ նկատվում են յանդզնութեան գծեր:

Արքաւիր. Այդ ես էլ եմ նկատել:

Վաղինակ. Միայն ներողամտութիւնն է մեր մէջ հա-
մերաշխութիւն պահպանում:

Արքաւիր. Այս, այդպիսի դէպքերում ներդաշնակ հա-
մերաշխութեան կողմնակից ընկերները ներողամտութեան
օգնութեանն են դիմում: Բացի դրանից՝ այնտեղ, ուր դու-
ռչինչ անել չես կարող, միշտ լոելը կը տանի, թափված
ճիգն իդուր կ'անցնի:

Վաղինակ. Մենք կը համոզենք նրան էլ և կ'աշխա-
տենք, որ այդպիսի դէպքեր տեղի չ'ունենան:

Արքաւիր. Ես կարծում եմ, որ չը պէտք է նրան յի-
շեցնել. այդ նշանակում է նրան գլխի դցել: Մենք ամեն ջանք
պէտք է դորձ դնենք այդպիսի դէպքերի առաջն առնելու
համար:

Վաղինակ. Սակայն պէտք է լինի այն, ինչ որ լինելու
է, թէկուզ ինչքան էլ աշխատենք դրա առաջն առնել:

Արքաւիր. Շատ բան ծածկված է մեր հնարագէտ
մտքի աչքերից: Մենք անում ենք մեր անելիքը, առանց
նախատեսնելու հետևանքը: Եւ քիչ չէ պատահում, որ մենք
տուժում ենք մեր միամտութեան և անմեղութեան արած-
ներից: Բայց ինչ եմ ասում. մենք տուժում ենք աւելի
շուտ այն գաղան արարածից, որը մարդուս դցողն ու

բարձրացնողն է և որը յաճախ լայն, շատ լայն բացում է
իր աչքերը տեսնելու մեր եղած կամ չ'եղած պակասու-
թիւնները և փակում նրանց՝ մեր լաւ կողմերի առաջ. իսկ
եթէ դէպքը ձեռնտու է, մէկին վերադրում է եղած կամ
չ'եղած լաւ կողմեր և ժխտում նրա անթիւ պակասութիւն-
ները: Մի խօսքով աշխարհում մարդս շատ դժուար է ե-
րեսում իր իսկական պատկերով:

Վաղինակ. Եթէ մենք վճռել ենք, պէտք է կատա-
րենք, էլ աւելորդ են կասկածները, որոնք մեզ յաճախ
փորձանքների մէջ են ձգում: Գնանք Տիգրանի մօտ և ինձ
ծանօթացընտ նրա հետ:

Արքաւիր. Ուզում ես, գնանք: (Գնասմ են):

ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ.

Մենակում:

Ներս է մտնում Տիգրանը:

Տիգրան. Վերջապէս թեթևացայ պարտքից, ինչպէս
մի ծանր բեռից: Զը կայ աւելի քաղցր բան, քան թեթևա-
նալ իր պարտքից: Արդէն բաւական ժամանակ է, որ գա-
լու օրիցս յետոյ նամակ չէի գրել: Սակայն նամակ գրելու
համար էլ հարկաւոր է տրամադրութիւն: Ահա պատրաստ
է նամակը: Մի անդամ էլ կարդամ, որ սխալ չը լինի և
բացի դրանից՝ թարմ մնայ յիշողութեանս մէջ: (Կար-
դում է):

Սիրելի հայրիկ.

Ընդունիր իմ ջերմ կարօտալի ողջոյնը և հաղորդիր
այդ նախ՝ սիրելի մայրիկիս և ապա՝ մեր բարեկամներին,
որոնց թւում և աներիս, զոքանչիս և նշանածիս՝ թանդա-

դին և անմոռանալի Սաթենիկին, նոյնպէս և իմ անմոռանալի ընկեր Լևոնին։ Ասա նրանց, որ ես ուզում էի առանձինառանձին նամակ գրել, բայց դժբախտաբար հանդամանք ներս թոյլ չը տուին։ Խնդրում եմ, որ նրանք այդ կողմից ներողամիտ լինեն։ Ասա նոյնպէս, որ ես չեմ կարող արտայայտել, թէ որքան եմ կարօտել նրանց։ Այս պանդխտութեան վայրում հայրենիքիս քաղցր յիշատակները վերաբատադրվում են յիշողութեանս մէջ։ Նրանց հետ միասին վերաբատադրվում են և նրանց հետ կապված անձնաւորութիւնները, ծանօթ դէմքերը։

Խաբելը յանցանք է։ Օրերս շատ դառն են անցնում։ Պանդխտութեան դառնութեան մէջ հայրենիքի դառնունութիւնը քաղցր է թուում։ Ես այժմ նման եմ փոթորկալի և կատաղի անհուն ծովում անօդնական լողող նաւի, որը յուսահատ ափն է վնտրում, որ ազատվի։ Ես ստիպված եմ այսպէս գրելու, որովհետեւ իմ մէջ կայ եռանդ գործելու, անվերջ աշխատելու, բայց ոչ մենակ, այլ ընկերների շրջանում, խմբովին։ Ինչ տեսակ մարդ էլ որ լինի, մենակ եղած դէպքում կը շիւարի։ Ասածս գործելու տեսակէալից հասկացիր։

Այսպէսով ուրեմն, սիրելի հայրիկ, աշխատանքի առաջին պտուղները շատ դառն են։ տեսնենք, ինչ կը լինի վերջը։ Այս բոլորից յետոյ՝ ինձ միայն մի փափագ ունեմ, — կրկին տեսնել ձեր անձկալի երեմները։ Ինչպէս օրերը, այնպէս և դէպքերը յաջորդում են միմեանց։ Այսօրվանից մինչեւ վաղը յոյս չը կայ. ով գիտէ, ինչ փորձանքներ դան մեր գլխին, որ մենք չը կարողանանք արժանանալ միմեանց տեսութեան։ Յաճախ ապագան մեր սպասածի հակառակն է երեան հանում։

Պէտք է նկատել և այն, որ ընդհանրապէս մարդիս

սիրուը շատ անհանգիստ է. նա միշտ փոփոխութիւններ, նորաձեւութիւններ է սիրում։ Մի տեղից զզվում ես, գը նում ես մի ուրիշ տեղ. այնտեղից էլ զզվում ես և ուզում ես վերադառնալ կամ հին տեղը և կամ գնալ մի այլ տեղ։ Մարդիս սիրուը, այս բնական է, վինտրում է իր համար նպաստաւոր պայմաններ և շրջան, ինչպէս որ կատուն ցուրտ ժամանակ մի տաք և փափուկ տեղ՝ կուշ գալու և տաքանալու համար։

Նամակս ստանալուն պէս՝ խնդրում եմ, պատասխան գրես. շատ երկմիտ եմ տանից։ Հիմա կ'ասէք. «Տեսէք, ինքն ուրիշներից ինչպէս պահանջող է»։ Այդ ճիշտ է. մարդկիկ, որ իրանք չեն կատարում, ուրիշներից խստութեամբ են պահանջում, — մի բան, որ իրաւունք չունեն. որովհետեւ նախ պէտք է օրինակ ցոյց տալ և ապա պահանջել։ Հետեւապէս այդ կողմից խնդրում եմ ներողամիտ լինել պէտք ինձ։

Նամակիս հետ ուղարկում եմ և հարիւր մանէթ փող, որ միանւագ վերցըել եմ դպրոցի վարչութիւնից։ Սրանով, սիրելի հայրիկ, վայելիլ իմ աշխատանքի անդրանիկ պտուղը։ Ցանելուց յետոյ պէտք է հնձել։ Հաւատացած եղիր, որ մշտական օգնական կը լինեմ քեզ մինչեւ մահ, գերեզման։ Այդ իմ որդիական սուրբ պարտականութիւնն է։ Ասպերախտ և երախտամոռ կը լինի այն զաւակը, որ կը մոռուանայ իր ծնող հօրը, որն իր անապահով տեղով ոչ մի միշոց չը խնայեց իր որդուն ուսումի տալու։ Այդ նշանակում է զրկել նրան իր միակ յոյսից և մսիթարութիւնից։ Այդպիսի մտքեր հեռու ինձանից... Հասցէս արդէն թողել եմ տանը։

Կրկին անդամ յիշելով կարօտագին բարես՝
Մնամ քեզ միշտ հնազանդ որդի
Տիգրան Աստամազեան,

Զէ, տառասխալ չը կայ. բայց մտքի սխալ, ով գիտէ, կարող է լինել: Է՞ն, դրա համար էլ արդարանալու միջոց կայ. շտապով կատարած գործը միշտ անպակաս կը լինի սխալներից և բացի դրանից՝ մարդը կատարեալ չէ, թէև ձգում է կատարելութեան: Ուրեմն մնում է դնել ծրարի մէջ, որ արդէն դրված, պատրաստ է և տալ ծառային, որ տանի, տայ խանութպան Ալէքսանդրին, որ, վաղը ապրանքի համար քաղաք դնալիս՝ տանի նամակատուն և ստացական բերի: (Ժառային): Մկրտիչ: (Ներս է մտնութ Մկրտիչը):

Մկրտիչ. Ի՞նչ էք հրամայում:

Տիգրան. (Յոյց տալով): Այս նամակը և այս հարիւրանոցը կը տանես, կը տաս խանութպան Ալէքսանդրին և իմ կողմից կ'ասես. «Եթէ վաղը գնում ես քաղաք ապրանքի, ինչպէս որ ասում էիր, այն ժամանակ խնդրում եմ, նեղութիւն քաշես, այս փողաւոր ծրարը յանձնես նամակատանը և ստացական բերես»: (Դնում է փողը ծրարի մէջ և տալիս ժառային): Գնա, էլ մի կանգնիր. շուտով մի պատասխան բեր:

Մկրտիչ. Չեր թուքը գետնին դեռ չը չորացած՝ ես այստեղ կը լինեմ: (Դուրս է զնում):

Տիգրան. Այս էլ այսպէս: Դրանից աւելի դրելն աւելորդ է: Առայժմ թաղ դրանով յագուրդ տան իրանց ակնկալող կարօտին, մինչեւ որ տեսնենք, ապագայում ինչ յիշատակութեան արժանի դէպքեր տեղի կ'ունենան և կը կարդադրեն մեր նամակադրութիւնը: Ա՛խ, այդ ապագան... նա շատ բաներ ունի թագցրած իր մէջ, որտեղ չի կարող թափանցել մեր պարձենկոտ, հնարագէտ և թափանցող միտքը: Եթէ թափանցէր, այն ժամանակ տեղի չէր ունենայ մեր դժբախտութիւնների մեծ մասը և մենք նախօ-

րով կը հեռանայինք չար և նենդամիտ մարդկանցից: Երբ մենք անձնատուր ենք լինում մեր սրտի և մտքի թելադրութեանը, այդ մարդկանց դուք չի գալիս. նրանք աշխատում են խլել մեր ինքնուրոյնութիւնը: Եւ եթէ դուք յամառութեամբ աշխատում էք պաշտպանել ձեր ինքնուրոյնութիւնը, այն ժամանակ դուք վատ մարդիկ էք ճանաշվում: Սակայն հաստատ և անյողդողդ կամքն արհամարհում է չնշինների կարծիքներն ու համոզմունքները, հաւատացած լինելով, որ այլապէս պէտք է կորչի իր ինքնուրոյնութիւնը և զոհվի անմիտների արարքներին՝ երեսպաշտութեան, կեղծաւորութեան և ստորագրաշութեան միջոցով: (Վեր է կենում տեղից եւ անց ու դարձ անում): Մարդիկ, որ երեսանց գիտեն քարոզել, թէ հանճարները, այդ խօկական մարդ-արարածները, անպատմելի հաստատուն կամք են ունեցել դիմադրելու կեանքի բնական և հնարածին փոթորիկներին, և թէ մենք միշտ պէտք է նմանվենք նրանց և օրինակ առնենք նրանցից, սակայն նոյն այդ քարոզիչները տակնընան հալածել գիտեն ամեն մի համոզմունք և ինքնուրոյնութիւն: Եւ այդ հալածանքն արտայալավում է նրանց գործողութիւնների, —կեանքի ողբերգութեան և կատակերգութեան մէջ: (Նորից նստում է): Հանճարներով պէտք է պարծենալ, հիանալ, սակայն նրանց պէտք է հալածել իրանց կենդանութեան ժամանակ, իսկ նրանց մեռնելուց յետոյ՝ նրանց նմանվողներին... Մարդն այնքան նախանձում է, որ չի կամենում իր աշքով կենդանի տեսնել ուրիշի փառքը. նա միայն սիրում է պաշտել այնպիսի գիտեներ, որոնց անցրած կեանքին ուզում է իր կեանքը նմանեցնել և կամ նրա մէջ իր կեանքին նըման կէտեր որոնել, որով միսիթարի ինքն իրան, որ իր բռնած լնթացքը սխալ չէ ամենեին, որ այնպէս եռան-

դուն կերպով և անխտիր միջոցներով աշխատում են ցոյց տալ իր նմանները։ Սակայն, ինչպէս որ յուղված ծովի աւլիքներն իզուր են գալիս, կազում ամուր ժայռին, այնպէս էլ անմիտների արարքներն ապարդիւն են ընդհարվում կամքերից յամառին։ Յամառ կամքը հանճարեղութեան անհրաժեշտ պայմանն է։ Թէ՛ այսօրվայ դէպքերն աշխատում են մեզ վհատեցնել, սակայն ապագայի յոյսերն օգնութեան համնելով՝ թուլացնում են, կամ տապալում նրանց ոյժը։ Օ՛, այդ կեանքի սիւները... եթէ չըլինէին դրանք, այն ժամանակ յուսահատութեան անդունդն անմիջապէս կուլ կը տար մեզ։ Բնութեան մէջ ամեն բան իմաստութեամբ է ստեղծված... ինչպէս որ քաղցր են դառն աշխատանքի պտուղները, այնպէս էլ քաղցր է և պահծալի դառը տանջանքի գնով ձեռք բերած փառքը։ Հեշտութեամբ ձեռք բերած հեշտութեամբ է չքանում։

«Առանց տանջանքի կեանք չը կայ,

Առանց կռւի մա՞ չը կայ»։

Այս նշանաբանն աւանդ եմ թողնում յետնորդ սերբնդին, որ նա հետևի մեր օրինակին,—երբէք չընկճվի դէպքերի առաջ, այլ միշտ նո ձգտի առաջ ու առաջ։ Պէտք է անմասն չը թողնել նրան մեր անբովանդակ կեանքի վորձառութիւնից, որպէսզի վստահ անցնենք ապագայի այդ անշառ դատաւորի դատաստանից։ Այն, ներկայի կողմնապահութեանը կը յաջորդի ապագայի անկողմնապահութիւնը, ինչպէս և արտմութեանը՝ ուրախութիւնը, աղքատութեանը՝ հարստութիւնը։ Հակառակ երկոյթների գերերը միշտ վորվածական են։ Նրանք մարդկանց բաժանում են երեք դասակարգի, —մարդկութեան բարերարներ, մարդկութեան թշնամիներ և անվնաս ու անհետք կորչողներ։ Եւ այդ դասակարգերին արժանացնալն իսկապէս ոչ թէ նը-

րանք են, այլ մեր գործունէութիւնն է։ Սակայն ես այնքան երկիւղ չեմ կրում ներկայից, որքան ապագայից։ Ներկան իմ ձեռքումն է, իսկ ապագան՝ որոգայթալար թշնամիների և անաշառ դատաւորների... Անաշառ դատաստանի շնորհով է, որ տանջանքների և բանահնար բամբասանքների աւերակների վրայ կանգնում է փառքի շքեղ ապարանքը, որով չարն ամօթահար է լինում, իսկ բարին՝ փառաբանվում, խաւարը հալածվում է, իսկ լոյսը՝ փայլում, պատռելով մէդերի թանձր շղարշը և սև ու մութ ամպերի սփածանելիքը։ Ապագան վերջը լոյսինն է,—բարուն, ճշմարտին, ազնւին և գեղեցկին։ խորտակվելու են այն ամենքը, որոնք կը համարձակվեն դրանց դէմքն սքօղել անթափանցիկ ծածկոցով։ Կը սևանան ապագայ պատմութեան առաջ նրանք, որոնք կը ջանան հակառակ գնալ դրանց և ապարդիւն ճիգեր թափել։ Այդպիսիներին նախատինք կը կարդայ դատաստանների անաշառ դատաստանը։ Մարդիկ, դդուշացէք անւան սև բծերից և ուրիշներին պատճառած արտաւորումներից։ Երկինքն ու երկիրը, մարդկային արարքների այդ դարեւոր լուռ վկաները, վերջապէս կը լըցնեն իրանց համբերութեան բաժակները և անաշառութեան զեկն իրանց ձեռքը կ'առնեն։ Եւ այն ժամանակ ուշ կը լինի արդէն։ Բազմադարեան վրէժինդրութեան ողին շատ զարհուրելի կը լինի։ Նա կը սպառնայ անհետացներ, փոշիացներ այնպէս, որ կարծես, թէ երբէք գոյութիւն չի ունեցել։ Այսպէսսով անսիրտ մարդկութեան դատաստանին կը փոխարինէ ամենամեծ կենդանի վկաների դատաստանը։ Եւ այդ եր պատճառը, որ հին ժամանակ նրանց աստուածացնում էին։ Ո՞հ, սիրտս ուղում է կրծքիցս գուրս թռչել...

«Հանգստացիր, ով դու, սիրո իմ,
Թող յուզմունքդ թունալի.
Առանց այն էլ՝ ես բախտ չ'ունիմ,
Անբախտութեամբ կեանքս է լի:
Միթէ դու չես կարող տանել
Տառապանքի ծանր խաչ,
Եւ այդպէս շնորհ կ'ուզես ընկճվել
Թոյլ ու անզօր նրա առաջ»:

(Ներս է մտնում Մկրտիչը):

Մկրտիչ. Ձեր պատուէրը ճշտութեամբ կատարված է:
Ալէքսանդրն ասում էր, որ վաղն անպատճառ գնալու է
քաղաք. ուստի և սիրով յանձն առաւ տանել ձեր նա-
մակը:

Տիգրան. Շատ լաւ: Շնորհակալ եմ, որ ճշտութեամբ
կատարեցիր պատուէրս: Ալէքսանդրը վատ մարդ չէ, որ
սիրով յանձն չ'առնէր կամ իր խոստումը չը կատարէր:
(Կամաց ծեծում են դուռը): Տես, ով է:

Մկրտիչ. (Դուռը ըացելով եւ նայելով): Արշաւիրն է
մի մարդու հետ:

Տիգրան. Ասա, թող ներս դան:

Մկրտիչ. (Դուան մէջից): Համեցէք: (Ներս են մտնում
Արշաւիրը եւ Վաղինակը):

Արշաւիր. Բարե՛ Ձեզ, աղնիւ երիտասարդ: (Մկրտիչը
դուրս է զնում):

Տիգրան. Աստծու բարին, համեցէք: (Մտերժաբար):
Եթէ դուք էիք, էլ դուռը ծեծելու որն է: Մտերմութիւնը
ձեականութիւն չի սիրում:

Արշաւիր. Վնաս չ'ունի. անծանօթի մօտ մտերմի հետ
քաղաքավարութիւն պէտք է պահպանել: Խնդրեմ, ծանօ-
թանաք: (Ծոյց տալով Վաղինակին): Վաղինակ Անդրէա-

սեան, գիւղական երիտասարդներից և մեր ուրախութեան-
ձեռնարկողներից մինը:

Տիգրան. (Զեռք տալով): Շատ ուրախ եմ, Տիգրան.
Ապքանազեան, Խնդրեմ, նստէք: (Նստում են):

Արշաւիր. Յուսով եմ, որ այս երիտասարդի ներկա-
յութեամբ աւելի լաւ կ'անցնի մեր ուրախութիւնը:

Տիգրան. Շատ ուրախ եմ: Աստուած տայ: Եթէ նա-
ցանկանում է մեզ հետ ուրախակից և խնդակից լինել,
մենք էլ մեր կողմից կը ցանկանք բաժանել նրա հետ
մեր ուրախութիւնը:

Արշաւիր. (Վաղինակին): Ինչո՞ւ չես խօսում:
Վաղինակ. Դեռ շատ ժամանակ կայ խօսելու:

Արշաւիր. (Տիգրանին): Ի՞նչպէս է անցնում ձեր ժա-
մանակը. այս մի երկու օր է, որ չենք տեսնվել:

Տիգրան. Է՞հ, ժամանակ է, անցնում է մի կերպ. ոչ
կարող եմ լաւ ասել և ոչ վատ: Թէև ժամանակի գործա-
դրութիւնը մեր ձեռքին է, սակայն նրա ծնունդը մեր
ձեռքին չէ: Մենք երբեմն քմահաճ կերպով, երբեմն
ակամայ կարգադրում ենք մեր ժամանակը, խաղա-
լիք դարձրած՝ խաղում ենք նրա հետ, սակայն երբեմն
էլ մենք ենք խաղալիք դառնում նրա ձեռքին: Նրա ըն-
թացքումն է տեղի ունենում հանգամանքների դասաւորու-
թիւնը, որին մարդիկ սովորաբար բախտ կամ ճակատագիր-
են անւանում և որի վերաբերմամբ նրանք երբեմն իշխող են,
երբեմն գերիք ժամանակը երբեմն մեզ քաղցր է ժւում,
երբեմն դառը, անդութ և դաժան: Եւ որովհետեւ հանգա-
մանքների կամայ, թէ ակամայ դասաւորութիւնը տեղի է
ունենում ժամանակի ընթացքում և սերտ կապ ունի մեր
սրտի տրամադրութեան հետ, այդ պատճառով էլ, նրա-
նպաստաւոր, կամ աննպաստ ելքի համաձայն՝ ժամանակը

մեզ թւում է քաղցր, կամ դառը: Մենք, որ խակապէս յոյսերով ենք ապլում, միշտ դժողոհ ներկայից, կարդադրում ենք մեր յոյսերն ըստ կարելոյն ապագայի վերաբերմամբ, որ նրանից մենք լինենք դոհ. սակայն քիչ չէ պատահում, որ մենք յուսախաբվում ենք մեր կարծածի և ծրադրածի վերաբերութեամբ:

Վաղինակ. Շատ ճիշտ է:

Տիգրան. Ժամանակը, երբ հարկաւոր է, արագ է անցնում, երբ հարկաւոր չէ, անտանելի ծանր է անցնում... Ժամանակն իսկապէս թանգ պէտք է գնահատել, սակայն, հանդամանքների անբարեյաջող դասաւորութեան շնորհով՝ մենք ակամայ կորցնում ենք նրա գնահատութիւնը: Մենք շատ անդամ այրվում ենք, բորբոքվում՝ որպէս կրակ, փըրափրում, մոլեգնում՝ որպէս կատաղի ծով, թէ ինչո՞ւ մեր ժամանակն այնպէս չի անցնում, ինչպէս որ խակապէս պէտք է անցնէր, կամ բոլորովին զուր է անցնում. սակայն մեր բարկութիւնն էլ իջնում է և հանդարտում, ինչպէս հրաբուխը լաւայի ժայթքումից և կատաղի ծովը փոթորկից յետոյ, և մենք ակամայ հաշտվում ենք, յարմարվում նրա հետ՝ սպասելով՝ մի աւելի յարմար միջոցի: Ժամանակը, այդ անսկիզբ, անվախճան և յարատե մշտնջենական տեսողութիւնը, ամենակուլ որկորի նման, անյագ կուլ է տալիս տիեզերքում կատարվող բոլոր դէպքերն ու անցքերը, առանց որևէ տրտունջ յայտնելու և խորին լուսութիւն պահպանելով: Եթէ հնար լինէր կարդալ ժամանակի դիրքը, ուր տրձանագրված են այդ դէպքերն ու անցքերը, դրանից աւելի մեծ հետաքրքիր բան չէր կարող լինել աշխարհիս երեսին: Այդ դրքում այնպիսի էջեր կան թագնված, որոնք նկարագրութիւններ են այնպիսի աղեկտուր, շշմեցնող անցքերի, որոնք դուրս են սպրդվել մարդկային մաքի թափանցող

աչքերից և ականջներից և, որոնց վերաբերմամբ բնութիւնն ուղում է բողոքել, բայց համր է, լեզու չ'ունի, և որոնց վկաներն են՝ երկինք, երկիր և Աստուած:

Արշակ. Սկրելի Տիգրան, չը կայ ինձ համար աւելի քաղցր բան, քան լինել ձեզ մօտ և շարունակ լսել ձեր ոսկի խօսքերը: Ես կատակ չեմ անում, այլ լուրջ եմ ասում: Չեր խօսքերը մի ուսանելի դիրք են, որից միտքս առատ սնունդ է ստանում:

Տիգրան. Իմ կարծիքով՝ փոխանակ ապարդիւն բաների մասին խօսելու, աւելի լաւ է օգտակար և կարեսը նիւթերի մասին խօսել: Սա էլ ժամանակի գնահատութիւն է. չը պէտք է մեր ժամանակը վատնենք անտեղի խօսակցութիւնների վրայ: Մի բանից որ օգուտ չը կայ, ինչո՞ւ պէտք է ձեռնարկել: Բայց տեսնո՞ւմ էք, թէ որքան յարմար դասաւորութիւն է. Ժամանակի գնահատութեան մասին խօսելով՝ ժամանակն ենք գնահատում:

Վաղինակ. Շատ իրաւացի է: Եթէ այդ հանդամանքը նկատի ունենային բամբասակը անմիտները, այն ժամանակ կեանքը շատ լաւ կը լինէր:

Տիգրան. Ջատ լաւ միտքս ձգեցիք. արժէ դրանց մասին էլ խօսել: Ահա ձեզ մի պարզ օրինակ, թէ ինչպէս իշղուր են վատնում իրանց թանգագին ժամանակը կեանքի յիմար և անմիտ խեղկատակները... Սակայն կեանքի մէջ մարդկանց արարքները հետեւանք են իրանց լայն կամ նեղ հասկացողութիւնների, մտքի լայն կամ նեղ ոստիւնների. սահմանափակ մտքի տէր մարդիկ սահմանափակ ուղեղի յատուկ արարքներ կ'ունենան: Բայց կեանքի խեղկատակներն այնքան մեծամիտ են, որ չեն զգում, կամ չեն ուզում զգալ, իրանց ուղեղի սահմանափակութիւնը և արարքների գարշութիւնը. նրանցից իւրաքանչիւրն առողջ դա-

տողութեան անպայման հեղինակ է ձեւացնում իրան։ Եւ այդ անմիտ խեղկատակների շնորհով է, որ դառնանում է մեր անմեղ կեանքը, անիծվում բախտը և ծննդի օրը, մինչև անդամ և ծնողը, անսահման ատելութեամբ և բարկութեամբ լցում մեր սիրան ու հոգին, արտասունքի հեղեղներ թափվում մեր աչքերից, խլվում մեր հանգիստն ու քունը, վլասպում մեր առողջութիւնը, թունաւորվում մեր կեանքը, սեանում մեր օրը և խաւարում մեր արեգակը... Մի խօսքով՝ անմիտ էակների անմիտ արարքներով չքանում, փոշիանում է մեր կեանքը, ինչպէս և չքանում, փոշիանում են և իրանք, միայն վատ արարքներ թողնելով աշխարհի վրայ անմոռաց յիշատակի համար։ Սակայն այստեղ մարդկային բանականութիւնը պէտք է բացականչի. «Ապարդիւն կեանքեր, ապարդիւն արարքներ և ջանքեր,— աննախանձելի անմահութեան ներկայացուցիչներ...» Եւ բնութիւնը դեռ լուռ տանում է այդ բոլորը՝ հեղնօրէն նայելով իր որդիների արարքներին, ինչպէս մեծերը՝ փոքրերի խաղերին։ Եւ ինչ է նրանց վաստակը, եթէ ոչ ուղեղի ապարդիւն լարում, յիշողութիւն, ծնոտների և շըրթունքների ապարդիւն շարժումներ,— ապրանքներ, որոնք ուրիշ դէպքերում շատ թանգ գնով են վաճառվում, իսկ այս դէպքում շուայլվում են ձրիապէս և առատօրէն։ Եւ սակայն մարդկանց վրէժը ժամանակն է հանում դրանցից, միայն այն էլ անարդար դատաւորի նման ոչնչացնելով երկու կողմն էլ,— մեղաւորին էլ, արդարին էլ։ Եւ մարդիկ, որ իրանց երկրի թագաւոր և մարդկանց տէր են համարում, ընկճվում, ստրկանում են ժամանակի առաջ ճանաչելով նրա գերիշխանութիւնը և ընդունելով նրան, որպէս տիեզերքի թագաւոր։ Ժամանակը, այդ յաւիտենականութիւնը, իսկական անմահութիւն է վայելում. ամեն բան

կը ոչնչանայ աշխարհիս երեսին, միայն նա նիւթի և տարածութեան հետ միշտ անմահ կը մնայ։ Ժամանակն է, ուրի ընթացքում ամեն ինչ ծնվում է, ապրում և մեռնում է, ոչնչանում. նա է, որ ամեն բանի ականատես է և ամենից ծերը։ Ժամանակն է, որի ընթացքում մեր մայրելն անմեղաբար մեզ ծնում են և մսագնդերի նման լոյս աշխարհ գլորում՝ մեր ձեռքով տնօրինելու մեր ասպարէզն ու ապագան, միայն մեզ նախապէս ներշնչելով, որ բարի զաւակն ուրախութիւն է հօրն ու մօր, իսկ չար զաւակը՝ տրտմութիւն։ Եւ իրօք, հանճարները փառաւորում են ոչ միայն դարերը, այլև իրանց ծնողներին, բարեկամներին և ընկերներին։ Նրանք փառք ու պարծանք են մարդկութեանը, իրանց հայրենիքին և իրանց ծնողներին։ Նրանք իսկական բարի յիշատակ են իրանց ծնողների սրբազնան աւանդի,— նրանք, որոնք սկզբում մեզ նման կամկածով էին վերաբերվում իրանց ոյժերին։ Այս, մենք յաճախ կեանքի մէջ կամկածանքով ենք վերաբերվում մեր ոյժերին։ չենք ճանաչում և գնահատում նրանց արժանապէս։ Այդ է պատճառը, որ նրանք շատ անդամ կորչում են, կամ մեռելութեան մատնվում՝ չը գտնելով իրանց յարմար գործադրութիւնը։ Այդ ոյժերը յարմար գործադրութիւնից նպաստաւոր արդինքներ են տալիս։ Ուրեմն շատպենք, որքան կարելի է, շուտ օգտվել գրանցից, և որոշել մեր դերը կեանքի գործունէութեան շրջանում։

Արշաւիր. Այդ իրողութիւն է. Եթէ այդպէս չը լինէր, աղքատն ինչ է արել Աստծուն, որ Աստուած նրան աղքատ է ստեղծել, այնպէս էլ կաղը, կոյրը, անդամալոյժը, բորոտը, դիւահարը և այլն և այլն։ Մենք հաւասար իրաւունքներով լոյս աշխարհ ենք ընկնում, անհաւասար իրաւունքներով ապրում և դարձեալ հաւասար իրաւունք-

ներով դուրս գալիս կեանքի մէջ ոմանք լողում են աջուղութիւնների խաղաղ և զուարթ ծովում, իսկ ոմանք՝ անաշողութիւնների փոթորկալի ովկիանոսում:

Վաղինակ. Մարդկանց անաջողութիւնների պատճառը կամ իրանք են, կամ ուրիշները և կամ ոչ այս և ոչ այն, այլ հանդամանքների աննպաստ դասաւորութիւնը, որի դէմ մենք յաճախ անկարող ենք կռւել, թէև պէտք է կռւենք:

Տիգրան. Այս, քիչ չէ պատահում, որ մարդ անաջուղութիւնների է պատահում հէնց իր խելքից: Իր վիճակից անբաւական և հեռատեսութիւնից զուրկ միտքը փոխում է իր կեանքի շաւիղը և ահա այդտեղ նա, յաճախ կռւօրէն, ընկնում է խորխորաս՝ շրջապատված չորս կողմից անաջուղութիւնների բարձրաբերձ պարիսպներով, նա նոր այն ժամանակ է հասկանում իր արած քայլի սխալը, որից դառնալն արդէն ուշ է. ուստի վճռում է քամել անաջողութիւնների դառնութեան բաժակը՝ մինչև վերջին կաթիլը, չը մեղադրելով ուրիշն, որովհետեւ այդ բանում միայն ինքն է յանցաւոր: Մի անաջողութեան պատահելիս՝ չը պէտք է յուսահատվենք, որ ուրիշ անաջողութեան չը հանդիպենք:

Արշաւիր. Մենք մեր յանցանքներին շատ ներողամիտ ենք վերաբերվում. յաճախ չենք էլ նկատում նրանց: Այդ է պատճառը, որ մեր յանցանքները չափելու համար դորձ ենք դնում փոքր չափ, իսկ այն ինչ ուրիշների յանցանքների համար՝ մեծ չափ:

Տիգրան. Այդ իր կարգին: Իսկ ինչ վերաբերում է ուրիշներից կրած անաջողութիւններին՝ դրանք այն են, որ մարդս կրում է բամբասանքների կամ այլեւայլ դաղտնի մեքենայութիւնների չնորհով, որոնց մասին ես քիչ առաջ

երկար ու բարակ խօսեցի: Նրանց զո՞ն են դառնում ոչ միայն մարդիկ, այլ և հասարակական հանրաշահ հիմնարկութիւնները: Այդ անաջողութիւններից տաճնվում և մաշվում է սիրտը, որ տաճնվում և մաշում է մարմինը, որը մաշվող մսից և սոկորից է բաղկացած: Կեանքի անաջողութիւնների երրորդ պատճառը շատ անգամ բղխում է երկրորդ պատճառից, իսկ քիչ անդամ առաջանում է ինքնուրոյն: Երկրորդ և երրորդ պատճառները սերտ կապ ունեն միմեանց հետ, որովհետեւ կեանքը, հանգամանքների այդ դասաւորութիւնը, առաջացնողներն իսկապէս մարդիկն են. աշխարհն ու կեանքն իսկապէս վատ չեն, նրանց վատացնողները մարդիկն են:

Վաղինակ. Այդ բոլորի պատճառն այն է, որ մարդիկ չեն մտածում բարւոքել, լաւացնել կեանքը. Եթէ իւրաքանչիւր մարդ մտածէր և բարւոքէր, այն ժամանակ դրութիւնը կը բարեփոխվէր:

Արշաւիր. Ո՞վ է գրա վրայ մտածում. Իւրաքանչիւր մարդ աշխատում է կտրել այնքան, որքան իր սուրն է կտրում, առանց ուշադրութիւն դարձնելու, թէ ով է ընկնում ճանապարհին և ոսնատակ լինում:

Տիգրան. Մարդիկ իսկապէս գաղաններ են. չը կայ մարդի համար աւելի սոսկալի և զարհուրելի դաղան, քան մարդն է: Մարդը, որ յաղթում է կենդանիներից ամենակատաղի վագրին և ակօսում մրրկածուփ ծովի կուրծքը, անզօր է յաղթահարել մարդին: Ո՞վ է, խիղճը մոռացած և չար նախանձից վառված՝ մահի դատապարտում իր ընկերին. ով է կամովին կոյր ձեւնում և իրան չը տեսնելու դնում աղքատութեան դառը վիճակի մէջ իր կեանքը մաշղին, և ով է կամովին խլացնում ականջները և իրան չը լսելու դնում վերջին ծայր թշուառների դառը հեծեծանք

ները... Խօսք չը կայ, որ մարդն է։ Այդ անհաւասարութիւնների մէջ դեր խաղացողը դլխաւորապէս չար նախանձն է. մարդը չի ուղում, որ իր նմանը բարեբաստիկ կեանք վայելի։ Հիւանդը նախանձում է առողջին, աղքատը՝ հարստին, տղեղը՝ գեղեցկին, տղէտը՝ դիտունին, կրյրը՝ ոչ կոյրին, կաղը՝ ոչ կաղին և այլն։ Մի խօսքով մարդը նախանձում և կամենում է ունենալ այն, ինչ որ իրան պակասում է։

Աշաւով հարստին աղքատութիւն է պակասում. ուրեմն նա էլ ձգտում է աղքատութիւն ունենալ...

Տիգրան. Էլի կատակի ժամանակ դտաք։ Չէ մի, ասէք, առողջն էլ ձգտում է հիւանդութեան... Իւրաքանչիւր մարդն պաստաւոր, դրական բան կ'ուզի ձեռք բերել և ոչ թէ աննպաստ, բացասական։ Կեանքի բարեյածող պայմաններում ապրողն աշխատում է ձեռքից բաց չը թողնել, այլ, որքան կարելի է, պինդ պահել և ամեն կողմից կատարեալ անել իր դրութիւնը՝ հեգնօրէն նայելով հակառակ դրութեան մէջ ապրողին։ Այդ է պատճառը, որ հարուստն աշխատում է, որքան կարելի է, պինդ պահել և աւելի և դիզել իր հարստութիւնը։ Նա մտածում է, եթէ իւրաքանչիւրն իր նման ապրի, այն ժամանակ իր նշանակութիւնը կը կորչի։ Ահա նրանդից է բղխում անդթութեան զգայունքը։ Սակայն այդ բոլորը ոչնչութիւն է և մարդկանց ջանքերն ուղղված են այդ ոչնչութեան համար։ որովհետև հարուստը որքան էլ հարուստ լինի, նրա մարմինն աղքատի նման դարձեալ մի փոր հացով և մի ձեռք շորով պէտք է բաւականանայ։

Աշաւով. Հարուստն ինչպէս մի փոր հացով և մի ձեռք շորով կը յադենայ։

Տիգրան. Այնպէս, որ նա մի քանի տեսակ կերակուրաներ, համադամ խորտիկներ, ուտելով՝ կը կտանայ, իսկ աղքատը՝ մի տեսակ. հարուստն իր ունեցած մի քանի ձեռք շորից օրական միայն մի ձեռք կը հագնի, իսկ աղքատն իր ունեցած միայն մի ձեռքը կը հագնի, այնպէս ո՞ւ երկուսի մարմինն էլ միաժամանակ մի-մի ձեռք շորով կը ծածկվի։ Եւ այսպէս՝ նրանք երկուսն էլ այդպէսով կը միմնեցնեն իրանց օրը, իրանց տարին, վերջապէս և իրանց կեանքը, հող կը դառնան, ասպարէզում թողնելով ամեն տեսակ արարքներ, իսկ յաւիտենականութեան դրկում՝ անցրած օրեր, քաշած դրութիւններ։ Հող կը դառնայ թէ այն մարմինը, որն ամեն միջոց գործ է գնում իրան ընդարձակելու, քնքշացնելու և վնասակար աղդեցութիւններից զերծ պահելու, և թէ այն, որը նուազ է՝ մննդարար կերակուրներով չը սնվելու պատճառով և մաշող վշտերի շնորհով, և որը ծածկվում է մի ձեռք ցնցոտիներով և ենթակայ է միշտ սաստիկ ցրտի ու տաքի և այլևայլ արտաքին պատահարների։ Մեր մարմինը նման է բոյսի. Եթէ մննդարար պայմաններում դանվի, լաւ կ'աճի, իսկ հակառակ դէպէտում՝ վատ։ Չէ որ մարդի մարմինը բաղկացած է մսից և ոսկորից, որոնք աճող զօրութիւն ունեն, ինչպէս և բոյսերը, որոնք լաւ չեն աճում, եթէ մննդառու պայմանները վատ են։ Ինչպէս որ բոյսին հարկաւոր են՝ մնընդարար հող, ջուր, օդ, լոյս և ջերմութիւն, այնպէս էլ մարդին հարկաւոր են՝ մննդարար կերակուր, նոյնպէս և ջուր, օդ, լոյս և ջերմութիւն։ Հակառակ պայմաններում ապրողներն անառողջ կը լինեն։

Աշաւով. Այս, ճիշտ է։ Ի՞նչ կը լինի մննդարար կերակրից, վճիտ ջրից, թարմ օդից, պայծառ լոյսից և կենսատու ջերմութիւնից զուրկ աղքատի, կամ բանտարկեալի

Դրութիւնը։ Ջերմութիւնն առաջնակարգ տեղերից մէկն է բռնում, առանց արեգակի ջերմութեան՝ բնութեան բուսական և կենդանական թագաւորութիւնները կը դադարէին գոյութիւն ունենալուց։ Այդ է պատճառը, որ հնումը պաշտում էին արեգակը, լոյսի և ջերմութեան այդ կենսատու աղբեւրը։ Այդ բնական ջերմութիւնը թողնենք և դատենք արհեստականի մասին։ Այն աղքատը, որն աւմառ-ձմեռ ցնցոտիների անդամ կարօտ է, որպէսզի ծածկի իր մարմինը, և ձմեռ՝ վառելափայտի, որ տաքայնի նրան, իր մարմնի վրայ կլում է իր գրութեան աղդեցութիւնը, որ անհետեանք չի անցնում։

Վաղինակ. Արեւ, բացի կեանք տալուց՝ մարդին տալիս է նաև ուրախութիւն, արև եղած ժամանակ մարդուրախանում է, իսկ չեղած ժամանակ՝ տիրում։ Բոյսերի և կենդանիների վրայ էլ նոյն բանն է նկատվում։

Արշակ. Շատ անգամ մարդկանց չի լինում ճանաչել։ Ամենքն աղքատ չեն, որ իրանց աղքատ են ձեացնում։ Նրանց մէջ կան այնպիսիները, որոնք իրանց ծուլութեան պատճառվ են դիմում այդ արհեստին։

Տիգրան. Այն, դժուար է ճանաչել նոյն իսկ ժլատներին, որովհետեւ մարդիկ իսկապէս ըստ արժանւոյն չեն ճանաչվում։ Նրանք էլ են ժլատ համարվում, որոնք հարսառութեան դէղեր ունենալով՝ կոպէկի համար դարձեալ հոգի են տալիս, դողդողալով մսխում, և նրանք էլ՝ որոնք իրանց ունեցածի համաձայն են մսխում, այսպէս ասած՝ իրանց ոտն իրանց վերմակի չափ են մեկնում, աւելորդ ծախսերից խուսափում, որպէսզի հակառակ դէպքում սեերեսութեամբ ուրիշներին ձեռք չը պարզեն, որից սաստիկ ամաչում են։ Այն ինչ մարդիկ, որ միշտ սովոր են մակերեսոյթաբար դատել, առանց մտնելու այդ կարդի մարդկանց ներքին կեան-

քի մէջ և ծանօթանալու նրանց նպատակների և հայեցակէտերի հետ՝ արտաքուստ դատում են, որ այդ համեստ և աղնիւ մարդիկը ժլատ են, — նրանք, որոնք սովոր չեն շատերի նման ուրիշներից պարտք վերցնել և շատ անդամ չը տալ։ Այդ կարծված ժլատները միայն ծայրայեղ դէպքերում են դիմում այդ տեսակ միջոցի, այն էլ վերցրածն աղնւաբար վերադարձնում են ժամանակին, որովհետեւ նըրանց համար պարտքի տակ մնալը մեծ ամօթ է։ Բացի դրանից՝ պարտատէրին իւրաքանչիւր անդամ տեսնելը նըրանց համար մի շապիկ միս թափել է նշանակում։ Նրանք նման չեն այն մարդկանց, որոնք աղնւաբար առնում են, իսկ անաղնւաբար ուրանում և որոնց մականունն է ցյանդուգն անտարբեր»։

Արշակ. Այն, այդպէս շատերը կան, որոնք իրանց ունեցածի համաձայն են մսխում։ օրինակ՝ իրանց վառարանն օրական երեք ձուով են վառում, տասը չափում են, մէկ կորում, — մի խօսքով՝ նրանց արած ծախսը լաւ չափած ու ձեած է, և սակայն մարդիկ անամօթաբար նրանց ժլատներ են անւանում։ Այստեղ դարձեալ երեսում է այն սովորութիւնը, որ մարդն աշխատում է ուրիշի վրայ անպատճառ մի պակասութիւն գտնել. կարծես, թէ առանց դրան չի կարող ապրել։

Տիգրան. Մարդկանց մէջ այդ սովորութիւնը սաստիկ զարգացած է։ Վայ այն մարդին, որ հէնց արտաքին՝ բընական որևէ մարմնական մի պակասութիւն ունի. էլ նա չի աղատվի մարդկանց ձեռքից, նրանց ծաղը ու ծանակից։ Շատ անգամ եղածը մեծացնում, հրէշային չափերի են հասցնում և ոչ պակաս անդամ էլ աշխատում են մինչեւ իսկ չեղածն ստեղծել։

Արշակ. Զը կայ մարդ առանց մարմնական, կամ

ՆԵՐՔԻՆ որևէ պակասութեան։ Ես բազմաթիւ փորձերով համոզվել եմ այդ բանում։

Տիգրան. Այս, այդպէս է։ Շատ անդամ մարդկանց պակասութիւնները չեն երկում, որովհետեւ նրանք թագած են շորերի տակ։ Մարդկանց արտաքինը շլացուցիչ է, իսկ ներքինը՝ հիասթափիչ։ Նրանք աշխատում են դաշնաղան միջոցներով վարագուրել այդ պակասութիւնները։ Յաճախ նրանք նմանում են այն բռած գերեզմաններին, որոնց ներսը լի է ամեն տեսակ ապականութիւններով։ Սակայն, եթէ ոչ մի մարդ աղատ չէ պակասութիւններից, էլ ինչի համար է ծաղրը, —ինչու մեր պակասութիւնները թուղած՝ ուրիշների պակասութիւններն ենք նկատում։ Եթէ մէկը նոյն պակասութիւնը չունի, սակայն մի այլն անպատճառ ունի։ Անտեղի և անմիտ վարժունք, —իրանը վարագուրել և ուրիշնի յետեկից ընկնել։

Արշավիր. Բացի դրանից՝ մարդիկ ի՞նչ մեղաւոր են, որ արտատառ են ծնվում, այսինքն՝ բնութեան քմահաճութեամբ արտատառ են աշխարհ գալիս։ թէև չը պէտք է ուրանալ, որ շատ դէպքերում ծնողներն էլ մեծ գեր ունեն այդ բանի մէջ։ Ծնողների արտաները ժառանգաբար անցնում են որդիներին։ Թոյլ, ֆիզիքապէս քայլայված և իրանց կեանքի մեծագոյն մասը զեղսութիւնների մէջ անցկացրած, արտատառ ծնողների զաւակներն էլ կը լինեն թոյլ, ֆիզիքապէս քայլայված և վերջապէս արտատառ, որոնք իրանց հերթին նոյն գերը պէտք է կատարեն իրանց որդիների նկատմամբ։

Վաղինակ. Դրա համար են ասել. «Պապերը սալոր կերան, թոռների ատամներն առան»։ Այդպիսի դէպքերում մեղաւորն իսկապէս այն պապն է, որ սկիզբն է դնում ա-

րատաւորութեան։ Ի՞նչ մեղաւոր է այն շառաւիղը, որին այդպէս է վիճակվել։

Տիգրան. Ո՞վ է մտածում դրա վրայ։ Մարդիկ առհասարակ դատում են ներկայի մասին, իսկ անցեալն ու ապագան նրանց չեն հետաքրքրում։ Մեր ծնողները չեն մտածում այդ մասին։ Նրանք չեն մտածում նոյն իսկ, թէ ինչպէս աղնւացնել իրանց ցեղը։ Աշխարհում, ուր ամեն բան ձգտում է կատարելութեան, գեղեցկութեան, մարդկային ցեղն էլ անպատճառ պէտք է ձգտի դրան։ Հետևապէս ցեղի աղնւացումը իւրաքանչիւր ծնողի լուրջ հոգածութեան առարկայ պէտք է լինի և ոչ թէ հեշտասիրութեան քմահաճ արդիւնքներով դժբախտների թիւը բազմացնել աշխարհում։ Թէև գեղեցկութիւնը չեն դնում հացի մէջ և ուտում, սակայն մենք զգվում ենք՝ տգեղի դէմքին նայելիս և հրապուրվում՝ գեղեցկի, կամ գեղեցկուհու դրաւիչ դէմքի նուրբ դժերով։ Ես ճանաչում եմ մի տգեղ մարդի, որին ամենքն արհամարհանքով էին վերաբերվում. այդ պատճառով էլ նա անհուն ատելութեամբ էր լցվել դէպի մարդիկ ընդհանրապէս և գեղեցիկները՝ մասնաւորապէս։ Նրան կատարեալ մարդատեաց կարելի էր անւանել։ Նա ասում էր, «Ինչու ես այսպէս տգեղ ծընվեցի։ Այս գեղեցիկ շորերը որքան աշխատում են ծածկել այդ տգեղութիւնը, բայց և այնպէս չի աջողվում։ Նա դարձեալ ցոյց է տալիս իր գլուխը։ Նրանք կարողանում են ծածկել շատ փոքր մասը միայն. որովհետեւ մարդի գեղեցկութիւնն իսկապէս կախված է ոչ թէ զգեստից և մարմնի ծածկվող մասերից, այլ գլխաւորապէս դէմքից և մարմնի ձևի ու կազմվածքի համաչափութիւնից, որոնք դժբախտաբար չեն ծածկվում։ Թէև շորն է մարմնին գեղեցկութիւն տալիս, բայց ոչ լիովին և այն էլ ամեն մարմ-

Նիշ Թոնդ անիծվի այն օրը, երբ ես ծնվեցի և այն աստղը, որի տակ կատարվեց այդ ծնունդը: Ինչու տգեղութեան պատճառով անհուն ատելութիւնը, այդ թունաւոր սև օձը, պէտք է բուն դնէր իմ սրտում: Ասում են, որ սկզբ բից մենք անմեղ ենք ծնվում, հետևապէս էլ ի՞նչ կարիք կար, որ բնութիւնն այդպէս անդուժ վարվէր ինձպէսների հետ, որ այսօր յանցանքի աղբիւր է հանդիսանաւում: Մեր ծնողներն էլ պակաս մեղաւոր չեն այդ բանում. բը նութեան տուածը նրանք են լրացնում: Նրանց անհոգութեան շնորհով մեր մարմինը մանկական հասակում ծածկվում է անզգոյշ դէպքերի սպիներով, որոնք այնուհետև ընդ միշտ, մինչև մահ դրօշմված են մնում նրա վը րայ. նրանց մի մասը ծածկվում է շորերով, իսկ միւսը մնում բաց, ամեն անդամ, հայելի նայելիս, բողոքելու նըրանց այդ յանցաւոր անհոգութեան դէմ: Քիչ չէ պատահում, որ այդ անզգոյշ դէպքերում երեխան ընդ միշտ անբախտանում է: Մանկութեան շրջանը երեխայի համար մի փորձաքար է, որից անմիսաս պրծնելը մեծ փառք ու պարծանք է: Այս բոլորից յետոյ՝ ես կ'աւելացնեմ, որ ինչու իմ ծնողները չը մտածեցին իրանց ցեղն աղնւացնելու մասին, քանի որ ողջ մարդկութիւնը ձգտում է գեղեցկութեան»:—Դա ոչ առաջինն է և ոչ վերջինը. այդպիսի անբախտներով լի է աշխարհը:

Արքաւիր. Այդպիսի անբախտներից մեր գիւղումն էլ շատ կան: Իմ կարծիքով՝ գեղեցկութիւնն ունի իր նշանակութիւնը, թէև ոմանք, կակծու, փառք Աստծու, աշխատում են նրան նշանակութիւն չը տալ:

Տիգրան. Ի՞նչպէս չէ: Գեղեցիկ արտաքինը մեծ տպաւորութիւն է թողնում: Հէնց, օրինակ, ուսուցչութեան մէջ գեղեցիկ արտաքինը, միացած գեղեցիկ ներքինի հետ՝ մեծ

տպաւորութիւն է գործում աշակերտների վրայ: Այս օրէնքը ընդհանուր է բոլոր մարդկանց համար:

Վաղինակ. Այն, այդպէս է. միայն զարմանալին այն է, որ տգեղներն ակամայ, առերես, ծաղրում են գեղեցկութիւնը և այն մարդկանց, որոնք, բնութիւնից գեղեցիկ լինելով՝ աշխատում են գեղեցիկ երևալ: Բայց երբ նրանց տգեղութիւնն է ծաղրվում, նրանք սաստիկ վիրաւորվում են: Սակայն նրանց մէջ կան և անտարբերներ և իրանք իրանց սառնասրտօրէն տգեղ անւանողներ. նրանք դիտեն, որ ուրիշներն անպատճառ պէտք է ասեն, լաւ են համարում, որ իրանք ասեն:

Տիգրան. Այն, մարդիկ, մանաւանդ արատաւորները, չեն սիրում, որ իրանց մարմնական պակասութիւնների մասին խօսվի: Նրանք կատաղի և անհաշտ թշնամի են գառնում նրանց, որոնք համարձակվում են խօսել դրա մասին: Նրանք առհասարակ աշխատում են սքօղել իրանց պակասութիւնները և միշտ խօյս են տալիս նրանց մասին խօսելուց: Հազարից մէկը մտերիմների շրջանում կամ կատակով և կամ անմեղօրէն խօստավանում, յանձն է առնում իր պակասութիւնները: Սակայն այդպիսի դէպքերում հեղնական դառը ժպիտը միշտ անպակաս է լինում նրա դէմքից, որ մի բողոք է բնութեան դէմ: Այդպիսիները վերին աստիճանի նախանձոտ են լինում, մանաւանդ դէպի նոյն պակասութիւններից գերծ մարդիկ: Նրանք չեն սիրում հայելի նայել, որովհետև այնտեղ հրէշներ պէտք է տեսնեն և ամեն անդամ իրանց սիրաց վրդովեն, իսկ նայողներին էլ ծաղրում են՝ նրանց «հայելի նայող» անւանելով: Սակայն նրանք մի կողմից արդարացի են այնպիսիների վերաբերմաք, որոնք չափն անց են կացնում հայելի նայելու մէջ և չեղած գեղեցկութիւնն աշխատում են գըտ-

նել նշանում զանազան արհեստական միջոցներով, իսկ միւս կողմից այնպիսիների՝ որոնք բնական գեղեցկութիւնն աշխատում են չափից դուրս ստուարացնել արհեստական գեղեցկութեամբ։ Ամեն բանի մէջ չափաղանցութիւնն անտանելի է։

Վաղինակ. Բնական գեղեցկութիւնն աւելի լաւ է, քան թէ արհեստականը։ Բնականը ցնցուիների մէջ էլ փայլում է, այն ինչ արհեստականը՝ խաւարում։

Արշակ. Բացի գրանից՝ բնականը երկարատև է, իսկ արհեստականը՝ վաղանցիկ, — այսօր կայ, վաղը չը կայ. թէև չը պէտք է մոռանալ, որ բնականն էլ մնայուն չէ։ Բնութեան յարափոխ օրէնքի համաձայն՝ նա աստիճանաբար մանկութիւնից փոխվում է ծերութեան, այնպէս որ երիտասարդ հասակի գեղեցկութիւնն անյայտանում է ծերութեան հասակում։

Տիգրան. Ինչպէս այդ, այնպէս էլ աւելրակները, պարզ ցոյց են տալիս, որ աշխարհիս վրայ կայուն բան չը կայ։ Բոլորը պէտք է անհետանայ։ Այն շքեղ և փառաւոր ապարանքները, որոնք, մարդ կարծում է, թէ հաստատուն կը մնան մինչեւ յաւիտեան, ժամանակի ընթացքում մատնվում են կորստի։ Անագորոյն ճակատագրի անդութ՝ հարվածների տակ նրանք իրանց վլատակները կամ անցեալ փառքի բեկորներն են ցոյց տալիս յետնորդ սերնդին, կարծես, նրա խաղաղ սիրտը վրդովիլու և ուղեղը տխուր, յուսահատական մտքերով պաշարելու, թէ՝ այն, որ այսօր կայ, վաղը պէտք է անյայտանայ։ Ո՞ր կողմն էլ նայում ես, նոյն յուսահատական միտքն է պաշարում քեղ, — աշխարհի երեսին ամեն բան անցաւոր է՝ և՛ շէնք, և՛ մանկութիւն, և՛ երիտասարդութիւն, և՛ գեղեցկութիւն, և՛ միտք, և՛ մարմին և այն, մի խօսքով՝ ամեն ինչ. միայն անմահ բը-

նութիւնն իր խարուսիկ, մշտանորոգ գարունով կամ մշտաշփոխս մի խաղով, խաղ է անում մեր կեանքի ընդ միշտ անցնող գարնան հետ։ Ի՞նչ կը մնայ դարերի յարատեկապակցութեան մէջ, միայն և միմիայն անցկացրած օրեր։ հետեւապէս որքան աշխատենք լաւ անցկացնել մեր օրը, միայն այն կը մնայ մեզ, էլ ուրիշ ոչ մի արդիւնք, թէև լաւ, թէ վատ՝ երկուսն էլ անցաւոր են։

Վաղինակ. Դառը, յուսահատական մտքեր էք արտաշայտում։

Արշակ. Գուցէ և յուսահատված էք։

Տիգրան. Դառն իրականութիւնը յայտնելն ինչ յուսահատութեան բան է. ես ասում եմ այն, ինչ որ կայ չէնց, օրինակ, մի օր ինձնից մի քանի տարի առաջ աւարտողներից մէկն ասում էր. «Երբ մենք, տասներեք ընկերներով, նստած էինք աշակերտական վերջին նստարանի վըրայ՝ վառ և անշէջ իդէալներով տոգորված, օդային ամրոցներ էինք կառուցանում կեանքը նուաճելու։ Այդ և ուրիշ շատ ընկերների հետ մենք կեանք մտանք գործելու սակայն այսօր այդ բազմաթիւ ընկերներից միայն մի քանին են կանգուն մնացել, որպէս հսկայական շէնքի բեկորներ։ Նրանցից շատերն ընդ միշտ զոհ դառան անգութմանին, իսկ մի քանին էլ ընկան կէս ճանապարհին՝ գոյութեան կուի ասպարէզում և մինչեւ այսօր գեռ վիրաւոր են և չեն կարողանում կանգնել։ Միայն մենք, մի մի բուռն ընկերներով, առաջ անցանք և մինչեւ այսօր աշխատում ենք մինչեւ վերջին շունչն, անգուլ եռանգով, կուելու այդ ասպարէզում։ Ո՞ւր ցնդեցին աշակերտական քաղցր ժամերի այն անհանդիստ յոյզերն ու օդային ամրոցները, որոնք որոտում, երկինք ու երկիր էին դղրդաշնում և գժոխային ոգիներին սասանեցնում... Ո՞ւր կորան-

Երիտասարդական եռուն արեան և ուղեղի հետևանք ցը-
նորքները, որոնք այնպէս վառվառուն, անշէջ էին թւում:
Մեր ընկերների մէջ կար մէկը, որ գիշեր-ցերեկ անչափ
կարդում էր. նա անյագ եռանդով, կարծես, վճռել էր
կուլ տալ աշխարհիս բոլոր դրվածները: Գրքերի մէջ ըն-
տրութիւն անել չը գիտէր. կարդում էր ձեռքն ընկած գիր-
քը, ինչ բովանդակութեան էլ լինէր, միայն պարապ չը մը-
նար: Ո՞րքան ներկայացնում էինք նրան դրա վնասակարու-
թիւնը, նա չէր համոզվում: Մենք հաւատացած էինք, որ
նա կամ կը ցնորդի և կամ թոքախտ կը ստանայ ու վա-
ղաժամ գերեզման կ'իջնի: Այդպէս էլ եղաւ. նա բարա-
կացաւ ստացաւ, գոյնը թուցրեց, արիւն թքեց և կարճ
միջոցում գերեզման գլորվեց: Ահա անհեռատես և անյագ
կարդալու հետևանքը: Վերջերում նա մինչև անդամ ցնոր-
վածի նշաններ էր ցոյց տալիս: Սկզբում նրա անյագ կար-
դալու սէրը մեր մէջ նախանձ էր շարժում. սակայն յետոյ
այդ նախանձը նրա հետ գերեզման իջաւ: Նա շատ ան-
դամ նախատում էր մեզ, որ մենք, իբր թէ, ընթերցա-
նութեամբ չենք պարապում, և միշտ պարծանքով էր յի-
շում, որ անչափ գրքեր է կարդացել. սիրում էր միշտ այն-
պիսի գրքերի անուններ տալ, որ մենք կարդացած չը լի-
նէինք: Եւ արդարեւ նա ամենաշատ կարդացողն էր մեր
մէջ: Մենք շատ անդամ աշխատում էինք նրա օրինակին
հետևել, սակայն նրա դրութիւնը և ապա ողբալի մահը
աեսնելով յետ կանգնեցինք մեր մտադրութիւնից և որո-
շեցինք կարդալ չափաւոր: Խեղճն այնքան կարդացել էր,
բայց գեռ չէր ըմբռնել, որ գրքերից շատերը հների կըրկ-
նութիւն են, իսկ միշտ հինը կրկնել ուղեղին վնաս կը
տայ այնպէս, ինչպէս հին կերակուրն ստամոքսին: Թշուա-
ռականը գեռ չը գիտէր, որ մտաւոր աշխատանքի հետ, որը

մարմնի կազմվածքը հիւծելու զօրութիւն ունի, այնքան
էլ հեշտութեամբ չի կարելի խաղալ: Ամեն բանի մէջ
չափաւորութիւն պէտք է լինի: Բացի դրանից՝ բնութեան
մէջ իւրաքանչիւր գործող մարմին գործելու ժամանակ մէջ
ընդ մէջ պէտք է հանգիստ առնի, կազդուրդի և ոյժերը
վերանորոգի. ապա թէ ոչ՝ նա շուտ կը դադարեցնի իր
գործունէութիւնը: Այդպէս է և մեր ուղեղը, որը չափա-
զանց գործելուց և լարվելուց սկսում է տաքանալ, շփոթ-
վել և ապա ուղեղային ցնորում առաջ բերել, որ խելա-
գարութեան առաջին աստիճանն է»:

Արշաւիր. Միթէ կարելի է մոռանալ, որ բազմաթիւ
համեղ կերակուրների մէջ կան և անհամմերը, ինչպէս և
բազմաթիւ գոյնզգոյն, գեղեցիկ և անուշահոտ ծաղիկների
թւում՝ անգոյն և անդուրեկան անհոտները. և միթէ
ստամոքսն ու հոտոտելիքն անխտիր պէտք է կերակրել գը-
րանցով: Այսպէս էլ ուղեղը չի կարելի կերակրել ամեն մի
պատահական բանով, որովհետև համոզի հետ կը լինի և
անհամը: Ինչպէս որ փայլուն աստղերի հետ կը լինեն և
խաւարները, գիտունների հետ տգէտները, խելօքների
հետ յիմարները, արդարների հետ մեղաւորները, լաւերի
հետ վատերը, բարիների հետ չարերը, այնպէս էլ լաւ
գրքերի հետ կը լինեն և անպէտքները: Պէտք է միայն
մեղուի աշխատասիրութեան հետ և նրա մեղը հաւաքելու
ընդունակութիւնն ունենալ: (Ներս է մտնում Մկրտիչը):

Մկրտիչ. (Արշաւիր): Պ. Արշաւիր, գուրսող ձեզ խըն-
դրող կայ:

Արշաւիր. Ո՞վ է:

Մկրտիչ. Մարիբէդն է: (Արշաւիրն ու Մկրտիչը դուրս
են գնում):

Վաղինակ. Այդ երիտասարդն է մեր քէֆի դլխաւոր ձեռնարկողը: Ճանաչում էք նրան:

Տիգրան. Ո՞չ: Ինչո՞ւ կանչեց Արշաւրին:

Վաղինակ. Շատ կարելի է, որ անհրաժեշտ գործ ու նի հետը: (Ներս են մտնում Արշաւրը եւ Սարիբէզը):

Արշաւր. Համեցէք. տունը քոնն է, մի ամաչիր: Ի՞՞նչ անենք, որ ծանօթ չես մեր վարժապետ Տիգրանի հետ, կը ծանօթացնենք, մանաւանդ որ ցանկութիւն էլ ունես:

Վաղինակ. Առանց այն էլ պէտք է ծանօթանայ...

Սարիբէզ. Բարի երեկոյ:

Տիգրան. Աստծու բարին:

Վաղինակ. Բարով եկար:

Արշաւր. (Տիգրանին): Խնդրեմ, ծանօթանաք: Սարիբէզ Աղարեան:

Տիգրան. (Չեռք տալով): Շատ ուրախ եմ: Տիգրան Ասքանազեան: Ո՞րքան շատ լինեն օտարականի ծանօթները, այնքան լաւ կ'անցնի նրա օրը:

Սարիբէզ. Կ'աշխատենք լաւացնել ձեր օրը... Այս, պանդխութիւնը վատ բան է. մենք, բոլորս էլ, քաշել ենք:

Արշաւր. Օ՛, ատելի բան է այդ պանդխութիւնը. չը նայելով որ նա սկզբում մեզ հրապուրում է իր շքեղ փայլով, բայց յետոյ մինչև տակը քամել է տալիս դառնութեան բաժակը: Պանդխուի սիրտը սև է. ինչ որ ուրիշ համար պայծառ է, այն նրա համար խաւար է:

Տիգրան. Ի՞նչ ասել կ'ուզի, որ դրութիւն քաշողը դըրութիւն կ'իմանայ:

Արշաւր. Գիտէք ինչ. առաջ որ մեր երիտասարդները դիւզից այն կողմը ոտ չէին դնում, այժմ ամբողջ աշխարհը ոտի տակ են տուել: Ամերիկա, Անգլիա, Ֆրան-

սիա, Գերմանիա, Ռուսաստան, Հնդկաստան, Պարսկաստան, Տաճկաստան և այլն, մի խօսքով՝ աշխարհիս բոլոր ծայրերը նրանցից արդէն ոտ գնողներ կան:

Տիգրան. Ուրեմն մնում են Աւստրալիան և սառցային բևեռները:

Արշաւր. Գուցէ ապագայում այդտեղ էլ հասնեն... Սակայն շարունակենք մեր խօսքը: Այս բոլորը, որ մենք ասում, խօսում և դատում ենք, դրա և կարդալու, այսինքն՝ ինքնակրթութեան, հետևանք է, ինչպէս որ մէկ անդամ էլ ասել եմ ձեզ: Տնտեսական կարիքներն ստիպում են շատերին թողնել տուն ու տեղ և ձեռք առնելով պանդխութեան գաւազանը՝ գիմել օտարութեան ու թափառել երկրից երկրի, անհուն ծովերի և ցամաքների վրայ, օտար երկնքի, արևի, լուսի: և աստղերի տակ, օտար օդի և ջրի մէջ, սաստիկ շոգին, կամ ցրտին, և կամ բախտականդիր հողմերին խաղալիք դառած: Ասածներս չափանցութիւն չը համարէք. օտարին ամեն բան օտար է թւում: Այսպէս՝ շահադիտական նպատակներով նրանք, այդ բախտականդիրները, մաշում են իրանց կեանքը, կորցնում սիրելիներին և հայրենի օջազը և զրկվում հայրենի գերեզմանից՝ մատնվելով մոռացութեան գերեզմանին: Այդպէսով՝ քանի՛-քանի՛ կեանքեր և ընտանիքներ են կորչում անհետ: Օտարութիւնն ունի իր լաւ և վատ կողմերը, բայց վատ կողմերը գերազանցում են լաւերին: Աշխարհածանօթութիւնը, օտար մարդկանց հետ շփփելը, նրանց ուսումնակիրելը և նրանցից կուլտուրապէս աղդվելն ու լաւ օրինակ առնելը, որպէսզի վերադառնալ հայրենիք և նոյնը պատուաստել սեփական հողի վրայ, — ահա պատկերի լաւ կողմը. իսկ ընդ միշտ հայրենիքից կտրվելը, անբարոյականութեան, շռայլութեան և զեղիսութեան մէջ կեանքն ան-

Հինայ հիւծելը և օտարների վատ կողմերը իւրացնելն ու հայրենիքում տարածելը պատկերի տխուր և ցաւալի կողմն են կազմում: Ահա ձեզ սրտեր... ի՞նչպէս են մոռանում հայրենիքի սրբազնն ոգն ու ջուրը, որ առաջին անգամ սնեցին, կեանք տուին նրանց, այն դաշտերն ու լեռները, որոնց հետ կապված են թանգագին յիշողութիւններ, և ուր լսել են սառնորակ աղբիւրների անուշ խոխոյները, այն դրախտանման այգիներն ու պարտէզները, որոնք շունչ և հոգի են պարգևել նրանց, և ուր լսել են սոխակների քաղցրիկ գայլայլները և ծառերի մեղմիկ սօսափիւնը ու վայելել քնքուշ զեփիւրը, և վերջապէս այն հողը, որը նըրանց սիրելիների և մտերիմների ոտերն են կոխել և կոխում են, և ուր ամփոփած են այդ սիրելիներից շատերի աճիւնները: 0՝, քարասիրու մարդիկ...

Վաղինակ. Զգայուն օտարը շատ է զարմանում անտարբեր օտարի վրայ, որովհետեւ օտարութիւնն ամենքի վրայ միակերպ չի աղջում:

Տիգրան. Ի հարկէ, սրտերը հաւասարապէս չեն աղջվում: Կան սաստիկ տպաւորվողներ և կան անսիրտներ, համարեա քարասիրութեր: Իւրաքանչիւր դէպք իւրաքանչիւր մարդի վրայ առանձին տպաւորութիւն է թողնում:

Վաղինակ. Մարդ սրտի ինչ տրամադրութեան մէջ ո՞յ գտնվում է, կարծում է, թէ ուրիշն էլ նոյն տրամադրութեան մէջ է: Օրինակ՝ օտարը կարծում է, որ բոլոր մարդիկ օտար են, հարբածը՝ որ ամբողջ աշխարհը հարբած է, քաղցածը՝ որ ամենքը քաղցած են, ուրախը՝ որ ամենքն ուրախ են, տխուրը՝ որ ամենքը տող են, յանցաւորը՝ որ ամենքը յանցաւոր են և այլն, և այլն:

Տիգրան. Այդպիսի դէպքերում մարդի միտքը մնվում

է կասկածներով, որոնք շատ անդամ մատնում են նրանք Սրտի հրաբուխը միշտ դուրս է ժայթքում. մանաւանդ չեն կարողանում դիմանալ զգայուն և քնքուշ սրտերը, որոնք անմիջապէս բռնկվում են և դուրս թափում դաղտնիքներն իրանց գաղտնաբանից: Այդ է պատճառը, որ կանայք աւելի բամբասասէր են և գաղտնայայտ: Այդպիսի դէպքերում նրանք կորցնում են զգուշութիւնը, որով և առատ հունձ են տալիս գաղտնորմներին, որոնք օգտվելով նրանց միամտութիւնից՝ կրակ են տալիս անախորժութիւններին: Այս գառնազգեստ գայլերը, միամիտ աղաւնիներ ձևանալով՝ խորամանկ օձի նման այնպէս զգուշութեամբ են սողում սուտի լարիրինթոսը և գաղտնիքներ կորզում, որ մնում էք բոլորովին ապշած: Դրանց շնորհով է, որ մեր ընկերական կեանքը յաճախ գառնանում է և թունաւորվում: Այդպիսիներն այնպէս ճկուն են, դիւրաթեք և առածդպական, որ հեշտութեամբ կարող են ամեն մեծութիւն և ծաւալ ստանալ: Նրանք մի բոպէի մէջ կարող են արիւնարբու առիւծի կերպարանքից անցնել ամենաշնչին որդի կերպարանքը և աննկատելի կերպով բարձրանալ իրանց ցանկացած բարձրութիւնները՝ մարդկանց այնտեղից վայր գլորելու և տապալելու համար:

Սարիբէգ. Երբ ուրիշները կ'աշխատեն մեզ գլորել, մենք էլ կ'աշխատենք նրանց գլորել:

Տիգրան. Գլորվելուց յետոյ էլ ի՞նչպէս կարող ես գլորել:

Սարիբէգ. Ինչու եմ թողնում, որ ուրիշն ինձ գլորի. հազիր ես նրան շուտ կը գլորեմ:

Տիգրան. Մենք չենք կարող իմանալ մարդկանց մտագրութիւնը, որպէսզի մենք շուտով գլորենք նրանց: Եւ եթէ իմանանք էլ, մարդասիրութիւն չէ դա: Հին ժամանակ էին զեկավարվում այդ օրէնքով, երբ դեռ ևս մար-

դասիրութիւնը ծնունդ չեր առել, իսկ այժմ, երբ արդէն ոչ միայն ծնունդ է առել, այլ և հետզետէ լայն ծաւալ է ստանում, մենք պէտք է ղեկավարվենք այն օրէնքով, որ չը պէտք է ուրիշներին անենք այն, ինչ որ ցանկալի չէ, որ ուրիշներն անեն մեզ, թէկուզ մինչև անդամ նրանց մտադրութիւնն էլ իմանանք. որովհետև եթէ մէկն ստուրութիւն է անում մեր գէմ, միթէ մենք էլ, իմանալով այդ՝ նոյնը պէտք է անենք նրա գէմ, երբ կարող ենք ստորութեան սովոր չը լինել: Հակառակ դէպում մենք կը վարժվենք ստորութեան և նրա պէս մենք ինքներս էլ ստոր կը դառնանք: Նախ՝ մենք պէտք է շատ զդոյշ լինենք երկոտանի գաղաններից և ապա՝ իմանանք, չ'իմանանք, միշտ պէտք է խոյս տանք ստորութիւններ դործելուց և աշխատենք ամեն բան խաղաղութեամբ վերջացնել, որպէսդեմ մեր անունը չարատաւորվի: Անարատ անունն ու կեանքը մեծ փառք ու պատիւ է մարդիս համար, ինչպէս և անարատ ծառայութիւնը: Առհասարակ մենք միշտ պէտք է առաջնորդվենք այն սկզբունքով, որ արհեստը պէտք է սեփական արհեստաւորը բանեցնի: Եւ եթէ մէկը կամենում է ստորութիւնն իրան արհեստ շինել, մենք նրա հետ չը պէտք է ընկերանանք, այլ միշտ պէտք է խոյս տանք այդպէսինների ընկերական յարաբերութիւններից և լարած մեքենայութիւններից:

Սարիբէգ. Եթէ մենք այդ տեսակէտով առաջնորդվելու լինենք, այն ժամանակ հացը ցամաք կ'ուտենք:

Տիգրան. Ոլքան մարդ, այնքան կարծիք, տեսակէտ, համոզմունք, սկզբունք և այլն: Մեզ տուած է ազատ խելք և կամք՝ մեր ցանկութեան համեմատ առաջնորդվելու կեանքի մէջ, այնպէս որ մենք իրաւունք չ'ունենք բռնաւալու ուրիշի համոզմունքի վրայ. իսկ քննադատելու աշալու ուրիշի համոզմունքի վրայ.

զատ իրաւունք ունենք, սակայն այն էլ արդարութեամբ և ճշմարտութեամբ:

Սարիբէգ. Լաւ, թողնենք այդ և խօսենք մեր դպրոցի մասին: Ի՞նչպէս է կառավարվում դպրոցը:

Տիգրան. Միջակ կերպով:

Արքաւիր. (Հեղնօրէն): Ինչու, պէտք է ասել լաւ, քանի որ նրա հոգատարները, բացի ուսուցչից, քնած և անտարբեր չեն, այլ մեծ եռանդ են ցոյց տալիս իրանց դորձունեութեան մէջ, ճիդ և ջանք են թափում և չեն ինայում ոչ ժամանակ, ոչ անձնական հանգստութիւն և ոչ նիւթական միջոցներ: Նրանք, այսպէս ասած, իրանց ոտերըն ուսումնարանից չեն կտրում...

Տիգրան. Դարձեալ սկսեցիք ձեր կատակները: Այս, թէեւ դրանք կատակի ձեռվ, կամ գուցէ հեգնօրէն, արտասանված խօսքեր են, բայց մեծ չափով քօղարկված ճշմարտութիւն են պարունակում իրանց մէջ: Դուք շօշափեցիք մի հին վերք, որ տարիներից վեր դարմանող ձեռքերի է կարօտ: Դպրոցի, ինչպէս և ամեն մի հասարակական հիմնարկութեան գոյութեան և յարատեսութեան անհրաժեշտ պայշմաններն են՝ նիւթական միջոց և ղեկավարող գլուխներ: Միշտ կը կաղայ այն հաստատութիւնը, որտեղ կը պակասեն այդ պայշմաններից մէկն ու մէկը. բացի կաղալուց՝ կարող է և հոգեվարքի մէջ ընկնել: Այդտեղ պակաս դեր չի խաղում և ժողովրդի գատապարտելի անտարբերութիւնները մեռցնող յատկութիւն ունի: Հասարակական այդ դործիներին էլ դատելու լինենք, կարօտ են խրախուսանքի: Թէև իսկապէս անձնազոհութիւնը նկատի չի առնում այդ ևս, սակայն արդարութիւնը պահանջում է ասել, որ եթէ չենք կարող խրախուսել, գոնէ խափանա-

ոիթ չը պէտք է հանդիսանանք և ուրիշի արածը քանագենք։ Պէտք է ունենալ ուրիշի գրութեան մէջ մտնելու յատկութիւն։ Միթէ քիչ անձնազոհութիւն է ուսուցչի կողմից՝ թողնել իր հայրենի տունը, դնալ, առանձնանալ հեռաւոր խուլ անկիւնները, այդ անշրջան, բարոյական զըվարճութիւններից և հոգեկան մխիթարութիւնից զուրկ տեղերը և մաշող օտարութեան, նիւթական և բարոյական զրկանքների ու տանջանքների մէջ մաշել իր մարմինը՝ տըդէտ և կոպիտ հասարակութեան մանուկներին դաստիարակելու համար։ Մենք, փոխանակ աջակցելու նրան՝ ամեն կերպ դառնացնում ենք նրա, առանց այն էլ, դառը վիճակը։

Արշակ. Ես ճանաչում եմ մի քանի ուսուցիչների, որոնք մինչև անդամ գանգատով են առել իրանց ոռնիկները։

Վաղինակ. Բայց եղել են և այնպիսիները, որոնք, այդգեղքում տեսնելով հասարակութեան անբարեխղճութիւնը՝ թքել են և սուս ու փուս թողել, հեռացել։

Սարիբեկ. Այդպէս հեռացել են աւելի աղօթած ուսուցիչները...

Տիգրան. Շարունակեցէք, տեսնենք։

Արշակ. Ես տեսել եմ մի քանի ուսուցիչների, որոնք դողալով են պարապել ցրտից կուչ եկած աշակերտների հետ։ որովհետև ցախ չեն տուել, որ վառի։

Վաղինակ. Ես էլ մի գիւղում տեսել եմ, որ մի հաւաքուն շինել էին դպրոց, ուր անձրեսի ժամանակ խեղճ ուսուցիչը մնացել էր շիւարած, թէ նրտեղ դնի իր գլուխը, այնքան էր կաթում դպրոցը։ Խեղճ աշակերտները, հաւել ձագերի նման, ուզում էին ձուար անել, բայց որտեղ...

Տիգրան. Ես զգում եմ, թէ նրպիսի ողբերգական տեսարան պէտք է ներկայանար այդ լուպէին ուսուցչի և աշակերտաների առաջ։

Արշակ. Իհարկէ երկուստէք կը լինէին յուսահատ և ողորմելի հայեացքներ...։

Տիգրան. Ասէք, խնդրեմ. այդպիսի պայմաններում ինչպէս պարապի խեղճ ուսուցիչը և տարվայ վերջն արդիւնք ցոյց տայ պահանջող հասարակութեանը, որը տալ ըլ գիտէ, բայց պահանջել գիտէ։ Ճիշտ է, որ մեր գիւղական ուսուցիչներն իսկապէս նահատակներ են եղել և աւելի գժուարին ու ծանր գործ կատարել, զրկանքներ կը րել, քան թէ մեծամեծ ռոճիկներ կլանող, փառաւոր ապրող և շատ անդամ ոչինչ չ'անող քաղաքային ուսուցիչները։ Պատմութիւնը կը գնահատի երկուսին էլ...։

Արշակ. Այդ է պատճառը, որ նրանցից շատերը, երբեմն ամենանձնազոհներն իսկ, շուտով զզվելով՝ թողնում, հեռանում են գաւառական խուլ անկիւններից և վճռում այսպէս։ «Աւելի լաւ է լինել ամենավերջին մուրացիկը քաղաքում, քան թէ ամենաառաջին ազգեցիկը՝ գիւղում»։ Այսպէսով պարզ է, որ հասարակութիւնը վնասում է իրան և ուրիշ ոչ ոքի։ որովհետև գաւառները զրկվում են դործիչներից, քանի որ գէպքը բացառիկ չէ։

Վաղինակ. Իհարկէ, ուսուցիչը սոված չէ, որ եկել է գիւղը, ինչպէս կարծում է հասարակութիւնը։ Նա, ինչպէս էլ լինի, ապրելու է քաղաքում, սոված չի մեռնելու, —ինչպէս և ապրում են նրա ընկերները։

Արշակ. Անհերքելի է, որ նա դալիս է գործի համար՝ աղնիւ գաղափարներով տոգորված։ Սակայն տգէտ և խաւարասէր մարդիկ միշտ աշխատում են լոյսից։ խոյս տալ և խարխափել մթութեան մէջ, միայն թէ ոչ ոք նը-

քանց հանգիստ նիրհը չը վրդովի, չը խանդարի։ Ահա սը-
րանով է բացատրվում այն վիճը, այն խորին ատելութիւ-
նը, որ կայ քաղաքացիների և դիւղացիների մէջ։

Վաղինակ. Գիւղական գործերի խանդարողները մեծ
մասով դիւղի աղդեցիկներն են։

Արշաւիր. Անկասկած։

Տիգրան. Իհարկէ. ձկնորսն ի՞նչ կ'ուզի՝ պղտոր ջուր,
գողն ի՞նչ կ'ուզի՝ մութ դիշեր։

Սարիբէգ. Իհարկէ...։

Վաղինակ. Ինչպէս Արշաւիրը կատակով նկատեց՝ մեր
դպրոցի հոգաբարձութիւնն անտարբեր է. դպրոցի ամ-
բողջ ծանրութիւնը ձգել է մի երիտասարդ ուսուցչի վրայ,
իսկ ինքը մի կողմ է քաշվել։ Թոշակադրամներ հաւաքողը,
տնտեսական մասի կարգադրողն էլ համարեա թէ ուսու-
ցեն է։

Արշաւիր. Միայն նրան թողնես, որ դանաղան վայ-
րահաշութիւններ անի ուսուցչի հասցէին։

Սարիբէգ. Մանաւանդ քահանան...։

Տիգրան. Ես բացարձակ ասում եմ, առանց վախենա-
լու, որովհետեւ բամբասանք չեմ անում, որ հոգաբարձու-
թիւնն իսկապէս մի վնասակար տարր է դպրոցի համար։
Մեր դպրոցները մեծապէս կաղացել են, կաղում են և
դեռ կը կաղան այդ հոգաբարձութիւնների շնորհով։ ու-
րովհետեւ ուր է այն անձնաղոհութիւնը, որ ձրի ծառայու-
թիւնն անձնուիրութեամբ կատարի։ Անցեալները մեր հո-
գաբարձութեան նախագահ քահանային ասում եմ. «Տէր-
չայր, ինչու չէք դալիս դպրոց՝ այցելութեան»։ Պատաս-
խանում է. «Օ՛րհնած, դալու համար մեզ փող են տալիս,
դեռ շնորհակալ չէք, որ այսքանն էլ ձրի կատարում ենք»։
Ես ոչինչ չը պատասխանեցի. տգէտի, անհասկացողի. հետ-

չարժէ երկար ու բարակ խօսել, բացատրութիւնների մէջ
մտնել և դլուխ ցաւեցնել։ Հակառակ դէպքում, բացի
վնասից՝ օգուտ չի կարելի ստանալ։ Խեղճ ուսուցիչների և
ուսումնական հաստատութիւնների բախտը յանձնվում է
այդպիսի տգէտների, որոնք երկու ձիու գարի ջոկել չը
գիտեն։ Գրի սեն ու սպիտակը զանազանել չիմացողն այ-
սօր հանգիստանում է ուսուցչի լաւն ու վատը գնահատող
և ուսման աղբիւրի պատասխանատու դեկը վարել իմացող։

Արշաւիր. Նրանց համար լաւ ուսուցիչները նրանք են,
որոնք նրանց մեծարել, քծնել և կեղծաւորել գիտեն, թէ-
կուզ ոչինչ էլ չը գիտենան և ոչինչ էլ չ'անեն, հակաման-
կավարժական միջոցների գիմեն, միայն անունով լինեն
ուսուցիչ, հասարակութեան աշքին թող վշեն և արտաքին
լրութեամբ ու ծանրութեամբ ցոյց տան, թէ իրանք մի
բան գիտեն։

Տիգրան. Այսինքն՝ այն, որ ոչինչ չը գիտեն։

Արշաւիր. Իսկ մնացածներն անպէտք են և վատ, թէ-
կուզ ինչքան էլ բարձր մտաւոր և բարոյական աշխանաւո-
րութիւնների տէր լինեն։ Ներկայումս մեր դպրոցներում
ինամութիւնը մեծ դեր է խաղում։

Տիգրան. Հոգաբարձութիւնների ձեռքին ուսուցիչներն
իսկապէս խաղալիք են դարձել։ Այդ խեղճերը որքան դա-
ռա վիշտ և նեղութիւն են կրել նրանցից, երբեմն հրէշա-
յին տիպերից։ Ինձ լաւ յայտնի են մեր դպրոցական դոր-
ծի անցեալն ու ներկան, որոնց արժանացրել եմ իմ խո-
րին ուշագրութեան և հետաքրքրութեան։ Իմ աղդացաւ-
սիրտը լաւ է ուսումնասիրել և այն արշինաշափ, հաստա-
փոր աղաներին, որոնց մեծամտութեան, ինքնահաւանու-
թեան և կամայականութեան արարքները դեռ երկար ան-
ջնջելի կը մնան թշուառ ուսուցիչների, ոչ պակաս նաև ու-

սանող սերնդի, յիշողութիւնից: Այդ արարքները պէտք է արձանագրվեն և, որպէս թամագագին աղբիւներ, յետնորդ սերնդին աւանդվեն: Այն, այդ արարքները և նրանց հեղինակները պէտք է անմահանան մեր մանկավարժութեան պատմութեան մէջ... Խոցված ուսուցիչներն առիթը ձեռքից չը պէտք է բաց թողնեն՝ յարմար բոպէում անմահացնելու այդ սևասիրտներին. որովհետեւ մի քանի սերունդ և ահա այդ, թէ մեղ համար չնշին, բայց յետնորդ սերնդի համար թամագագին, տեղեկութիւնները կը չնշվեն յիշողութեան աշխարհից: Այդ արարքները, որոնցով պայմանաւորված է մեր դպրոցների ողորմելի կացութիւնը, որպէս մի արատ, կամ մի աւ բիծ, պէտք է անջնջելի մնան մեր մանկավարժութեան պատմութեան էջերից:

Արքաւիր. Բայց ի՞նչ կը լինի դրա վերջը. այդպէս շատերն են ասել ու թողել, դնացել, իսկ դրութիւնը նոյնն է մնացել:

Տիգրան. Կան բաներ, որոնց բարեփոխելն այնքան էլ հեշտ չէ. այդ պատճառով էլ շատ ասողներ դեռ կը դառնու կ'երթան, մինչև որ նրանց ասածները կ'իրականանան: Ճշմարտութեան իրագործումը նահատակութեան զոհեր է պահանջում:

Վաղինակ. Երբ ձուկը գլխիցն է հոտում, ի՞նչ անեն նրա ներքին մասերը: Միթէ մեր կեանքի մէջ քիչ կան այնպիսի ախտեր, որոնց դէմ լրջմիտ մարդիկ անդրդվելի կերպով կռւել են, կռւում են և դեռ կը շարունակեն կռււել, սակայն որոնք անընկճելի են մնացել մինչեւ այժմ, կարծես, բոլորովին կռւի երես չեն տեսել: Ո՞ւր հեռու գնանք. աշխարհի սկզբից մինչեւ այժմ բարին չարի դէմ անողորմ կռիւ է մղում, բայց դեռ անորոշ է պատերազմի վախճանը, — դեռ յայտնի չէ, թէ որի կողմն է անցնելու:

յաղթութիւնը: Եթէ բարին այսքան դարերի ընթացքում չի յոգնել, չի յուսահատվել, նրա կատաղի կորովը չի շիշել և նրա պատերազմական աւիւնը չի անցել, այլ միշտ յուսագիր է յաղթանակել, հատա ինչու մենք, փոքրովի մահկանացուներս, վախկոտ, թուլամորթ և թուլասիրտ արարածներս, այդպէս շուտ ընկճվող ենք, շուտ բռնկվող և շուտ հանդչող, բարձր գոչող և շուտ լուզ, պատերազմ աղաղակող և պատերազմից վախչող և վերջապէս շատ բան քարոզող, բայց չիրագործող:

Տիգրան. Ջատ իրաւացի էք նկատում: Ճշմարտութեան զինւորներն անվեհեր պէտք է կռւեն, մինչեւ որ վերջապէս յաղթանակեն: Նրանց պէտք է ոգեսորի միայն մի նպատակ, այն է՝ յաղթութիւնը: Պատերազմում անշուշտ կը լինեն և ընկնողներ, սակայն չընկնողները պէտք է չը յուսահատվեն, այլ ընկածների դիակները ոտնատակ տալով արդաշ բարկութեամբ վառված, առաջ պէտք է անցնեն, անվեհեր խիզախեն, ընկածների վրէժը լուծեն և իրանց նպատակն իրագործեն, — յաղթանակ տանեն: Այն բարիքները, որոնք այժմ մենք վայելում ենք այնպէս հեշտութեամբ, որպիսի գժուարութեամբ են ձեռք բերվել, որքան թանգ են նստել, քանի՛ քանի՛ մարտնչողների կեանքի և արեան գնով են ստացվել: Առանց կռւի կեանք չը կայ: Այդպիսի կռւում ձեռք բերած մահը մահ չէ, այլ անմահութիւն է:

Արքաւիր. Ճշմարտութեան քաջարի զինւորները միշտ պէտք է կռւեն, առանց ուշագրութիւն դարձնելու, թէ մարդիկ համակրում են նրանց, թէ՝ ոչ, որովհետեւ նրանք մարդկանց համակրութեան համար չեն կռւում, այլ ճշմարտութեան:

Տիգրան. Համակրութիւնը մի շատ առածգական բան

է. Երբեմն մարդիկ կուողներին էլ են համակրում, չը կըռաւողներին էլ: Մենք, նշանաւոր մարդկանց կրթիչ կենսագրութիւնները կարդալով՝ ոգեսորվում ենք թէ նրանցով, որոնք իրանց հեղութեամբ դրաւել են հասարակութեան համակրանքը, և թէ նրանցով, որոնք անողորմ կոխւ են մղել այդ հասարակութեան դէմ՝ նրա թերութիւններն ուղղելու նպատակով: Այսօր երկու կողմերի համար էլ արձաններ են կանդնեցրել, իսկ մի ժամանակ Հեղիկոնի վըրայ նրանց ճակատները դափնիներով պսակել: Սակայն այստեղ հարց է ծագում. այդ երկու կողմերից որն է արդարացի, քանի որ հրապարակի վրայ կան հասարակութեան, տգէտ ամբոխի, անպայման և կէսի չափ համակրութիւնները: Կեանքը լի է այդպիսի հակասութիւններով:

Սարիբէզ. Արիւն խմողներին էլ են համակրում...

Վաղինակ. Կուողն անպատճառ կ'ունենայ թշնամիներ, որոնց համակրանքը նա երբէք չի կարող վայելել. հետեապէս այդ կարդի դործիչների համակրութեան աստիճանն իջնում է միւս՝ հակառակ կարդի, դործիչների համակրութեան առաջ:

Տիգրան. Մեր դարում անպայման բոլորի հետ հաշտապրելը և նրանց համակրութիւնը վայելելը մի պարծանք չէ. որովհետեւ այդ կը նշանակի, որ կեանքի մէջ վատութիւններ կամ վատ մարդիկ չը կան: Այն ինչ կեանքը լի է դրանցով, որոնց դէմ և պէտք է կուել. իսկ կուողը, պարզ բան է, հակառակորդների համակրութիւնը չի կարող վայելել: Հետեապէս նրա համակրութիւնն անպայման ամբողջական չի լինի, որպիսին ներկայ պայմաններում ձեռքբերողն անշուշտ բարձր արժանաւորութիւններից զուրկ

պէտք է լինի՝ անպայման բոլորին յարմարվելու և նրանց համակրութիւնը վաստակելու համար:

Արշակիր. Բայց միթէ դրանով դուք բնաւորութեան անհաշտութիւն չէք քարոզում:

Տիգրան. Ասած բանը ծուռ չը պէտք է հասկանալ. Ինչո՞ւ բնաւորութեան անհաշտութիւն և ոչ գաղափարների: Կեանքը, որ լի է ստորութիւններով և որ ամեն ինչ ուզում է կլանել, լափել, խեղդել, մեռցնել և ոչնչացնել, պատահում է ընդհարման բանիմաց մարդկանց կողմից, որոնք նրա յափշտակող և գիշատիչ ճիրաններից աղատվելու, կուլ չը գնալու համար գաղափարների անհաշտութիւնն ուն գործ գնում, հակառակ դէպքում աղատվելն անհնարին է: Եւ միթէ մարդ պարտական է անպայման բոլորի հետ էլ հաշտ լինել. հապա ինչո՞ւ գոյութիւն ունի գաղափարների տարբերութիւնը, գաղափարների, որոնց գաւանողների մէջ հաշտութիւն կայանալ չի կարող: Եւ քիչ է պատահում, որ մարդ պաշտօնով կոչված է ծառայելու իր անհամագաղափարակցի հետ մի հիմնարկութեան մէջ, ուր այդ դէպքում հաշտութիւն չի կարող լինել, իսկ հակառակ դէպքում կեղծութիւն պէտք է թագաւորի: Մենք պէտք է գատենք կեանքի փաստերի վրայ հիմնված: Թող պէտք է գատենք մեր յոռետես անւանեն, փոյթ չէ մեզ: Եւ լաւատեսները մեզ յոռետես անւանեն, մենք էլ մեր տեսթէ նրանք իրանց տեսակէտից են ճիշտ, մենք էլ մեր տեսակէտից ենք ճիշտ: Միթէ մեզ պէտք է ստիպեն փակել մեր աշքերն անողոք իրականութեան առաջ և միթէ գրօշի արժէք ունեն ուրիշների կազմած անհիմն գատողութիւնները մեր մասին: Անսանձ առողջ միտքը կապանքներ, կաշկանդումներ չի սիրում, այլ սիրում է, չարդ ու փշուր անելով նրանց՝ աղատ սաւառնել անմահ գաղափարների անհուն եթերում և այնտեղից հեղնել թղուկների անմիտ

վերաբերմունքն ու մտածմունքը: Այդ է պատճառը, որ մեծ բնաւորութիւններն անհաշտ են եղել իրանց շրջապատող կեանքի պայմանների հետ և ինքնուրոյնութեան դրօշակը միշտ բարձր են պահել: Առաջնորդներն անպայման պէտք է ունենան զեկավարելու, հրամանատարութեան և հնազանդեցնելու ընդունակութիւն և չար լեզուները մոդական գաւաղանի մի հարվածով պապանձեցնելու հմտութիւն, առանց որոնց ոչինչ չեն կարող անել: Նրանց համար մի խոհական մարդի համակրութիւնը տասնապատիկ աւելի բարձր պէտք է լինի հարիւր տղէտի ամբոխային համակրութիւնից: Կեանքի այդ քաջամարտիկ դինորները պէտք է կատարեն իրանց գերն իրանց տեսակէտի համեմատ, հաւատացած լինելով՝ որ եթէ այսօր մարդիկ չեն համակրում նրանց, վաղն անպատճառ կը համակրեն, և եթէ նրանք չը համակրեն, նրանց ժառանգները կը համակրեն: Նշանաւոր հեղինակներն ընդհանրապէս իրանց կենդանութեան ժամանակ շատ քիչ համակրութիւն են վայելել, կամ բոլորովին չեն վայելել և անյայտութեան են մատնվել. սակայն մեռնելուց յետոյ են վայելում: Հեռանալուց յետոյ ամեն բան քաղցր է թւում: Յետագայ արդարագատ և անկողմնապահ սերունդը հանում է նրանց անյայտութիւնից, նախանձու ժամանակակիցների հնութեան փոշով ծածկած տեղից և ծունկ չոքում նրանց վեհութեան առաջ, քաւելով իր պապերի յանցանքը և կտակելով յետնորդ դարերին՝ պաշտելու նրանց, որպէս սըրբութիւն:

Սարիբէգ. Լաւ, թողնենք այդ ամենը և անցնենք օրվայ հարցին: Վաղը մեր քէֆն անպատճառ դլուխ է գաւու. արդէն պատրաստութիւն տեսնված է: Ես եկայ յայտնելու ձեզ այդ մասին տեղեկութիւն, սակայն խօսքով

ընկանք և ես մոռացայ. ուստի հիմա եմ յայտնում, որ վաղն անպատճառ պատրաստ լինէք, որպէսզի ընկերներով դանք և միասին դնանք այդին:

Վաղինակ. Միւս երիտասարդներից էլ համաձայնեցին:

Սարիբէգ. Այս:

Վաղինակ. Քանի հոգի:

Սարիբէգ. Հինգ:

Արշակիր. Ո՞վքեր են:

Սարիբէգ. Գիւղադեանց Արմենակը, Զախմախսազեանց Կարապետը, Յովսէփեանց Գարեգինը, Մարկոսեանց Արտաշէսը և Յովհաննիսեանց Ալէքսանդրը:

Արշակիր. Այդ լաւ է եղել: Ուրեմն ընդամենը կը լինենք լինը հոգի:

Սարիբէգ. (Կատակով): Այս, լաւ է եղել. բայց լաւ կը լինի, որ քեզ հասնելիք ծախսը տաս:

Վաղինակ. (Սարիբէգին): Ա՛խր, գու միւս օրն ամբողջ ծախսը քեզ վրայ առար... Ես մոռացայ սրանց ասել:

Արշակիր. (Սարիբէգին ժպտալով): Շատ ուրախ եմ, որ ինձ գլխացաւից և նեղութիւնից ազատել ես. ուստի ուրախութեամբ էլ ծախսը կը տամ: Ասա, ո՞վքան է:

Սարիբէգ. Կատակ եմ անում, խելքի պառող. ծախս չը կայ ձեր կողմից: Մի հիւրասիրութիւնը մեծ բան չէ. այս անդամ ամբողջ ծախսն ինձ վրայ եմ առնում, իսկ միւս անդամ քեզ վրայ կը գցեմ, որ դարձեալ դորձը հերթով կը գնայ: Այնքան տեղն էլ մի գնա. ամօթ չէ մեզ համար, որ վարժապետ Տիգրանին էլ ծախսի տակ գցենք, եթէ ծախսն իսկապէս ընկերովի լինի: Բնդհակառակը մենք ամեն կերպ պէտք է աշխատենք շահել նրա օտարական սիրտը...

Արշաւիր. Տիգրանը ոչ ծախսից փախչող է և ոչ ել հիւրասիրութեան կարօտ. մեր խնջոյքն խակապէս ժամանակ անցկացնելու և նրա պանդխտութիւնն առժամանակ մոռացութեան տալու համար է:

Սարիբէգ. Շատ ուրախ եմ, բայց ծախսն արդէն արված է և պահանջ չը կայ այլ եաւ:

Տիգրան. Ինչու, ինչու միայն դուք ծախսի տակ ընկածք. ի՞նչ պարտական էք: Լաւ կը լինի, որ այդ ծախսը լինի ընկերովի. հետեւապէս որքան է հասնում իւրաքանչիւրիս, ասէք, տանք:

Սարիբէգ. Այդ անկարելի է: Ինչ որ ասում եմ, լսեցէք. հակառակ դէպքում կը նեղանամ:

Տիգրան. Լաւ, թող ձեր ասածը լինի. մի նեղացէք:

Սարիբէգ. Ուրեմն վազը գիշերով արդէն պատրաստ կացէք, որ ընկերներով դանք և միասին դնանք այդին: Միամիտ լինենք:

Տիգրան. Միամիտ եղէք:

Սարիբէգ. (Արշաւրին եւ Վաղինակին): Դէհ, գընանք:

Վաղինակ. Գնանք:

Արշաւիր. Այն, գնանք. արդէն բաւական ժամանակ է, որ այստեղ նստած խօսում ենք:

Նրանք. Բարի գիշեր:

Տիգրան. Զեղլոյս բարի: (Սարիբէգը, Արշաւրը եւ Վաղինակը դուրս են գնում): Մնացի մենակ, սիրտս սկսում է տիպել... Տիսուր, սև մտքերը դարձեալ գալիս են պաշարելու ինձ: Կարծես, սիրտս մենակ լինել չի ուզում. գուցէ, միայնութեան չար ոգին սարսափ է աղդել նրան... Օ՛, ոչ, նա ցաւ ունի: մի անբուժելի ցաւ... Նա լցված է վերքերով, որոնք անհասկանալի են և ծածկված մարդկանց:

Կարճատես աչքերից: Այդ է պատճառը, որ նա անհանգիստ է լինում: Ո՞հ, այդ խոցերը մրկածուփ ծովի նման եռ են գալիս սրտիս մէջ: Ա՛խ, նրանք այնքան բազմաթիւ են, որ ամբողջ աշխարհը չի տանի. բացի սրտից և նեղումութիւնից՝ ոչ մի բան չի կարող պարտակել նըրանց: Այն, այդ անդարմանելի ցաւերն իրանց համար բուժիչ հնար ըլ գունելով՝ մեղ հետ գերեզման կ'իջնեն մեղանից անբաժան մնալու, մինչեւ որ կ'անյայտանայ մեր մարմնի վերջին հիւլէն... Սակայն զարմանալին այն է, թէ վշտերի այն ծովը, որ աշխարհը չի կարող տանել, ի՞նչպէս է տեղաւորվում փոքրիկ մսակոյտի մէջ, կամ նեղլիկ դետնախորշում: Օ՛, այդ հանելուկը ծածկված է մեր մտքի խորազնին աչքերից անսահման յաւիտենականութեան ձեռքով: Հոգուս այս մուայլ պատկերը, որ արձագանք է մուայլ, անմիտ շրջապատի և կորցրած ու չիրագործած իղձերի, թող նիւթ տայ և յիմարացնի թատերագրին, թատերագիրը՝ գերասանին, գերասանն՝ ամբոխին: Մուայլ կեանքի գրամաներն էլ մուայլ կը լինեն, որոնց հերոսների հոգերանական վերլուծութեան համար գրականագէտները, հոգերաններ դարձած՝ գլուխ պէտք է ջարդեն... Ի՞նչ պէտք է սպասել ողորմելի, խզճուկ կեանքից: Դատապարտութեան նզովք եմ թողնում ես այն յետնորդին, որ մեր հոգերանութիւնը հասկանալու համար չի դիմի մեր շըրջապատող կեանքին: Օ՛, այդ կեանքն է, որ իր մէջից ծնում է ամենասոր արարածին և ամենաբարձր հանճարին. այդ կեանքն է, որ ամեն ինչ ծնում է և ամեն ինչ մեռցնում: Կեանքը կապակցութիւն է անվերջ գէսքերի, միտքն՝ անվերջ խաղերի: Սակայն հեռու ինձանից, մռայլ մտքեր... Արդէն գիշերից բաւական անցել է. վաղն ինձ շուտ է հարկաւոր: Հանդիսաւ թողէք ինձ. գուք էլ գնացէք հանդստանալու: (Գնում է):

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԱՐԱՐՎԱԾ.

Ա.Ռ.Ա.ԶԻՒ ՏԵՍԱՐԱՆ.

Սեննակ:

Ներս են մտնում ՊԵՏՐՈՍԸ և ԳԵՂԻՉԸ:

Գէորգ. Գիտես, թէ մեր վարժապետն ինչեր է սկսել անել և ում հետ է նստում, վեր կենում։ Նա, որ մեզ հետ վայել չի համարում յարաբերութիւն պահպանել, մեզ քթի տակով է նայում և բանի տեղ չի դնում, մի քանի ընկած-դուրս եկած ջահէների հետ է ընկերացել և սկըսել նրանց հետ քէֆեր սարքել։ Հենց այսօր առաւատից նրանց հետ գնացել է մօտակայ այդիներից մէկում քէֆ անելու։

Պետրոս. Այս, լսել եմ. Մկրտիչն ինձ ասեց։ Նա շտապել է վերջին անդամ հանել իր փափագը բնութեան գեղեցկութիւնից և տալ իր վերջին հրաժեշտը ննջող բնութեանը, քանի գեռ վերջինս չի շտապել թօթափելու իր զարդը և ժամանակաւորապէս քուն մտնելու։ Նրա բախտից լաւ և տաք եղանակ է արել։

Գէորգ. Սակայն նա վերջը կը փոշմանի, երբ արդէն

ուշ կը լինի։ Նա չարաչար սխալվում է։ Մեղ իւրաքանչիւր անդամ հանդիսատ չի տալիս. ամիսը լրանալուն պէս՝ դրամ է ուղում, և կամ մի քանի ամսվանը միանդամից պահանջում, և չի թողնում, որ մի րոպէ անդամ ուշանայ իր ոռճիկը. իսկ այսօր, տես, թէ նա ինչի վրայ է գործադրում այդ փողը։ Դու գիտես, թէ ինչպէս է կառավարվում մեր դպրոցը, որ բոլորավին պատրաստի դրամագլուխ չ'ունի և մի կերպ գլուխ է պահում. գիտես նաև, թէ ինչ չարչարանքով իւրաքանչիւր անդամ դռնից դուռն ենք ընկնում և մուրում, որ նա մեզ գլխացաւանք չը պատճառի։ Սակայն այսօր նա, բաւական չէ, որ մեզ մարդատեղ չի դնում, իզուր և անխնայ վատնում է այն կոպէկները, որոնք մեր և հասարակութեան տանջանքի գնով են ձեռքբերված։

Պետրոս. Այդ բանում դու սխալվում ես. ամեն մարդ իր աշխատանքի տէրն է, ինչի վրայ գործադրի, գործադրի։ Նա լիակատար տէր է իր ճակատի արդարքրտինքի, թէկուզ նրան ամենադատարկ բանի վրայ գործ դնի։ Հետեւապէս այդ մեզ իրաւունք չի տալիս խօսել նրա վրայ։ Մեղ մնում է միայն չափել մարդկանց գործերի բարոյական արժէքը։ Իսկ ինչ վերաբերում է այն բանին, որ նա մեծամիտ է և մեզ վրայ խէթ աչքով է նայում, դրա գէմ ես ոչինչ չ'ունեմ ասելու. այդ մենք կարող ենք պահանջել նրանից։

Գէորգ. Ուրեմն էլի մեղաւոր է նա։

Պետրոս. Սակայն այդ էլ հասկացողութիւնների տարբերութեանը պէտք է վերագրել. գուցէ մենք ենք նրան առիթ տուել։ Մենք մեր տեսակէտից կարող ենք նրան մեղադրել, նա էլ իր տեսակէտից կարող է մեզ մեղադրել. ինչ դուրս եկաւ գրանից։ Նա կրթված մարդ է. նրա պա-

Հանջնելը լայն են և բազմակողմանի, — նա մեր ընկերը չէ։ Այդ կողմից նա մասամբ իրաւունք ունի, այնպէս որ համարեա թէ չենք կարող մեղադրել նրան։ Հարցի վրայ պէտք է լայն հայեացքով նայել և ոչ թէ սահմանափակ մտածողութեամբ։

Գէորգ. Հէնց ինչքան նրա մասին խօսոք ընկաւ, դու նրան եռանդուն կերպով պաշտպանեցիր։

Պէտրոս. Նա իմ եզրացրդին, կամ քեռորդին չէ, որ պաշտպանեմ, կամ չը պաշտպանեմ։ Ես ասում եմ այն, ինչ որ իմ ուղեղն ու խիզն են թելադրում։ Քո այդպէս տրամադրվելու պատճառն այն է, որ դու մասամբ կրօնվ ես վերաբերվում դէպի նա, որ միանդամայն անտեղի է։ Հէնց արդարութեամբ դատենք. նա երիտասարդ է, անհանդիստ ուղեղի և արեան տէր։ Այժմ նրա այնպիսի հասակն է, որ արիւնն իր քմահաճութիւններն է կատարում։ Մենք, բոլորս, երիտասարդ ենք եղել և գիտենք այդ։ Նա չի կարող մարած, կենդանութիւնը կորցրած և սառն ուղեղների նման մտածել։ Նա զվարճանալ է կամենում, քանի դեռ կայտառ է և եռուն կեանքի տէր. մանաւանդ որ նա կարդացել է և այդ բանը լաւ գիտէ։ Նա ուղում է կեանք վայելել, քանի դեռ չի անցել իր կեանքի սիրուն, թարմ գարունը, և, ինչպէս մի անազատ թռչուն, միշտ ջանքեր է գործ գնում իր վանդակի պատերը խորտակել և թռչել, գնալ, աղատ օդի մէջ աղատ երդելու սաւառնել։ Բնութիւնից տրված մի պահանջ է, որ միաքն աղատութիւն է պահանջում, կաշկանդումներ չի սիրում։ Հետեւագէս այդ տեսակէտից ևս մենք չենք կարող մեղադրել նրան։

Գէորգ. Ել ի՞նչ ասեմ, երբ դու այդպէս ես խօսում։ Շատ լաւ կը լինի, եթէ նրա մօտ էլ այդպէս խօսես. դու դրանով խրախուսում ես նրան։

Պէտրոս. Այ քեզ զարմանալի բան։ Նախ և առաջ ես նրա մօտ չեմ խօսում այն, ինչ որ քեզ հետ, և երկրորդ՝ այստեղ խրախուսելու բան չը կայ։ Ես ասում եմ, որ մարդը երիտասարդ է և կամենում է զվարճանալ։ Մենք ինչ իրաւունք ունենք բռնանալ ուրիշի կամքի վրայ, մանաւանդ որ նա օտար է և միջոց է վնալրում իր օտարութեան վիշտը վարատելու. իսկ մենք, բամբասասիրութեան որդիներս, սովոր ենք այդ, և ընդհանրապէս իւրաքանչիւր քայլ, այլպէս բացատրելու։ Նա կին չէ, որ հարեմուհունման շորս պատի մէջ փակվի, նստի և ոչ իսկ մեր ծառան, որ մեր համաններին կուրօնէն հնազանդիւ. Բաւական է վերջապէս. մինչեւ երբ գատենք այդպէս։

Գէորգ. Որ դու էլ գատես այսպէս...

Պէտրոս. Դու կատակ իմացիր։ Ժամանակ է վերջապէս թափ տալ մեղանից հնութեան փոշին և լուսաւորութեան լայն հայեացքներով ըմբռնել մարդկային բարձրագոյն հոգին։ Նա եկել է այստեղ լուսաւորութիւն տարածելու և հետևապէս պարտաւոր է ամեն բան անձնական կեանքի օրինակով ցոյց տալու։ Նա քաղաքացի է։ Մենք գիտենք, թէ ինչպէս քաղաքներում կեանք եռում է մինչեւ խոր գիշեր և մարդիկ վայելում են բազմազան զվարճութիւններ։ Իսկ այստեղ, այս մենաւոր, խուլ անկիւնում, կեանքը դաշտարում է երեկոյեան գէմ՝ արևի մայր մտնելու հետ, և մարդիկ փակվում են տներում մինչեւ լուսադէմ։ Հետեւաբար ի՞նչպէս դիմանայ անսօվոր սիրտն անսօվոր կեանքին։ Մենք, փոխանակ շնորհակալ լինելու այդօրինակ զոհողութեան՝ խառնում ենք դառնութիւն նրա կեանքի դառնութեանը։

Գէորգ. Այնպէս ես անում, որ քիչ է մնում վեր կենամ և դնամ։

Պիտու. Մի շտապիր, կաց. քիչ էլ համբերութիւն ունեցիր, չամբերութիւնը կեանք է: Մի վրդովիր. վըրդովմունքը կեանքի համար վտանգաւոր է: Ես այսօր քեզ պէտք է պարզեմ նրա կեանքի բուն էութիւնը, որ դու համոզվես իմ ասածների մէջ: Դեռ միջանկեալ ասեմ, որ նա գուցէ և չի ճանաչել ինձ, քանի որ չեմ բացվել նրա մօտ, միայն ես չեմ կարող ծածկել արդարութիւնը: Նա, մինելով ճաշակի տէր, մարդ՝ մինչև անդամ զոհովութիւն է գործ գնում և իր ճաշակի մէջ: Նա, որ զիտէ նկարագրել ճաշակաւոր կեանքի բոլոր նրբութիւնները և արեւելան ճաշակով զարդարված հրաշալի սենեակների գեղեցկութիւնները, այսօր սանձում է իր ճաշակը և ապրում անշուք սենեակի անճաշակ կահաւորութեան մէջ, ինչ է, որ իր ազգի զաւակներին կրթի. սակայն ազգը լաւ է գընահատում նրան և նրա նմաններին...

Գէորգ. Աւետարան մի կարդա իմ գլխին: Գնանք գիւղի մէջը և տեսնենք, ինչ կայ:

Պիտու. Դեռ չեմ բաց արել, որ կարդամ: Շարունակութիւնը լսիր: Աշխարհում ամեն մարդ պէտք է իր խելքով առաջ գնայ. որովհետեւ քիչ չէ պատահում, որ մենք, ուրիշներին լսելով՝ մեր անձը վտանգի ենք ենթարկում և ապա՝ թէ մեզ և թէ ուրիշներին մեղադրում,— մեզ այն պատճառով՝ որ լսեցինք ուրիշներին, իսկ նրանց որ լսեցրին մեզ: Բայց եթէ մենք միայն մեզ լսենք, ոչ դարձեալ կարող ենք սխալվել, այն ժամանակ կը մեղադրենք, եթէ մեղադրելու լինենք, մեզ և ոչ թէ ուրիշներին: Այժմ վերջացրի. եթէ շտապում ես, գնանք:

Գէորգ. Այն, գնանք, գնանք. եթէ շատ մնանք, դու շատ բաներ կ'ասես և ինձ խելքից կը հանես: (Դուրս են զնուլ):

ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ.

Այսի:

Մանում են Տիգրանը, Ալբիբէդը, Արշակուրը, Վաշինսկը և նրանց ուրախակից երիտասարդները:

Սարիբէգ. Այսօր մենք բաւական լաւ դրութեան մէջ ենք. ինչ կը լինէր, որ մեր կեանքն այսպէս անց կենար: Տիգրան. Այդպէս կ'անցնի, եթէ յիմարները մեզ չը խանդարեն:

Արշակ. Ուրեմն օդովինք, քանի գեռ յիմարների ձեռքը չենք լնկել:

Վալինակ. Եւ քանի գեռ ժամանակը մեր ձեռքին է:

Սարիբէգ. Շտապեցէք, ով շատ օդովի, աշխարհը նըրանն է:

Տիգրան. Այս տրամադրութեան մէջ մեզ լաւ կը սազի փիլիսոփայութիւններ անել: Միրդը հոտում է թանգութիւնից...

Արշակ. Շորին, ինչպէս և մարդին, քանի գեռ նոր է, լաւ պատիւ կը տան. բայց հէնց որ հնացաւ, էլ երեսին չեն նայի:

Վալինակ. Շորն առնելուց յետոյ էժան կը ծախվի, իսկ հնանալուց յետոյ աւելի էժան:

Տիգրան. Դէհ, գնաք, մնացածներդ էլ, ձեր ոյժերը փորձեցէք խեղկատակ փիլիսոփայութեան մէջ:

Արշակ. Այդպիսի փիլիսոփայութեան մէջ շնորհք ունենալն էլ մեծ բան է:

Սարիբէգ. Որ սակայն ամեն մարդի տրված չէ:

Տիգրան. Հապա գուշակեցէք. կեանքը կատակ է, ձաղը, թէ անառակ կնոջ մի խորամանկ ժպիտ:

Արշաւիր. Այդ բոլորից էլ մաս ունի, բայց ոչ մէկի արժէքը չ'ունի:

Տիգրան. Կեցցես. գինու ազդեցութեան տակ լաւ փիլիսոփայ ես գարձել:

Արշաւիր. Գինին երբեմն ճարտասան փիլիսոփայ դարձնելու յատկութիւն ունի:

Տիգրան. Դէհ, իւրատեսակ փիլիսոփաների կաճառ, ձեր լուման ձգէք անհաստատ փիլիսոփայութեան գանձանակի մէջ և գերազանցէք անքուն դիշերներ փիլիսոփայութեան վրայ մտածողներից:

Արշաւիր. Կեանքն աշխատում է մեզ ծաղրել:

Սարիբէգ. Նախ քան նրա ծաղրելը՝ մենք նրան կը ծաղրենք...

Վաղինակ. Կեանքը մրցութիւն է և ասպարէզ քաջ մրցակիցների:

Արշաւիր. Նա պատկանում է մտքերի վրայ աղդողներին:

Սարիբէգ. Աւելի շուտ միտք մոլորեցնողներին և յաղթութիւնը տանողներին...

Տիգրան. Զայնախօս չը կայ, որ գինու ազդեցութեամբ տաքացած ուղեղների տափակ և ծակ փիլիսոփայութիւններն ընդօրինակի և լուրջ ուղեղներին հաղորդի:

Արշաւիր. Գինին այն տեսակ կախարդական զօրութիւն ունի, որ երբեմն կտրիչ լեզուն կը պապանձեցնի և երբեմն էլ համրին լեզու կը տայ և շատախօս ճարտասան կը դարձնի, այնպէս որ նա ինքն էլ կը զարմանայ, թէ ինչպէս իր մունջ լեզուն բացվեց, ոգեսորվեց և խօսել սկսեց ու գինով տարվածներին զարմացրեց:

Վաղինակ. Գինին բոպէապէս թագաւորեցնում է և բոպէապէս գահընկէց անում, բոպէապէս ուրախացնում է և բոպէապէս տիրեցնում:

Տիգրան. Նա բոպէապէս բարձրացնում է և բոպէապէս ստորացնում:

Սարիբէգ. Նա բոպէապէս գործում է ոճիրը և բոպէապէս վոշմանում: Նրա գերիներից ոմանք կ'արտասկեն ոմանք կ'ուրախանան ու կեանքի գերիներին կը ծաղրեն...

Տիգրան. Լաւ, թողնենք այդ բոլորը և շարժվենք դէպի տուն. արդէն բաւական կերել ենք, խմել և ուրախացել:

Արշաւիր. Գնանք, արդէն քէֆներս լաւ տեղն են:

Սարիբէգ. (Մի կողմ): Ինչպէս երեսում է, այստեղ չի յոջողվելու. փորձենք տանը... (Տիգրանին): Այս, դընանք, բայց դէպի մեր տուն՝ մեր ուրախ արածագրութիւնը շարունակելու և լիակատար անելու: Մրցութիւնը կատարելութեան է ձգտում:

Տիգրան. Ես այլես կարիք չեմ դգում:

Արշաւիր. Մեր չափն էլ տեղն է:

Վաղինակ. Այս, չափից աւելին հարամ է:

Սարիբէգ. Մինչև տուն հասնելը չափը կը դատարկվի և նորից լցնելու կարիք կը դգացվի:

Արշաւիր. Լաւ, գնանք, տեսնենք. եթէ կարիք դգացինք, ներս կը մտնենք:

Սարիբէգ. Պուք զիտէք. եթէ չը դաք էլ, զօռով կը տանեմ: (Գնում են):

ԵՐՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ.

Սենեակ:

Ներս են մտնում ՄԱՐԹԱՆ և ՇՈՂԱԿԱԹԸՐ:

Մարքա. Հարկաւոր է մաքուր և հաւաքած պահել տուշը. դուցէ եղբայրդ այն մարդկանց բերի տուն: Երէկ առում էր, թէ կարող է պատահել, որ բերեմ:

Շողակար. Ի՞նչ կայ որ. տունը սովորականի պէս հաւաքած է: Ո՞վ ուզում է, թոգ դայ, տեսնի: Եկողների տները սրանից լաւ են:

Մարքա. Եթէ նրանց տանն էլ քեզ նման հասած աղջիկներ լինեն, մաքուր և հաւաքած կը պահեն իրանց տըները, որպէսզի նրանց ուզողները շատ լինեն: Աղջիկները մինչև մարդի գնալը շատ եռանդով են աշխատում իրանց ծնողական յարկերի տակ. բայց հէնց որ ամուսնանում են, ծուլութիւնը նրանց կոխում է և նրանք կորցնում են իրանց աշխատելու նախկին եռանդը:

Շողակար. Շատ լաւ, ասածդ ի՞նչ է: Այստեղ այդպիսի նպատակ չը կայ. առանց այն էլ իմ պարտքն է ամեն օր մաքուր պահել տունը, ուշադրութիւն չը դարձնելով, թէ ով կը դայ և ով կ'երթայ: Եւ ես կատարում եմ բախտի վիճակածն ամենայն սրբութեամբ:

Մարքա. Ինչու նպատակ չը կայ: Է՞հ, ով դիտէ, աշխարհ է, Տիգրանը կին չ'ունի, դուցէ քեզ առնի:

Շողակար. Ինչեր ես ասում. այն էլ ում, —ինձ: Նախ և առաջ՝ ես դրա մասին չեմ մտածում և երկրորդ՝ միթէ նա դիւդից աղջիկ կ'առնի: Նա ինձպէսների վրայ չի էլ նայի:

Մարքա. Աշխարհ է, այդ չի կարելի ասել, այնպէս որ կարող է պատահել: Մէրը գիւղ և քաղաք չի հարցնում: Բայց, Շնդակաթ, ի՞նչ լաւ կը լինէր, որ քեզ առնէր: Դու ուսում առած մարդ կ'ունենայիր, իսկ մենք ուսում առած փեսայ. մի խօսքով՝ շատ լաւ կը լինէր: Բայց ով է տուել մեղաւորին արքայութիւն:

Շողակար. Դեռ շատ պէտք է ասես:

Մարքա. Երանին նրան, ով նրա կինը կը լինի: Տեսնում ես, ի՞նչ գեղեցիկ հասակ ունի, —ոչ շատ բարձր և ոչ շատ ցածը, —քնքո՞ւշ կազմվածք, մարմնի առողջութիւն, այտերի կարմրութիւն, գեղեցիկ նորածիլ մօրուք, զոյդ սեսրակաչեր, գեղեցիկ միջակ քիթ, գանգուր մազեր, մարմնի ըստիտակութիւն, մորթու գուրեկան քնքշութիւն և այլն, մի խօսքով՝ ամբողջ մարմնի գեղեցիկ համաչափութիւն և, որ ամենից գլխաւորն է, խելք, իմաստութիւն և կրթութիւն: Շատ քիչ մարդ կը պատահի, որ այդ բոլորը միացած լինի նրա մէջ: Երանին նրա մօրը, որ այդպիսի զաւակ ունի: Տեսնես, ի՞նչպէս է համբերում մայրական սիրուը, որ բաժանվել է իր սրդուց: Կամ ի՞նչպէս է պատահել, որ այդպիսի գեղեցիկ զաւակն ընկել է գիւղ տեղ, մեզ նըման կոշտ ու կոպիտների մէջ: Ես իմ Աստուածը, լաւ սիրա է Տիգրանի կողմից: Հիմա նրա մայրը նստում է նրան է յիշում, վեր է կենում նրան է յիշում, մի խօսքով ման դալիս, հաց ուտելիս, քնելիս, երազում և այլն, միշտ և միշտ նրան է յիշում: Հիմա մտածում է, թէ արդեօք ի՞նչ է անում իմ որդին, —կօշտ է, թէ սոված. ուրախ է, թէ տխոնւր. քնած է, թէ արթոն. առողջ է, թէ հիւանդ. մի խօսքով՝ թէ նա ի՞նչ վիճակի մէջ է օտար աշխարհում: Դու այն ժամանակ տես նրա մօր սիրու, եթէ Տիգրանը մինուճար լինի. և աւելի ես, երբ նրա ծնողները զառա-

մեալ լինեն և գերեզմանին մօտեցած։ Ո՛, գժուար է, չափից դուրս գժուար նրանց դրութիւնը։ Հիմա գուցէ նրանց աջքը ճանապարհի է, թէ երբ գռնից ներս կը մտնի Տիգրանը։ Թուցէ սպասում են նրան ամուսնացնել և ապա հողը մտնել։ Բայց եթէ, Աստուած չ'անի, հիւանդ լինեն, կամ հիւանդանան, այն ժամանակ ի՞նչ կը լինի նրանց դրութիւնը։ Իսկ եթէ առողջ լինեն և, Տէր մի արասցէ, Տիգրանին մի բան պատահի, նրանք միշտ սե-սե երազներ կը տեսնեն և կը տանջվեն նրանց բացատրութիւններով։ Ե՞ն, մի խօսքով՝ օտարութիւնը շատ վատ բան է երկու կողմի համար էլ։

Նողակար. Այդ ի՞նչ լաւ փիլիսոփայ ես եղել, կամ ի՞նչ լաւ ընդունակութիւն ունես խոր թափանցելու ուրիշի դրութեան մէջ։

Մարքա. Ուրիշի դրութեան մէջ խոր թափանցելու համար հարկաւոր է ունենալ զգայուն սիրտ և թափանցելու կարողութիւն, ուրիշ ոչինչ։ Սակայն ինձ մի բան է զարմացնում, թէ ի՞նչպէս են ծանօթացել միմեանց հետ եղբայրդ ու Տիգրանը։

Նողակար. Զարմանալու ոչինչ չը կայ. սարը սարին չի հանդիպի, մարդը մարդին կը հանդիպի։

Մարքա. Լաւ, թնդ այդպէս լինի. սակայն ես մի բանից եմ վախենում, —խօստովանք լինի, որ եղբայրդ չար բնաւորութիւն ունի։ Նա կատաղում է խմած ժամանակ։ Շատ քիչ է պատահել, որ խմի և անախորժութիւն չ'անի։ Աստուած ոչ անի, որ այսօր էլ մի անախորժութիւն անի և խեղճ Տիգրանին փորձանքի մէջ ձգի։ Ես այդ կողմից էի ասում, թէ ի՞նչպէս է պատահել, որ մի հեղ բնաւորութիւն մի չար բնաւորութեան հետ է ընկերացել։ Բայց

ինդրում եմ, եղբօրդ պաշտպանելու մտքով՝ այս բոլորը չը հաղորդես նրան։

Նողակար. Ինձանից տեսել ես այդպիսի բան երբեկից։

Մարքա. Ո՛չ, չեմ տեսել Քո նախկին ընթացքն ինձ վստահութիւն ներշնչեց այդ մտքերն արտայայտելու։ Բայց և այնպէս՝ ես պարտք համարեցի քեզ զգուշացնել, ինչպէս որ այդ վայել է ամեն մի ծածկախօսութեան դէպում։

Նողակար. Բայց սուս... Կարծես, նրանք գալիս են։ Գնանք միւս սենեակը։ (Դուրս են զնում)։

Ներս են մտնում ՍԱՐԻԲԵԳԸ, ՏԻԳՐԱՆԸ, ԱՐՇԱԽԻՄԸ և ՎԱՂԻՆԱԿԸ։

Մարիբէզ. Դուք համեցէք, նստէք. իսկ ես տեսնեմ, թէ ի՞նչ կայ ուտելու, կամ խմելու։ Մեր ընկերները շատ զոռելուց յետոյ էլ չ'եկան, մենք առանց նրանց կը շարունակենք մեր քէֆը։

Արշախ. Հէնց լաւը նրանք արեցին, որ չ'եկան։ Իսկ կապէս գալն աւելորդ էր, որովհետեւ գեռ երկար ժամանակ է պէտք մեր կերածն ու խմածը մարսելու համար։ Արի, դու մեզ լսիր, ոչինչ հարկաւոր չէ։

Մարիբէզ. Ուրիշի տան մէջ տնօրինութիւն պէտք չէ։ Հիւրը տանտիրոջ էն է։

Տիգրան. Խսկապէս անտեղի են այդ խօսքերը։ Ընդունէք, որ մենք եկել ենք հէնց այնպէս՝ խօսելու համար։ Հետեապէս այստեղ տնօրինելու, կամ չը տնօրինելու խընդունէք կայ։ Միթէ մարդ անպայման ուտել-խմելու համար է գնում ուրիշի տուն։

Արշախ. Իհարկէ ոչ նրանք, որոնք այդ նպատա-

կով են գնում, առաջնորդվում են անասնական հակումներով:

Վաղինակ. Այդպիսիները մոռանում են, որ պէտք է գնան ժամանակ անցկացնելու համար և ոչ թէ այդ նըլպատակով:

Սարիբէզ. Սակայն վաս չի լինի, եթէ այդ էլ լինի... լաւ, ինչու ենք երկարացնում. ես ուզում եմ գնալ, մեր տնեցիներին այցելել: Միթէ պէտք է խլէք այդ իրաւունքըն ինձանից:

Տիգրան. Այդ ուրիշ հարց է: (Սարիբէզը դուրս է զընում):

Արշաւիր. Նրա մայրը չը մեռնի, որ իր ասածը չ'անի: Ի՞նչ ուզում էք, ասէք. նա այնպիսի բնաւորութիւններից է, որ անպատճառ իրանը կը պնդի:

Վաղինակ. Ի՞նչ ուզում է, թող անի, միայն անախորժութիւն չ'անի: Աչքս չ'առնի, նա այսօր անախորժութիւն չը պատճառեց սովորականի հակառակ. տեսնենք, ինչպէս կը վերջացնի:

Տիգրան. Միթէ նա այդպիսի բնաւորութիւն ունի: Ուրեմն գայ, թէ չէ, մենք մի կերպ վեր կենանք և դընանք: Դրաման հարկաւոր է լաւ վերջացնել: (Մի կողմ): Ճիշտ է, որ մարդ ճանաչելու համար պէտք է սպասել:

Արշաւիր. (Տիգրանին): Չեր սիրուը երկիւղ մի գցէք. քանի որ մենք ձեզ հետ ենք, ձեզ ոչինչ չի պատահի: Է՛հ, մեր վաղինակն է, ասում է էլի: Նա տղայ է, մի երկու անդամ արել է, հօ մշտական չի անելու... Արդէն մեծացել է, խեւը դլուխն է եկել: Տարիները թեթևաօլիկին անդամ խելքի են բերում, ուր մնաց նրան... (Դրսից լընլում են աղմուկ եւ ծեծի ծայն):

Վաղինակ. Այս ի՞նչ աղմուկ է:

Արշաւիր. Եւ ի՞նչ տուր ու դմիոց:

Սարիբէզ. (Դրսից): Քեզ ինչ որ ասում են, այն էլ կատարիր, առանց մի բառ անդամ արտասանելու: Միթէ տան մասին միայն գու դիտես, և այդ իմանալը միայն կանանց է տուած: Զէ որ ես, երէկ չէ, անցեալ օրը բերեցի. հէնց նրանից եմ ուզում: Մի բան որ չը լինի, ես չեմ ուզի: Ինձանից ասել, քեզանից կատարել, առանց այլուայլութեան:

Մարքա. (Դրսից՝ լալով): Դէհ, լաւ. ես ոչինչ չ'ունեմ ասելու: Ասածս այն է, որ դուք կարդին խմել էք. էլ ի՞նչ կարիք կայ այստեղ նորից գինի պահանջելու և իզուր տեղն ինձ ծեծելու: Միթէ ես ձեր վատն եմ ուզում:

Սարիբէզ. Քեզ ուրիշ խօսք չի հասնի, բացի ասածս կատարելուց:

Մարքա. Ամեն գէպըում, բայց ոչ թէ յիմարութեան:

Սարիբէզ. Ա՛ռ քեզ յիմարութիւն: (Նորից ծնծում է կնոջը):

Տիգրան. Ահա ձեզ անհամութիւն: Սա ի՞նչ բան է: Նախագդացումս կատարվեց...

Արշաւիր. Կատարվելու վրայ է... Տեսնենք, ի՞նչ բան է:

Վաղինակ. Իզուր է. ամեն ինչ ինքն իրան կը պարզվի: (Արշաւիրն ու Տիգրանը շտապով դուրս են գնում): Մի վաս բան չը պատահի, լաւ է: Մենք, բոլորս, եթէ այստեղից պատռով դուրս գանք, — այդ նոյնպէս լաւ է: Թէկ հետաքրքիր է իմանալ, թէ ի՞նչ է պատահել, սակայն չէզոքութիւնը լաւ բան է, մանաւանդ այն գէպըում, երբ հարցն ընտանեկան է և դլուխը կարմիր աւետարանով տաքացած: Շտապել հարկաւոր չէ. հետեւանքն ինքն իրան կը պարզվի: Որտուից յետոյ անձրև կը գայ: Բայց նրանք գալիս են այստեղ...

(Ներս է մտնում Արշակիրը՝ զօռով ներս քերելով Սարիբէգին. Նրանց յետեւից մտնում է Տիգրանը):

Արշաւիր. (Սարիբէգին): Ա՛խր, ամօթ չէ. ափառա չես դու:

Սարիբէգ. Եթէ թողնէիր, դլուխը կը ջարդէի: Նա համարձակվի ինձ խօսք յետ դարձնել:

Վաղինակ. (Մ'ի կողմ): Անսպասելի էր: Լաւ կը լինի, որ գնանք. գուցէ սա երկունքի սկիզբն է: Բայց մի բոպէ էլ սպասենք...

Տիգրան. (Սարիբէգին): Ես այդ չեի սպասում ձեզանից: Յիմարութիւն է ձեր կողմից այդպէս կոպտութեամբ և անգիտութեամբ վերաբերվել դէպի ձեր կինը:

Սարիբէգ. Հարցը ձեր իրաւունքից դուրս է և ձեզ չի վերաբերում, այն էլ իմ տան մէջ: Խնդրեմ, յետ առնէք ձեր խօսքերը, ապա թէ ոչ՝ այս բոպէին ես ձեզ էլ կը խառնեմ: (Մ'ի կողմ): Մօտենում է յարմար բոպէն...

Տիգրան. Ընդհակառակը ձեր իրաւունքից դուրս է, ուստի և դուք յետ առէք ձեր սպառնալիքները, որոնք յիմարութիւններ են և տաքացած դլիսի արդիւնք:

Սարիբէգ. (Մ'ի կողմ): Ինչպէս երեսում է, վճիռն ուրիշ ելք պէտք է ստանայ:

Արշաւիր. (Տիգրանին): Է՞հ, ձեր ի՞նչ գործն է, պ. Տիգրան. դլուխը քաըը, թէ ի՞նչ է անում: Ինքն է իմանում իր տունը: Զներ էք խառնվում և դլուխ դնում: ոչինչ օգուտ չը կայ: Եկէք, դուրս գանք, գնանք:

Տիգրան. Գնանք: (Ուզում են գնալ):

Սարիբէգ. (Բոնելով Տիգրանի թեւից): Կացէք... Ուրեմն յետ չեք առնում ձեր խօսքերը:

Տիգրան. Ո՞չ, որովհետեւ ճշմարտութիւն եմ պաշտպա-

նում: Բայց թողէք իմ թեւ: (Ուժով դուրս է հանում իր թեւը նրա ձեռքից):

Սարիբէգ. Ո՞չ...

Տիգրան. Ո՞չ:

Արշաւիր. (Սարիբէգին): Ի՞նչ ես դու այդքան բանի յետեւից ընկնում: Թող, գնանք մեր բանին:

Վաղինակ. Արշաւիրը ճիշտ է ասում. թող, գնանք մեր գործին: (Մ'ի կողմ): Հակառակին սուրն էլ վրան է:

Սարիբէգ. Մ'ի շտապէք. այս բոպէին կը թողնեմ... (Տիգրանին): Նորից կրկնում եմ. յետ չեք առնում ձեր խօսքերը:

Տիգրան. (Բարկացած): Զեղ ասեցի, որ ոչ:

Սարիբէգ. (Մ'ի ակնթարթում հանում է ինանչալը և խրում Տիգրանի վորը): Առէք ձեղ ոչ, — յիմարութիւն և տաքացած դլիսի արդիւնք... Դուք կարգացել էք, բայց լմա չեք կարգացել. բորբոքված կրակը չեն խառնի:

Տիգրան. (Վայր ընկնելով): Ո՞հ, անգնեթ, անհոգի, այդ ի՞նչ արեցիք...

Արշաւիր. (Սարիբէգին): Ա՛խ, անիրան... (Բոնում է Տիգրանին եւ զոռում): Օգնեցէք. Տիգրանը չարագործութեան զոհ գնաց... (Սարիբէգն շտապով անհետանում է): Բոնեցէք չարագործին... (Արտասլելով): Ո՞հ, սիրտս... Խեղճ Տիգրան...

Վաղինակ. (Յուզված): Ո՞հ, Աստուած իմ... Արիւնը հոսում է... (Շիոթմած այս ու այն կողմն է ընկնում):

Շտապով ներս են մտնում ՄԱՐԹՍՆ և ՇՈՂԱԿԱԹԸ:

Մարք. (Մ'ի կողմ՝ սարսափած): Ա՛խ, անխիզ... իմ պատճառով... (Հալիս է):

Շողակար. (Վախեցած): Եղբայրու... Այս ի՞նչ ուեքար ընկաւ մեր գլուխն...

Արշաւիր. (Վաղինակին): Վաղինակ, օդնութեան կանչիր. չարագործն անյայտացաւ, շնուռ: (Վաղինակն շտապով դուրս է զնում): Պէտք է յայտնել, որ շուտով բռնեն նրան: (Մարթային): Մի շնր բեր, շուտով վերքը կապենք, որ արիւն չը գնայ: (Մարթան շտապով դուրս է զնում և մի սպիտակ շոր ձեռքին վերադառնում է):

Մարք. (Շորը ցոյց տալով): Այս կը լինի:

Արշաւիր. Բեր, բեր, լաւ է: (Երկուսով աշխատում են կապել վերքը):

Տիգրան. (Հառաշելով): Ա՛խ...

Շողակար. (Մոտենալով՝ աշխատում է օգնել): Ենոքներս էլ տանը չեն: Արիւնն էլի դնում է:

Արշաւիր. (Շողակաթին): Դու թնդ, մենք կը կապենք. շուտով մարդ ուզարկիր քահանային կանչելու: (Շողակաթն շտապով դուրս է զնում): Տիգրան ջան, ասէք, տեսնեմ, ի՞նչպէս էք դդում ձեզ: (Լալիս է): Բժիշկ էլ չը կայ այս անտէր տեղում:

Տիգրան. Ո՞հ, մի հարցնէք...

Ներս են մանում վԱՐԻՆՍԿԻ, ՊԵՏՐՈՍԸ, ԳԵՂԻՐԳՅ, ՄԿՐՏԻՉԻ և մի քանի գիւղացիներ:

Վաղինակ. (Արշաւրին): Դէհ, հիմա լաց եղիր... Զարագործն անյայտացաւ: Պէտք էր դրանից հեռու մնալ:

Արշաւիր. Ո՞վ էր դուշակում, թէ այդպէս կը վերջանայ: Ա. Գիւղացի. Այդպէս չը պէտք է վերջանար...

Մկրտիչ. (Թրկնելով Տիգրանին): Ա՛խ, իմ երիտասարդ պարսն... Այս ի՞նչ օյին եկաւ ձեր գլուխն:

Պետրոս. (Արշաւրին): Ասա, պատմիր շուտով, թէ ի՞նչպէս եղաւ:

Արշաւիր. Դեռ պատմելու ժամանակը չէ. յետոյ կ'իւմանաք:

Պետրոս. Սակայն ցանկալի է շուտով իմանալ: (Գիւղացիները փոփում են միմեանց մէջ):

Գիւրգ. (Պետքուին): Վերջը լաւ տեղ միջնեց...

Պետրոս. (Հեղնօրէն): Դու էլ ժամանակ գտար...

Արշաւիր. Սուս... կարծես, Տիգրանն ուզում է խօսել: (Տիրում է լոռվթին):

Տիգրան. (Արշաւրի եւ Մկրտչի գրկում): Ո՞հ, անմիտ կեանքից վերջն այս վիճակվեց ինձ... Ահա ձեզ իղձերի, ոսկի երազների պսակը... Դաւք, անմիտ ծրագիրներ, որ մի բոպէում կազմվում էք և մի վայրկեանում օդի մէջ ցնդում, հեռացէք... գնացէք... իմ հիւծվող մարմնից... Բայց մահ, այսպէս խայտառակ մահ... այն էլ այսպէս վաղաժամ... Միտք, քո արագութեամբ թռիր դէպ' իմ հայրենիք... և հաղորդիր իմ վերջին հրաժեշտը ծնողներիս, Սաթենիկիո և իմ ընկեր Լեոնին... Բայց ի՞նչ օգուտ ինձ քո արագութիւնը, երբ դու այդ անել անկարող ես... Ա՛խ, դուցէ հէնց այս դիշեր երազ կը տեսնեն... և մըտքերը կը մօտենան հեռաւոր տարածութիւններից, իսկ վաղն, առաւտաեան, արցունքներ... մտատանջ մտքեր... տիսրամած դէմքեր... և թափծալի սրտեր...: (Արշաւրին): Ա՛խ, իմ սիրելի Արշաւրի, այս ի՞նչ բան էր, որ եկաւ իմ գլուխն... Ո՞հ... (Լալիս է՝ հառաշելով): Արդեօք մահացնե վերքը... Տաքութիւնից դեռ լաւ չեմ զգում...

Արշաւիր. Ո՛չ, Տիգրան ջան, մահացու չէ. հոգս մի անէք, կը լաւանայ: (Սրբում է նրա արցունքները):

Վաղինակ. (Մի կողմ): Ճարահատեալ այդպէս պէտք

է ասել, ինչպէս հիւանդի, այնպէս և մեռնողի յօյոը ըը
կտրելու համար:

Ա.. Գիւղացի. (Մի կողմ): Դեռ արիւնը կտրէք, յետոյ
այդպէս ասէք:

Տիգրան. (Ազշաւրին): Այս, սիրո տուր, սիրո... Ա՛յս,
դուր չէին այնքան նախազգացումները... Ծնողներիս ացքը
լոյս. նրանց որդին մեծ մարդ դարձաւ... Կը փոշիանան
իմ մարմնի հիւլէները մոռացութեան և օտարութեան մէջ...
չի երեայ գերեզմանիս հետքն անդամ... Ո՞հ, գերեզմանս
չի ողոզվի արտասունքով..., և տխուր յիշատակներ չի ծնե-
ցնի իմ ազգականների և մտերիմների շրջանում... Խունկ չի
ծխվի նրա վրայ յաւիտեան... Ո՞հ, կորած եմ ընդմիշտ...
կորած յաւիտեան... Ո՞հ, երկինք, երկիր, աշխարհի տար-
րեր և դուք, դժոխային չար ոգիներ, խառնվէք իրար և
արդարութեան վրէժը լուծէք անարդարութեան դէմ...
Դուք, լեռների, ձորերի, ջրերի, ամպերի և օդի մէջ վլստնդ
ոգիներ, սասանեցրէք երկիրը ձեր ահեղ սարսափով... և
չարագործներին կենդանի-կենդանի դժոխսք իջեցրէք... Կը
տարածվի այս անարդ ոճարդործութեան բօթարեր լուրը...
և անունս աւանդութիւնների շարքը կ'անցնի... Թէև կը
լինեն մի քանի հետաքրքիրներ, որոնք գերեզմանս կը հե-
տախուզեն՝ անարդ չարագործութեան զոհի գերեզմանը
տեսնելու... սակայն մի քանի ժամանակ ևս և այդ էլ
կ'անցնի ու հնութեան փոշով կը ծածկվի... Այնուհետեւ չի
երեայ աշխարհի վրայ յիշատակիս հետքն անդամ... Յաւի-
տենական մահ... Մեռնում եմ, բայց, աւազ, ի՞նչ եմ թող-
նում այս աշխարհի վրայ, որպէս յաւէտ անմոռացութեան
առհաւատչեայ... Մահ, մահ և մահ... Սոսկալի՛ դրութիւն...
Մայրս կը ցնորվի և խելագարի նման գոնից դուռ կընկ-
նի... Ա՛յս... (Ցնցիլլով): Եւ... սակայն... այսպէս... շատե-

րըն են ընկնում... իրանց... ձգտումները... չիրագործած...
Ո՞հ, հայր և մայր, — իմ հարազատ ծնողներ... իմ վաղա-
թառամ Սաթենիկ... իմ սիրելի Լեռն... և դնւք... Արշա-
ւիր... Վաղ... մնաք... բար... (Մեռնում է):

Արշաւիր. (Զարհուրենով): Մեռաւ... (Հաց է լինում):
Ինձ այժմ ոչինչ չի մնում անելու, բայց միայն թաղման
կարգն իր կարգով կատարել և արեան վրէժը լուծել: Այս, ևս
կը լուծեմ: Թողն նրա անմեղ արիւնը յաւիտեան բողոքի իմ
դէմ, եթէ ես նրա վրէժը չը լուծեմ չարագործին բռնելով
և արդարագատութեանը յանձնելով, որ կամ կախաղան
բարձրանայ, և կամ հեռաւոր աքսորում, սառնամանիքների
երկրում, տաժանակիր աշխատանքների մէջ, մինչև մահ
հալ ու մաշ լինի: Եթէ խաղաղ կեանքը չը խրատեց նրան,
արդար պատիժը կը խրատի: (Ներս են մտնում քահանան
և Շողակաթը): Ուշացաք, Տէր-հայր. բանը բանից անցել
է: Հաղորդութեան չը հասաւ:


Քահանայ. Ես այստեղ չէի. մօտակայ գիւղն էի գը-
նացել, — մկրտութիւն կար: Իմացայ, թէ չէ իսկոյն շտապե-
ցի այստեղ: Ես շատ վշտացայ... Ափսոս, ափսոս, հազար
տփսոս...

Բ. Գիւղացի. (Մի կողմ): Մեռնելուց յետոյ միայն...

Քահանայ. Իսկ չարագործը, փախչելիս՝ բռնվել է և
բանտարկվել մեր տանուտերի ձեռքով:

Արշաւիր. Այդ շատ լաւ է եղել: Արդէն նա իր հացը
կերան:







ԼՈՅՆ ԵՆ ՏԵՍԵԼ ՆՈՅՆ ՀԵՊԻ ԱՐԵԿԻ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆԵՐԸ Դ հատ. զին է 50 կ.

ԳԻՒՆ Է 1 ՐՈՒԲԼԻ.

Դիմել հայ գրավաճառներին և հեղինակին՝ հետևեալ հասցէով.

Екатеринодаръ (Куб. обл.). Учителю Екатеринодарского арм.
2-хъ клас. училища, Хачатуру Бабаянцу.

ՀՀ Ազգային գրադարան



NL0321781

22751

